


ԷՋՄԻԱԾԻՆ



1967

ՌԵԺԶ
ԻԳ ՏԱՐԻ


Յուսոււար - Փէրրուար

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ա-Բ

1967



ՊԱ-7716

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Թուրքիոյ հայոց ամենապատիւ Տ. Շնորհի սրբազան պատրիարքին ուղղյալ Տ. Շահան և Տ. Խոսրով եպիսկոպոսների ձեռնադրութեան արքիւ	էջ 3
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը գեր. Տ. Գաբրիէլ եպս. Գազանձյանին Հեղկատանի և Հեռավոր Արևելի հայրապետական պատվիրակի փոխանորդ ճշանակելու արքիւ	5
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Ոստրի հայոց Ս. Փրկիչ եկեղեցւոյ յորանասունհինգամյակի արքիւ	7
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Փարիզի հայոց Աղատախանամ ընկերակցութեան յորանասունհինգամյակի արքիւ	9
Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենղյան տոների արքիւ Ամենայն Հայոց Մայրաքաղաքի Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նրավպիայի կայսր Նորին Վեհափառութեան Հայր Սեւակի Ա-ի միջև փոխանակված հեռագրերը	11
Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենղյան տոների արքիւ Ամենայն Հայոց Մայրաքաղաքի Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նրավպիայի կայսր Նորին Վեհափառութեան Հայր Սեւակի Ա-ի միջև փոխանակված հեռագրերը	12
Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենղյան տոների արքիւ Ամենայն Հայոց Մայրաքաղաքի Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նրավպիայի կայսր Նորին Վեհափառութեան Հայր Սեւակի Ա-ի միջև փոխանակված հեռագրերը	23
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելութիւնը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Միջինարեւելիկ սովետի նախագահ Բաղդատ Մուրադյանին Հայաստանում սովետական կարգերի հաստատման բառասունվեցերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորւթյունների միջև փոխանակված հեռագրերը	26
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ամանոր և Սուրբ Մենղյան	27
Խոհեր 1967 տարվա սեմին	29
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և Բարոզ հրաշափառ Մենղյան տոնի արքիւ Մայր Տաճարում	31
Եպիսկոպոսական ձեռնադրություն	35
Գեր. Տ. Շահան եպս. Սվանյան	38
Գեր. Տ. Խոսրով եպս. Էմիրզեյան	42
Գեր. Տ. Շահան և գեր. Տ. Խոսրով երապասկ եպիսկոպոսների ժամանումը Ստամբուլ	44
Ամանորը Հոգևոր ձեմարանի հարկի տակ	45
Պաշտոնական	49
Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆ— Բերդեհեմի այրի սուրբ մանկիկը	52
ՄԱՅՐ ԱՌՈՒՈՒՄ	54
Ողորդում ս. Ղազար վանքում	55
Լուսեր Հեռավոր Արևելի ազգային-եկեղեցական կյանքից	58
Հայաստանի գրողների հիւնդերորդ համագումարը	61
Մեծարանքի երեկո	63
Հանգիստ գեր. Տ. Վարդան արքեպս. Դասպարյանի	65
Վերապատվելի պրոֆ. Գրիգոր Խաչիկյանի մահը	67
Հանգիստ արժանապատիւ Տ. Իգնատիոս ավագ Բանան Քրիստյանի	69
ՄԱՅՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ	71
	73

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՉՄԻԱԾԻՆ

«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌԻ ԿՈՆԴԱԿԸ ԹՈՒՐՔԻՈ
ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ
ՈՒՂՂՅԱԼ Տ. ՇԱՀԱՆ ԵՎ Տ. ԽՈՍՐՈՎ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՑ ՏԵԱՌՆ
ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ
ԷԶՄԻԱՇՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ԵՒ
Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂԶՈՐՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Գոհութիւն և փառք Որդւոյն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Իր անչափելի ողորմութեամբը, պահպանիչն ու օգնականն է Իր իսկ հիմնած Հայաստանեայց Եկեղեցիին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, և այդ Սուրբ Հոգւոյ շնորհներով կը լուսաւորէ ու կ'արգասաւորէ մեր Եկեղեցւոյ սպասաւորներուն և հաւատացեալներուն հոգիները:

Այսպէս է որ Միաձնաէջ Մայր Տաճարի մէջ, Կիրակի, 13 նոյեմբերին, Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ Մենք արժանի եղանք՝ կանոնական ձեռնադրութեամբ և սրբալոյս Միտոնի օծմամբ, Եպիսկոպոսական կարգ շնորհել Ձեր Պատրիարքական Աթոռի միաբաններ՝ հոգեշնորհ Տ. Ծախան ծ. վարդապետ Սվաճեանին և հոգեշնորհ Տ. Խոսրով ծ. վարդապետ Էմիղէեանին, համաձայն Ձեր 24 Յունիս 1966 և 26 Հոկտեմբեր 1966 թուակիր միջնորդութեանց և 24 Յունիս 1966 թուակիր պատուարժան կրօնական ժողովիդ բարի վկայութեանց:

Մենք երջանիկ ենք, որ այս շնորհաբաշխութեամբ Ձեր պատմական Աթոռը օծտուեցաւ երկու երիտասարդ արժանատի եպիսկոպոսներով, որոնք իրենց հոգւոյ վառ հաւատքով, եռանդուն նուիրումով և անձնուրաց սիրով պատրաստ են աշխատելու և ծառայելու Ձեր Աթոռին ու Ձեր Եկեղեցիներուն պայծառութեան և Թուրքիոյ հայ հաւատացեալ ժողովուրդի կեանքի հոգևոր շինութեան համար Ձերոյ Ամենապատուութեան հովանիին ու իշխանութեան ներքև:

Մենք կը հաւատանք թէ նորապսակ Տ. Ծախան և Տ. Խոսրով սրբազան Եպիսկոպոսները իբրև Ձեր հաւատարիմ ու ծիր գործակիցները, միշտ Ձեր կողքին և Ձեզի հետ միասիրտ ու միակամ, իրենց լաւագոյնը պիտի ընծայաբերեն, որպէսզի Ձեր գլխաւորութեամբ սկիզբ առնէ եկեղեցաշէն ու աստուածահաճոյ գործունէութեան նոր շրջան մը Ձեր կրօնական համայնքներէն ներս:

Մեր հոգին լեցուն սուրբ ապրումներով և քաղցր յոյզերով, այս երջանիկ առիթով, Սուրբ Էջմիածնէն կը յղենք հայրական ողջոյն և օրհնութիւն Ձերոյ Ամենապատուութեան, Ձեր Եկեղեցիներուն, հոգևոր դասուն և համայն թրքահայ մեր հաւատացեալ զաւակներուն:

Թող բարին Աստուած միշտ անսասան ու ծաղկեալ պահէ Ձեր պատմական Աթոռը, միշտ շէն ու պայծառ իր Եկեղեցիներով ու ժողովուրդով:

Թող բարին Աստուած միշտ խաղաղութեան և շինարար վերելքի մէջ պահպանէ Ձեր պթոռանիստ տիրախնամ մեծ քաղաքը և Ձեր ամբողջ երկիրը, Թուրքիոյ հանրապետութիւնը:

Թող բարին Աստուած իր օրհնութիւնը տարածէ մեր ամբողջ Եկեղեցիին ու մեր համայն հաւատացեալ ժողովուրդին վրայ, իր կենարար շնորհները առատապէս բաշխելով ամէնուս, այժմ և յաիտեան:

«Բանն Քրիստոսի բնակեցէ ի ձեզ առատապէս ամենայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել գմիմեանս, սաղմոսիք և օրհնութեամբք և երգովք հոգևորօք և շնորհօք օրհնել ի սիրտս ձեր գԱստուած» (Կողոս. Գ. 16):

Ենորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, յաիտեան և յաիտենից: Ամէն:

Կարգ Սե Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ն նոյեմբերի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 607





**ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐ.
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԳԱԶԱՆԾՅԱՆԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱՆԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿԵԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԹԻՎ**

ԿԱԼԿԱԹԱՅԻ, ԲՈՄԲԷԻ, ՍԻԴՆԷԻ ԵՒ ՄԵԼԲՈՒՐՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ՀԱՄԱՅՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱԻԱՏԱՑԵԼՈՅ
ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂԶՈ՞ՅՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մեծ է Մեր սրտի մխիթարութիւնը ի տես քրիստոնէական սուրբ հաւատ-
քին, որով լուսատրուած ու ջերմացած են հոգիները մեր Եկեղեցւոյ զաւակ-
ներուն, որոնք կ'ապրին Հեռաւոր Արևելքի երկիրներուն մէջ, լատկապէս ի
Հնդկաստան և յԱստրալիա:

Այսօր Մենք յոյժ ուրախ ենք Ձեզի յղելու սոյն Մեր Կոնդակը, նախ բաշխե-
լու համար բոլորիդ աստուածային օրհնութիւն Փրկչի Իջման Սուրբ Սեղանէն
և աւետելու նաև թէ Ձեզի կ'առաքենք նորապսակ Տեր Գարեգին Եպիսկոպոս
Գազանճեան, իբրև փոխանորդ Հեռաւոր Արևելքի Հայրապետական Պատուի-
րակ Գերաշնորհ Տեր Հայկազուն Արքեպիսկոպոսի, որ Ձեզի պիտի բերէ Մեր
հայրական սիրոյ ողջոյնը և Մեր սրտէն բխած բարի մաղթանքները, Ձեր Եկե-
ղեցւոյ պայծառութեան, Ձեր կեանքի բարօրութեան ու արևշատութեան համար:

Գերաշնորհ Տ. Գարեգին Սրբազան մեր Եկեղեցւոյ նուիրեալ և եռանդուն
սպասաւորներէն մին է, որ Մեր կողմէն լիազօրուած, կուգայ Հեռաւոր Արևելք,
ի մասնաւորի աշխատելու Աստրալիոյ մէջ, այնտեղ հայ Եկեղեցիներու
կեանքն ու գործունէութիւնը ամրապնդելու և թեմական կազմակերպութիւն մը
ստեղծելու առաքելութեամբ:

Մեզի քաջ ծանոթ ըլլալով Ձեր Վարչութեան և Ձեր ժողովրդեան սիրոյ և հաւատարմութեան զգացումները հանդէպ մեր առաքելական Մայր Եկեղեցոյ և մեր լոյս հաւատքի կեդրոն Սուրբ Էջմիածնի, Սենք վստահ ենք թէ դուք բոլորդ քաջցրութեամբ պիտի ընդունիք Տ. Գարեգին Եպիսկոպոսը Ձեր հասակնի ծոցին մէջ և ամէն աջակցութիւն ցոյց պիտի տաք որպէսզի Նորին Սրբազնութեան առաքելութիւնը յաջողութեամբ պատկուի:

Թո՛ղ Աստուած անսասան պահէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Թո՛ղ Աստուած ամբողջ ու անխտով և խաղաղութեան մէջ պահպանէ մեր սիրեցեալ հարսգատ ժողովուրդը, ոգեշնչուած իր լոյս հաւատքով և միշտ գոտեպիկն իր հայկական հոգիով:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեաւ և երկրպագուս անուանդ Քում սրբոյ, պահեաւ ի խաղաղութիւն»:

Ընորիք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան: Ամէն:

Արարիկ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն հոկտեմբերի


1966 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԺՆ,

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ՀՄՐ. 604





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ
ՈՒՍՏՐԻ ՀԱՅՈՑ Ս. ՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑՈՒ
ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ,
Տ. ԹՈՐԳՈՄԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՈՒՍՏՐ ՔԱՂԱՔԻ
ՍՈՒՐԲ ՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑՈՒՅ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐԶՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱՅՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ
ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ հոգեկան ուրախութիւնը ունինք ողջունելու
75-րդ տարեդարձը Հայոց առաջին Եկեղեցիին Ամերիկայի հիւրընկալ հողին
վրայ:

Ուստի Եկեղեցիով, Նոր Աշխարհի մէջ ամուր կերպով հաստատուեցաւ
վէր Հայոց լոյս հաւատքին, և այդ սուրբ վէմին վրայ, և օրհնութեամբը Երա-
նաշնորհ Հայոց Հայրիկ՝ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսին Ամենայն Հայոց, անե-
ցաւ ու ծաղկեցաւ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին Միացեալ Նահանգաց
մէջ, պատուոյ դիրք և անուն շահելով քրիստոնէայ աշխարհին առջև:

Հայ Եկեղեցին մեր ամբողջ ափսոսքի տարածքին վրայ այսօր նախախնա-
մական, անփոխարինելի դեր կը կատարէ հոգևոր կեանքի շինութեան և ազ-
գային գոյատևման իմաստով: Այս ճշմարիտ է մանաւանդ Ամերիկայի մեր
ժողովուրդի կեանքին նկատմամբ, ուր ամէն նպաստատու պայմաններ կան
բնականոն և խաղաղ զարգացումին համար հայ համայնքներու եկեղեցական
և մշակութային գործունէութեան:

Քրիստոսակերտ Սուրբ Էջմիածնէն ճառագայթող սատուածային լոյսն ու օրհնութիւնը կը բաշխուին Մեր պանդուխտ զաւակներուն հայ Եկեղեցիներու սեղաններէն: Այդ լոյսով է որ հայ ժողովուրդը երբեք պիտի չ'կորսուի աշխարհի հեռու հորիզոններու տակ: Եւ այդ օրհնութեամբ է, որ ան պիտի մնայ յաւեր կենդանի իր նախնեաց հաւատքով և հայկական հոգիով:

Այսու Մեր գրով կ'օրհնենք Ոստրի Եկեղեցին և յիշատակը զայն կառուցող լուսաբնակ հիմնադիրներուն և բարերարներուն:

Կ'աղօթենք նաև, որ դուք, Ս. Փրկիչ Եկեղեցոյ՝ մեր օրերու ուխտապահ սպասաւորներդ, և դուք հաւատարմ անդամներդ Ոստրի Եկեղեցական Վարչութեան և հայ համայնքի, գօտեպիւղ Ձեր նախնեաց կրօնական ու հայկական ապրումներով, ընթանաք նոյն ճամբով, նոյն իդեալներով և նոյն հաւատարմութեամբ դէպի աղբիւրը մեր լոյս հաւատքին, դէպի Սուրբ Էջմիածին:

Թո՛ղ միշտ աճին ու ծաղկին հայ Եկեղեցիները ի Հայաստան և ի ափսոսաշխարհի:

Թո՛ղ անասան և միշտ լոյսի մէջ մնա Ձեր Եկեղեցին, Ձեր աղօթքի նոյրական Տունը:

Թո՛ղ Աստուած միշտ բարգաւաճ ու խաղաղ պահէ Ձեր մեծ երկիրը՝ Միացեալ Նահանգները Ամերիկայի, և միշտ բարօր ու երջանիկ անոր սատուածաւեր, բարեսիրտ ժողովուրդը:


Հօտ փոքրիկ «Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա» (Մարկ. Ե 37) և «Ա՛ն զաղաւարտն փրկութեան և զսուտն հոգւոյն, որ է Բանն Աստուծոյ» (Եփես. Զ. 17):

Շնորհք և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ՝ ձեզ այժմ և յաիտեան: Ամէն:

Աւագ Դե Ս.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 26-ն հոկտեմբերի
1968 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրաւանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 808





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ
ՓԱՐԻՋԻ ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ԲԱՐԵՍԷՐ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ ԱՆԴԱՄՈՑ ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ
ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայ սփիւռքի տարածքի վրայ մեր ազգի համար պատուաբեր տեղ մը կը գրաւէ Ֆրանսայի մայրաքաղաքի Աղքատախնամ ընկերակցութիւնը, որ իր գործունէութեան եօթանասունհինգ տարին բոլորեց այս տարի:

Փարիզ հիմնուած սոյն կազմակերպութիւնը, հայ քրիստոնէական գութի և մարդասիրական ազնիւ զգացումներու մէկ վճիտ արտայայտութիւնն է, որով կրնան հպարտ ըլլալ Ֆրանսահայութիւնը և մանաւանդ ընկերակցութեան հիմնադիրներն ու անոր արդի վարչութեան յարգարժան անդամները, գլխաւորութեամբ բարեսիրտ և ժրաջան նախագահ Տիար դոկտ. Վահրամ Զիլինգիրեանի:

Բազում տարիներէ ի վեր այն ընկերակցութիւնը բարիք և մխիթարութիւն կը տարածէ իր շուրջ, իր մշտական խնամքի տակ ունենալով՝ Ժընևի Նանսենեան գրասենեակի օժանդակութեամբ հիմնուած Ֆրանսայի երեք հայ ծերանոցները՝ Մոնտրենսիի, Անտիի և Սէն Ռաֆայէլի, ուր շուրջ երեք հարիւր հայ տարեցներ կը խնամուին լաազոյն պայմաններու մէջ, նիթական մեծահոգի աջակցութեամբը ֆրանսական պետական իշխանութիւններուն և հայ համայնքներու անդամներուն:

Բարեսիրական այս կազմակերպութիւնը և իր բազմամեայ վաստակը արժանի են յիշատակութեան և բոլորիս արդար գնահատանքին:


Որով, ընդառաջելով Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Սերովքէ Արքեպիսկոպոսի միջնորդութեան, այն Մեր Կոնդակով Կ'ողջունենք Եօթանասուն և հինգամեայ հոբելեանը Փարիզի Աղքատախնամ ընկերակցութեան և Կ'օրհնենք անոր օգտաշատ գործունէութիւնը: Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Մեր օրհնութիւնը կը յենք ընկերակցութեան վարչութեան անձնուէր նախագահին ու անդամներուն, ինչպէս և բոլոր ազնուասիրտ նուիրատուներուն, ջերմագին աղօթքով որ Աստուած զանոնք բոլորը պահէ պահպանէ արևշատ երկար տարիներ իր պահապան հովանիին ներքև:


«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե. 8):
Ամէն:

Կալ Չֆե Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 18-ն հոկտեմբերի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄԻ. 600





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ
ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

Ա Դ Ի Ս-Ա Բ Ե Բ Ա

Փառք մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսին, որ իր հրաշափառ ծննդամբ ու
աստվածահայտնությամբ աշխարհին և մարդկության կբաշխե իր կենարար
ու փրկարար շնորհները:

Հայրական սիրով և խոր հարգանքով կողջունենք Ձեզ և կշնորհավորենք
Ծննդյան և Աստվածահայտնության սուրբ հանդիսություններու առիթով և
կաղոթենք հայոց բազմադարյան Ս. Էջմիածնի Սեդակի առջև՝ առողջության
և փառավոր կյանքին համար Ձերդ Կայսերական Վեհափառության և Ձեր
աստվածատեր գործոց հաջողության, Ձեր ազնիվ երկրի ծաղկման և աստվա-
ծապաշտ եթովպական ժողովրդի բարօրության և երջանկության համար:

Աստվածային օրհնություն և շնորհք և խաղաղություն «Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի եղիցին ընդ հոգւոյն ձերում, ամէն»:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ամենաանկեղծ շնորհակալություն Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր բարի
գանկությունների և ազնիվ պատգամի համար, որը խորապես երախտապարտ
է թողնում Սեզ:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ

Կայսր Եթովպիայի

Ա Ս Մ Ա Ր Ա



ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՒ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻԶԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՂ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և Համայն Արևելքի Պատրիարք Նորին
Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին
Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՈՒԿԵՆ Ա-ԻՆ (Կերալա),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵԹԵՄ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ի Ն (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիկայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. Մ Ա Յ Ք Լ Ռ Ա Մ Զ Ի Ի Ն
(Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
Խ Ր Ի Ս Ո Ս Տ Ո Մ Ո Ս Ի Ն (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
Համայն Ալբանիայի և Տիրանի և Տուրեստի Միտրոպոլիտ Նորին
Սրբություն Դ Ա Մ Ի Ա Ն Ո Ս Ի Ն (Տիրանա),
Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարշավա),
Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
Դ Ո Ր Ո Ֆ Ե Յ Ի Ն (Պրագա),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),
Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
Նորին Ամենապատվություն Կարդինալ
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
Լ Ո Ր Ի Ս Տ Ո Ն Լ Ե Վ Ի Ն Գ Ս Տ Ո Ն Ս Ք Ե Յ Ֆ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն Գ Ո Ւ Ս Տ Ա Վ Տ Ո Ւ Ր Ս Ի Ն (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն Յ Ա Ն Կ Ի Յ Վ Ի Տ Ի Ն (Տալլին),
Միջին Արևելքի Հայ Ավետարանական Եկեղեցիների միության նախագահ
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն
(Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության Կուստոդ
Հ. Լ Ի Ն Ո Ւ Ս Կ Ո Պ Պ Ի Ե Լ Լ Ի Ի Ն (Երուսաղեմ),
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ
Գերարծանապատիվ Հայր Ռ Ո Ւ Տ Ե Ն Մ Յ Ո Ւ Լ Լ Ե Ր Ի Ն
(Նյու-Յորք),
Մոնակոյի Եպիսկոպոս Գերազնորհ Շ Ա Ռ Լ Ռ Յ Ո Ւ Պ Ի Ն (Մոնակո),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերհարգելի Հայր
Հ Մ Ա Յ Ա Կ Վարդապետ Կ Ե Տ Ի Կ Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերապալծառ Հայր
Մ Ե Ս Ր Ո Պ Վարդապետ Հ Ա Պ Ո Զ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա):

Ս. Ծննդյան և Աստվածահայտնության լուսապալծառ տոները Մեզ ընծա-
յում են երջանիկ պատեհությունը Ձերո՞ Սրբության ներկայացնելու Հայաս-
տանյայց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր շնորհավորություններն ու
բարի իղձերը՝ Ձեր սուրբ եկեղեցու հաստատության և Ձեր հավատացյալ հոտի
հոգևոր կյանքի բարգավաճման համար, Աստծու օրհնության ներքո:

Թող Ս. Ծննդյան փրկարար շնորհները ճշմարտապես լուսավորեն բոլոր
մարդկանց և ժողովուրդների մտածումներն ու գործերը, որպեսզի երկրի վրա
լինի առավել լույս, առավել սեր և առավել խաղաղություն:

Քաղցր է Մեզ համար մաղթել Ձերդ Սրբության քաջատոկչություն և ամենատարբեր ներշնչումներ՝ շարունակելու համար Ձեր մեծ, հոգևոր առաքելությունը:

Հարգալիք սիրով և ողջույններով ի Քրիստոս Ձեր Եղբայր՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Մինչ տոնում ենք Աստուծո մարդացյալ Որդու և նրա հայտնությունը աշխարհին, Մենք Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Ձերդ Ս. Օծության, Ձեր այն աղոթքների և բարի ցանկությունների համար, որը հղել էք մեզ: Մենք նույնպես միացնում ենք մեր աղոթքները Ձեր աղոթքներին, մարդկանց միջև ճշմարիտ խաղաղության համար: Աղոթում ենք նաև մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին օրհնել Ձերդ Սրբությանը և Ձեր ամբողջ հավատացյալ հոտը, հոգևոր բարգավաճման և ուրախության մեջ:

Հղում ենք Ձեզ Մեր եղբայրական զգացումներն և սերը ի Քրիստոս:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ.

ՎԱՏԻԿԱՆ

Եկեղեցու հավատացյալ ժողովրդի հետ, մենք էլ խոնարհաբար գնանք դեպի Բեթղեհեմ, ուր հայտնվեց աստվածային Մարդեղության Խորհուրդը՝ երկրպագելու մեր Փրկչին, որ աշխարհ եկավ մարդկային կերպարանքի ներքո:

Ոսկու, կնդրուկի և զմուտսի փոխարեն մենք նրան այսօր մատուցենք մեր սրտի երկրպագությունը, մեր սերը՝ միմյանց նկատմամբ, և մեր անկեղծ իղձերը՝ միության: Այդ ձևով մենք կզգանք Նրա ներկայությունը մեր մեջ, ներկայություն, որն օգնում է մեզ մեր տկարությունների մեջ և զորացնում մեր մտադրությունները:

Այս բարի ցանկություններով ու ամբողջ սրտով ողջագուրում ենք Ձեր սիրեցյալ Սրբությունը այս մեծ և սուրբ տոնի առիթով և աղոթում, որ մարդացյալ Փրկիչը պարգևի առատորեն իր օրհնություններն ու շնորհները Ձեր Սուրբ Եկեղեցուն, Ձերդ Սրբությանը և Մեզ այնքան սիրելի Ձեր հավատացյալ ժողովրդին:

Մեր Տիրոջ օրհնությամբ լի նոր և խաղաղ տարի Ձեզ և համայն աշխարհին:

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

Հոգեկան խորունկ ուրախությամբ և եղբայրական սիրով ի Քրիստոս ողջունում ենք Ձերդ Սրբությանը՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծննդյան մեծ տոնի առիթով:

Աղոթում ենք առ Աստված՝ պարգևելու Ձերդ Սրբությանը առողջություն և բարօրություն, ինչպես և երկնային օրհնություն Ձեր Հովվապետական ջանքերին՝ վասն պայծառության Ձեր Սուրբ Եկեղեցվո:

Թող Տերը խաղաղություն տա համայն մարդոց և երկնային իր օգնությունը բաշխի երկրային մեր բոլոր գործերին:

Թող նոր տարին լինի խաղաղության, ընդհանուր բարօրության տարի:
Զերդ Սրբության ի Քրիստոս նվիրյալ՝

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսաստանի

Մ Ո Ս Կ Վ Ա

Զերմ երախտագիտությամբ ստացել ենք Ս. Ծննդյան առթիվ Ձեր բարեմաղթությունները: Աղոթում ենք մարդացյալ Փրկչին՝ աշխարհին շնորհելու խաղաղություն և ժողովուրդներին՝ համերաշխություն:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ

Հույն Օրթոդոքս Պատրիարք Երուսաղեմի

Ե Ր ՈՒՍԱՂԵՄ

Նոր տարվա և Ս. Ծննդյան փառահեղ տոների առթիվ մեր աղոթքներով միանում ենք Ս. Կույսի և բոլոր սրբերի բարեխոսությանը, որպեսզի Ս. Հոգին մեզ առաջնորդի և զորացնի սիրո, համերաշխության և խաղաղության մեջ:

Ծնորհակալություն՝ Զերդ Սրբության հղած եղբայրական շնորհավորանքների և մաղթանքների համար: Ի սրտե Մենք ևս մաղթում ենք Ձեզ, Ձեր Սուրբ Եկեղեցուն, նրա բարեպաշտ միաբաններին և Ձեր հավատացյալ ժողովրդին երջանկություն, բարօրություն և խաղաղություն:

ԹԵՈՌՈՍԻՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

Երախտապարտ ենք և զգացված Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր հղած շնորհավորության համար:

Աշխարհում, երբ բոլոր չար ուժերը աշխատում են խափանելու բարին, «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, և ի մարդիկ հաճութիւն» պատգամը մեզ նոր ուժ և վստահություն է ներշնչում դեպի Տեր Հիսուս Քրիստոսը:

Աղոթում ենք, որ մարդացյալն Աստված շարունակի ոգևորել և պաշտպան կանգնել մեր բոլոր գործերում՝ Իր անվան ու փառքի համար:

ԲԱՍԻԼԻՈՍ

Պատրիարք Եթովպական Եկեղեցու

Ա. Դ. Ի. Ս. Ա. Բ. Ե. Ա.

«Ծնվում է Քրիստոսը, փառաբանեցե՛ք Նրան,
Աշխարհ է գալիս Քրիստոսը, գովաբանեցե՛ք Նրան,
Երկի՛ր, գովե՛րգի՛ր Նրան,
Աշխարհի՛ ժողովուրդներ, ցնծությամբ փառավորեցե՛ք Նրան,
Զի՛ Նա փառքով է փառավորյալ»:

Զերդ Սրբություն,

Ութերորդ դարի սկզբում ապրած Ս. Հովհաննես Դամասկացու՝ Ս. Ծննդյան տոնին նվիրված տաղի այս առաջին բառով է, որ երջանիկ եմ գրելու Ձեզ, Դամասկոսից իսկ, Տիրոջ ծննդյան առթիվ Ձեզ հետ միասին ուրախանա-

լու և Նոր տարվա ու Ս. Ծննդյան իմ ամենաշերտ բարեմաղթությունները հայտնելու Ձեզ այդ կապակցությամբ:

Թող «Խաղաղության Իշխանը», որ մեզ համար ուզեց մարդանալ և, բացի մեղքից, մեզ հետ բաժանել մեր մարդկային բնությունը, աշխարհին շնորհի քրիստոնեական խաղաղություն, սիրո և արդարության մեջ, իր շնորհներով թող լիացնի Ձերդ Սրբությունը, և բոլոր նրանց, ովքեր վստահված են Ձեզ: Ձերդ Սրբությանը հույժ նվիրյալ եղբայր՝

ՄԱՔՍԻՄՈՍ Դ.

Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի, Կարդիանալ Ս. Եկեղեցու

ԴԱՄԱՍԿՈՍ

Աստված Իր Որդուն ուղարկեց մեզ ոչ թե աշխարհի դատաստանը տեսնելու, այլ փրկելու աշխարհը:

Քրիստոսի ուսմունքը բարձրացնում է մարդուն մինչև աստվածայնության կերպարը, սերմանում սեր և խաղաղություն մարդկանց ու ժողովուրդների միջև, ժխտում ամենայն բռնություն և պատերազմ: Ժամանակակից քաղաքակրթությունը իր ծագումով և զարգացմամբ պարտական է քրիստոնեությանը:

Ողորմյա մեզ, Տեր, ողորմյա, ի մի հավաքիր բոլորիս, լուսավորիր մեր միտքը և աստվածային ուսմունքով, խաղաղություն տուր աշխարհին և օրհնիր մեր ուղին դեպի Բեզ տանող:

Քրիստոս ծնավ և հայտնվեցավ:

Ծնորհավոր Նոր տարի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԵՓՐԵՄ Բ.

Կաթողիկոս-Պատրիարք Համայն Վրաստանի

ԹԲԻԼԻՍԻ

Մոտենում է Ծննդյան ուրախալի տոնը, երբ քրիստոնյա հավատացյալները ամբողջ աշխարհում համախմբվում են գոհություն մատուցելու Աստուծո իրենց Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մարդեղության համար:

«Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ,
եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ,
լի շնորհօք եւ ճշմարտութեամբ»:

(Հովհ. Ա., 14):

Խորին երախտագիտությամբ հիշում ենք մեր Ամենակարող Աստուծուն, որն այնպես հրաշալիորեն ստեղծեց մարդուն իր պատկերով, և ավելի հրաշալիորեն վերականգնեց նրան: Աստուծո հավիտենական Որդին ապրելով մեր մեջ, բաժանեց մեր մարդկային բնությունը, առանց մեղք գործելու: Նա մահավեց մեզ, որպեսզի մենք իր միջոցով հաղորդակից լինենք աստվածային բնությանը:

«Քանզի գիտէք զՇնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն ձեր աղքատացաւ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծաւքեք»:

(Բ. Կորնթ. Ը, 9):

Այս տոնի առթիվ մենք ողջունում ենք Ձեզ մարդացյալ Քրիստոսի անու-
նով: Վստահեցնում ենք Ձեզ, որ աղոթում ենք ամեն օր բոլոր եկեղեցիների
համար, և առանձնապես աղոթում Ձերդ Նորին Սրբություն, Ձեր միաբանների
քարոքության և Ձեր հավատացյալ ժողովրդի համար:

Եղբայրական սիրով և ողջուններով
Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՅՔԼ ՌԵՄՁԻ՝

Արքեպիսկոպոս Քենտրբերիի, Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ
Համայն Անգլիայի

Լ Ո Ն Դ Ո Ն

Երկնային հրեշտակների երգը Բեթղեհեմի հովիվներին «Ձի ծնաւ ձեզ
այսօր Փրկիչ որ է օծեալ Տէր» և ավետիսը «Փառք ի բարձունս Աստուծոյ, յեր-
կիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» հնչում են այսօր աշխարհի բոլոր
քրիստոնյա եկեղեցիների մէջ և ուրախությամբ լցնում են բոլոր հավատացյալ-
ների հոգիները:

Այս մեծ ուրախությամբ մեր հոգիների մէջ լուսավորվում է մեծ հույսը, թե
Աստված, որ Իր անսահման սերը ցույց տվեց մարդկային աշխարհին, Իր
Միածին Որդին ողորկելով ի փրկություն ազգի մարդկան, պիտի իջեցնի Իր
շնորհները ժողովուրդների ղեկավարների գիտակցության մէջ, որպէսզի լու-
սավորի նրանց և ճանապարհը ցույց տա խաղաղ ու երջանիկ կյանքի՝ աշխար-
հի վրա:

Այս խոհերով ցանկանում ենք Ձերդ Սրբության, որպէսզի Սուրբ Ծննդյան
տոները անցկացնեք կատարյալ առողջությամբ և հոգևոր բարխություններով
Ձեր եկեղեցու հոգևոր հայրերի, քահանաների և հավատացյալների ծոցում:
Մաղթում ենք նաև, որ Նոր տարին եկեղեցիների և համայն մարդկության
համար լինի խաղաղության տարի, եղբայրության և քարոքության տարի:

Մնամք աղոթող Ձերդ Սրբության արևշատության համար, Եղբայրական
սիրով ողջագործումով՝

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

Բ Ո Ւ Խ Ա Ր Ե Ս Տ

Քրիստոսի հրաշափառ ծննդյան ավետիսով ոգեշնչված, ծունկի եկած
Հիսուսի Մտորի առջև, Մենք ջերմեռանդ կերպով աղոթում ենք Ձերդ աստ-
վածաւեր Սրբության՝ Ձեր Սուրբ կեղեցվո, հոգևոր դասի և քրիստոսաւեր ժո-
ղովրդի համար, և աղերսում, որ Տէրը պարգևի Ձեզ երջանկություն և քարո-
քություն նոր տարում:

Սիրով ողջագործվում ենք Ձեզ, սրտագին ողջունում Ձեզ Սուրբ Սինդի և
անձամբ Սեր կողմից, մնալով Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս:

ԿԻՐԻԼ

Պատրիարք Բուլղարիայի

Ս Ո Ֆ Ի Ա

Սեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդյան և Ամանորի առիթով
կհղենք Ձերդ Սրբության, Հայ եկեղեցու հոգևոր դասին և համայն հավատաց-

յալ ժողովրդին մեր սիրո ողջունները, ջերմ շնորհավորանքները և սրտագին բարեմաղթությունները:

Թող սերն ու խաղաղությունը տիրեն մարդկանց և ժողովուրդների միջև և թող հաճություն լինի մարդկային սրտերի մեջ:

Հանձնվելով Ձերդ Սրբության աղոթքներին, մնամ եղբայրական սիրով ի Բր'խտոս՝

ՀԵՐՄԱՆ

Պատրիարք Համայն Սեբեիայի

ԲԵԼԳՐԱԴ

Քրիստոսի սուրբ ծննդյան տոնի ուրախ առիթով կրկնում ենք հիշատակների ավետած խաղաղության և համերաշխության պատգամը՝ սրտագին աղոթելով, որ մարդացյալ Փրկիչը պարզևի Ձեզ քաջատողջություն՝ կատարելու իր սուրբ կամքը և հովվելու Ձեր Հայրապետական խնամքին հանձնված իր հոտը, իր անունով, իր փառքին համար:

«Եւ Բանն մարմին եղէ», եւ բնակեաց ի մեզ»: Ողջունում ենք ջերմորեն Ձերդ սիրեցյալ Սրբությունը և մնում ի Քրիստոս եղբայր՝

ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ

Արքեպիսկոպոս Աթենքի և Համայն Հունաստանի

ԱԹԵՆՔ

Քրիստոսի ծննդյան այս սրբազան օրերին, ներշնչված Ավետարանի մեկնություններով, մենք դիմում ենք Ձերդ Սրբության տոնական սրտագին շնորհավորանքներով:

Թող Բեթղեհեմի Մանուկը պահի ու պահպանի Ձերդ Սրբությունը, Ձեր հոգևոր դասին ու հավատացյալ հոտին, ինչպես և Ձեր Եկեղեցին, և հաջողությամբ իրականացնի Ձեր բոլոր մտահոգումները:

Թող 1967 թվականը լինի օրհնյալ տարի, խաղաղության ու ստեղծարար աշխատանքի տարի ամբողջ աշխարհում:

Ձեզ եղբայր ի Քրիստոս՝

ՍՏԵՖԱՆ

Վարչապալի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ

ՎԱՐՇԱՎԱ

Ողջուններ Քրիստոսի Սուրբ Ծննդյան առթիվ: Երախտագիտությամբ և սիրով ողջունում ենք Ծնունդն ու Աստվածհայտնությունը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և շնորհակալ ենք Աստծուց, որ իր անսպառ բարությանը ուղարկեց իր Միածնին աշխարհ, որպեսզի նախահոր անեծքից փրկի մեզ: Մեծ սիրով հղում ենք Ձերդ Սրբության-այս տոնական գրությունը, որպեսզի շնորհավորենք սուրբ տոնը և ամբողջ հոգով մաղթենք, որ Բեթղեհեմում մեր փրկության համար ծնված Տերն ու Աստվածը պահի Ձերդ Սրբությանը առողջ և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին, աստվածահաճո գործերի հաջողությամբ պսակված:

Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ

Արքեպիսկոպոս Կիպրոսի

ՆԻԿՈՋԻԱ



Խորին շնորհակալությամբ ընդունեցանք Վեհափառ Տեղությանդ բարեմաղթությունները Ս. Ծննդյան, Նոր Տարվան և Աստվածահայտնության առթիվ:

Սույն ուրախալի առթիվ, մեր արտագին մաղթանքներուն կմիանան մեր աղոթքները առ Ամենաբարին Աստված, խնդրելով որ հաճի շնորհել Վեհափառ Տեղությանդ երկնային պարգևներու առատությունը, բազմաթիվ հոգևոր և ժամանակավոր մխիթարություններ և կատարյալ առողջություն:

Մարդկությունը ամեն ջանք կթափե, որպեսզի աշխարհիս խաղաղությունը չվրդովվի: Առ այդ, սպառազինումը կնկատվի ազդու միջոցներեն մեկը: Եվ այս կերպով անհամար գումարներ, որոնք մարդիկը երջանկացնելու պիտի ծառայեին, կմսխվին պատերազմական միջոցներու համար, որոնք աշխարհը թշվառության կմատնեն և սարսափի տակ կպահեն:

Տայր Աստված որ ժողովուրդներու վարիչները ըմբռնեին, թե Ս. Ծնունդով է որ խաղաղությունը ավետված է աշխարհի, և Աստվածահայտնությամբ է որ երկրի երեսը կրնա տարածվի:

Մենք կմաղթենք և կաղոթենք, որ Ս. Էջմիածնի հոգևոր առաքելությունը ունենա իր փրկարար ազդեցությունը մեր սիրելի Հայրենիքին վրա, ապահովելու համար անոր՝ խաղաղություն, երջանկություն, հառաջադիմություն և հարստ և վերելք:

Այս իղձերով և մաղթանքներով կողջունենք սիրով Էջմիածնա Միաբանությունը և բարի հավատացյալները, հուսալով որ մեզի համար չուշանա կարելիությունը նվիրվելու մեր Հայրենիքին կրոնական, քարոյական և մշակութային վերելքին:

Մնամք եղբայրական սիրով ի Քրիստոս և հարգանք՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱԹԱՆՅԱՆ

Պատրիարք Կաթողիկե Հայոց

Բ Ե Յ Ր Ո Ւ Թ



Պատրաստվում ենք տոնել անսահման սերը Աստուծո, որ իր խորհրդավոր խոնարհությամբ, սիրեց աշխարհը՝ մեզ իր Որդին ուղարկելու աստիճան, որպեսզի մենք փրկվենք Նրա միջոցով:

Բոլոր դարերից առաջ ծնած Բանն Աստված ուզեց լինել, մեզ համար, Նորածին մի փոքր մանուկ, որպեսզի մեզ հաշտեցնի իր Հոր հետ, և մարդկանց բերի այն ճշմարիտ խաղաղությունը, որը Ինք միայն կարող է տալ:

Այս տոնախմբությունը պատեհություն կտա ինձ, Ձերդ Սրբության մատուցանել իմ լավագույն մաղթանքները և Տիրոջ մոտ իմ աղոթքների հավատարմեքը, որպեսզի Ան մեզ բոլորիս տա հնարավորություն հավատարմորեն ի կատար ածելու իր մեզ վստահած խաղաղության և հաշտության պաշտոնը:

Հաճեցեք ընդունել, Ձերդ Սրբություն, ի Տեր Հիսուս Քրիստոս մեր եղբայրական սիրո և հարգանքի զգացումների արտահայտությունները:

ԿԱՐՈՒԻՆԱԼ ԲԵԱ

Վ Ա Տ Ի Կ Ա Ն



Քրիստոնեական փառավոր և հանդիսավոր տոնի առթիվ հաճեցեք ընդունել մեր եղբայրական մաղթանքները Ձերդ Սրբության երջանկության, երկար կյանքի, արևշատության և Սուրբ Եկեղեցու խաղաղության և բարօրության:

ԿԻՐՈՒԻՆԱԼ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Վ Ա Տ Ի Կ Ա Ն



Թող մեր Փրկչի լույսը շողա ամբողջ տարին Ձեր եկեղեցու մեջ այժմ և միշտ:

Բ Լ Ե Յ Կ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի
Ընդհանուր քարտուղար

Ժ Ն Ե Վ



Այսօր, երբ տոնում ենք մեր Տիրոջ ա․ ծնունդը, որով փրկություն շնորհվեց աշխարհի բոլոր մարդկանց՝ «եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ», սիրով և ուրախությամբ ողջունում ենք Ձերդ Սրբությանը:

Սենք ժառանգորդներն ենք Աստուծո՝ Քրիստոսով և Ս. Հոգու որդեգրությանը: Այս է այն վստահությունը, որ մենք ազատվել ենք մեր հին հոգու կապանքներից և դարձել նոր արարած:

Աստծու Սուրբ Հոգով առաջնորդված, եկեղեցու ներսում մենք ունենք այն անհրաժեշտ ուժը, որը մեզ հեռու է պահում աշխարհի բոլոր դժվարություններից, միացնում մեզ միմյանց՝ երկնային խաղաղության մեջ:

Խնդրում ենք Ձերդ Ս. Օծությանը միացնելու Ձեր աղոթքները մեր աղոթքներից, որպեսզի Մարդացյալ Բանի ծնունդը, որ տոնում ենք, մեզ է՛լ ավելի մոտեցնի միմյանց՝ հասնելու այն միության, որը կամենում է Նա մեզ համար, և որը միայն Նա կարող է շնորհել մեզ:

Բարի մաղթանքներով աղոթում ենք Ձերդ Ս. Օծությանը, Ձեր Մեծ Եկեղեցու և ժողովրդի բարօրության համար:

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՅ

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

Ն Յ ՈՒՅ ՈՐ Զ



Աստծո ողորմությամբ նորից արժանացանք աշխարհի Իշխանի հրաշափառ ծննդյանը: Աղերսող ենք Ամենակալին՝ պարգևելու մեզ կարողություն, Լույս և օրհնություն՝ կատարելու մեր սրբազան առաքելությունը: Ամենեղծորեն հիշելով Ձեզ, հղում են իմ ամենալավ բարեմաղթությունները Քրիստոսի ծննդյան և Նոր տարվա առիթով:

Սիրով ի Քրիստոս՝

ԴՈԿՏ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿ

Պատրիարք Չեխոսլովակյան Եկեղեցու

Պ Ր Ա, Գ, Ա



Վեհափառ Տեր,

Տարվան վերջավորության, ինչպես նաև Ս. Ծնունդի տոնակատարությանը առթիվ երևակայությունս կերթա տարի մը դեպի առաջ՝ Մայր Հայրենիք այցելությանն անմոռանալի փորձառության: Ուխտագնացություն մըն էր, Հայրենի հողին վրա ոտք կոխել ու խմել անոր կենարար օդն ու ջուրը, կանգ առնել Իջման Սեղանի առջև ու ներշնչվիլ անկե, թանկարժեք ու եզակի հոգեկան փորձառություն մըն էր: Հոն է հայ քրիստոնեության օրրանն ու անկե կթխի պատմական կենսաաղբյուրը Հայ Եկեղեցիին և հայ հոգևոր շարժումին: Մեր ազգը և մեր եկեղեցիները որչափ պետք ունին վերստին մկրտվելու ու կենսավորվելու Էջմիածնի հոգիեն: Երախտապարտ և շնորհակալ ենք որ Ձեր Վեհափառությունը ինձի առիթը ընծայեց կատարելու այս հիշատակելի ուխ-

տագնացությունը՝ Ձեր գաճախության տասնամյակի և Մեծ Եղեռնի Հիս-
նամյակին ձոնված հուշարձանի բացման առթիվ:

Տոնական այս օրերում, կշնորհավորեմ Նոր Տարին և Ս. Ծնունդը, կմաղ-
թեմ արևշատություն և Ս. Հոգվույն առատ օրհնությունը՝ Ձեր, Հայ Եկեղեցվո և
հայրենիքի հանդեպ ստանձնած վեճի հոգևոր պարտավորությանց մեջ: Թող
հրեշտակներու պատգամը՝ երկինքի բարձրության մեջ Աստուծո փառքը,
երկրի վրա խաղաղությունը և մարդոց մեջ հաճությունը մեզ լուսավորե ու
առաջնորդե Հիսուս Քրիստոսի ծառայության մեջ:

Եղբայրական հարգանք՝

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ Փ. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Նախագահ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական
Եկեղեցիների Միության

ԲԵՅՐՈՒԹ



Ձերդ Սրբություն,

Այս Նոր տարում ես չեմ կարող իմ մտքից հեռացնել տասնութ ամիսներ
առաջ դեպի Ս. Էջմիածին կատարած իմ ուղևորության անմոռանալի հիշա-
տակը: Աղոթում եմ Աստծուն, որ օրհնի Ձերդ Սրբությանը, տիրամորը և Ս.
Էջմիածնի բոլոր եպիսկոպոսներին ու քահանաներին, ինչպես նաև՝ Հայաս-
տանի համայն քրիստոնյաներին:

Ծոռով Ձերդ Սրբությունը կատանա մի ամսագիր, որի մեջ Նա կգտնի
«Սուրբ Էջմիածնի մեծ օրերը» խորագիրը կրող իմ մեկ հոդվածը:

Ե՛րբ, արդյոք, կունենանք Մոնակոյում Ձերդ Սրբությունն ընդունելու հա-
նույքը: Տեղի Իշխանությունը պատրաստ է Ձեզ: Որքան շուտ, այնքան լավ:

Սպասելով այդ օրհնաբեր օրվան, խնդրում եմ Ձերդ Սրբության օրհնու-
թյունը և մնում եմ, ավելի քան երբևէ,

Ձերդ Սրբության խոնարհ և նվիրված ծառան՝

ՇԱՌԱ ՌՅՈՒՊ

Եպիսկոպոս Մոնակոյի

ՄՈՆԱԿՈ



Վեհափառ Տեր,

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»:

Երկնային գորաց այս ավետաբեր երգով կուգամ շնորհավորելու Վեհա-
փառ Տերությանդ Փրկչին Ս. Ծնունդը և վերահաս Ամանորը:

Սրտաբուխ մաղթանքս է, որ Նորածին Փրկիչը հաճի շնորհել Ձեզի արև-
շատություն, շարունակելու դեռ շատ երկար տարիներ Ձեր արդյունավոր գոր-
ծունեությունը, նվիրված բացառապես Հայ ժողովուրդի հոգևոր և մշակույթի
վերելքին, թե վերածնող Հայրենիքի սահմանին և թե ի Սփյուռս ցրված մեր
ժողովուրդի գանգվածներու մեջ: Անցյալին ձեռք բերված հաջողությունները,
երաշխիք եմ ապագային մեջ, առավելագույն բեղուն վաստակի մը:

Հարգալից ողջունիվ և կցորդությամբ աղոթից՝

ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈԶՅԱՆ

Արքեպ. և Ընդհ. աքթաֆայր

Մխիթարյան միաբանության

ՎԻԵՆՆԱ



Վեհափառ Տեր,

Հիսուսի հրաշափառ ծննդյան և Հայտնության սուրբ տոներու, ինչպես
նաև մերձավոր Ամանորի շնորհաբեր առիթով, կուգամ հանուն բովանդակ
Միաբանությանս, Ձերդ Վեհափառության մատուցանել մեր ամենախորին
հարգանքներուն հետ, անկեղծ շնորհավորությունները, որոնք մասնավոր ջեր-
մություն կզգենուն բոլորիս խոնարհ ու եռանդագին աղոթքներով:

Թող Նորածին Արքան, Բեթղեհեմի իր պաշտելի մսուրեն մինչև Ս. Էջ-
միածին տարածե իր բազուկները հզոր, և սիոն իր սուրբ հրեշտակներուն

թևերով, խաղաղությունը ցանկալի, մինչև աշխարհի հեռավոր ծայրերը, որպեսզի Հայտնության անշեջ լույսը, փառքն ըլլա բոլոր ժողովուրդներուն, և մխիթարություն մաս մեր սիրելի Հայ Ազգին, Արարատեն մինչև հեռավոր Ամերիկաները:

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ

Ընդհ. աքաբայր Մխիթարյան միբանության

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԾԵՅԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՔԻՄՋԱԴԻՆ,
ՄՈՒՖՏԻ ՀՈՒՍՄԱԴԻՆՈՎԻՆ

ԲԱՔՈՒ

Հաճեցեք ընդունել իմ անկեղծ շնորհավորանքները և բարի մաղթանքները 1967 թ. Նոր տարվա առթիվ: Թող Տերն Աստված պարգևի Ձեզ քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ բեղմնավոր գործունեության համար: Աղոթող եմք Բարձրալին Ձեր հավատացյալ հոտի և ամբողջ աղյուսի ժողովրդի խաղաղության, բարօրության և ծաղկման համար:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ծնորհավորում եմք Ձեզ և բոլոր հավատացյալներին՝ Քրիստոսի ծննդյան և Նոր տարվա տոների առիթով, մաղթում քաջառողջություն և բարօրություն:

Շեյխուլիսլամ՝ ՀԱՔԻՄՋԱԴԻՆ
Մուֆտի՝ ՀՈՒՍՄԱԴԻՆՈՎ

ԲԱՔՈՒ





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՁԻ

ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ
ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐԷԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐԿԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԾՆՈՐՀՔ ԱՐԷԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵՍՆԱՄ ԲՈՂՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Քրիստոս ծնավ և հայտնեցավ.

Փրկչի իջման Սուրբ Տաճարեն, Նոր Տարվա սեմին, քաղցր է Մեզի հա-
մար Ջեզի ավետել Ս. Ծնունդը և Աստվածահայտնությունը Տեառն մերո Հի-
սուսի Քրիստոսի, աղոթելով, որ Բարձրյալն Աստված Իր օրհնությունը և
խաղաղությունը տարածե մեր օրերու աշխարհին վրա՝ ի փրկություն և հեր-
ջանկություն համայն մարդկության:

Այսօր, մարդիկ և ժողովուրդներ, բոլորն անխտիր, սուրբ սպասումներով
և հույսերով լի, իրենց հոգիները կրանան հրեշտակներու անուշ երգին՝ պա-
ղատագին հայցելով, որ աշխարհի վրա ըլլա ավելի խաղաղություն և մարդոց
միջև ավելի հաճություն:

Սուրբ Ծննդյան ավետիսով կողջունենք զՁեզ, սիրելի Եղբայր Մեր, մաղթելով արևշատություն և երկնային օգնականություն՝ ի խնդիր Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործոց հաջողության:

Մեր հայրական ողջույնը և օրհնությունը էան Ձեր աստվածասեր հոգևոր դասուն և համայն Ձեր հավատացյալ ժողովուրդին՝ խաղաղ ու արդյունաշատ աշխատանքի մաղթանքներով հանդերձ:

«Ծնորհք, սեր և խաղաղություն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յաիտեան: Ամէն»:

Օրհնությամբ՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական Բարեգործական Հոգևոր Միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուպեմկյան Հիմնարկության կենտրոնական խնամակալության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազեդեդո Պերտիգանին (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ընտանիքի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

Ծնորհարգարդ Եղբայր ի Քրիստոս,

Նոր Տարվան և Փրկչի Ս. Ծննդյան հրաշալի տոնին առթիվ Ձերդ Ս. Օծության կներկայացնենք Մեր սրտալից և ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորոց սրտի կաղոթենք, որ Բարձրյալն Աստված պարգևե Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կյանք և լիակատար հաջողությամբ պսակե եկեղեցանվեր Ձեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Մաղթենք, որ Բեթղեհեմի Մանուկը, Տեղ Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե համայն մարդկության և արդարություն հաստատե այս երկրի վրա:

Սեր սրտի խորագույն աղոթքն է, որ Բեթղեհեմի երկնակամարին վրա հայտնված պայծառափայլ աստղին լույսովը առաջնորդվի մեր ժողովուրդին կյանքը հառաջիկա տարվան ընթացքին՝ եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության, միասնական ոգիի և համերաշխ գործակցության սուրբ ճանքերով:

Թող անշարժ և անասան մնա Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին և բարգավաճ ու ծաղկալ կյանք ունենա հավատացյալ Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքին մեջ և ի Սփյուռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ.

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻԼԻԱՍ



Նոր տարվա և Ս. Ծնունդի առթիվ ընդունեցեք ամենամեծ շնորհավորանքները՝ իմ, Սրբոց Հակոբյանց Միաբանության և Հորդանանի ողջ հայ համայնքի: Մաղթում եմ, որ Ամենակարողը պարգևի Ձեզ հաջողության և բարության երկար տարիներ և Մայր Աթոռին՝ անառատություն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱԳԵՄ

Վեհափառ Տեր,

Ամանորը և հաջորդող Ս. Ծննդյան տոներ կբերեն մեզի դարավոր, բայց երբեք չհինցող և չմաշող հավերժական ճշմարտությունը, թե պատմության մեջ երջանիկ օր մը, լուռ ու պայծառ գիշեր մը Աստվածությունը «ընդ մեզ» եղավ նաև ֆիզիկապես:

Արդարև մարդեղությամբ Աստված «բնակեաց ի մեզ», բաժնեց մեր վիշտերը. «Նա գցաւ մեր երարձ». և մեր փոքր սերերուն՝ մեր բարեկամության և մեր ընկերային սեղաններուն մասնակից դարձավ. «Դուք բարեկամք իմ էք»: Օրհնենք զԱյն սիրով և սիրտով. «Զի վասն մեր մարմնացաւ»:

Սիրենք զԱյն. «Զի նա նախ սիրեաց զմեզ»:

Փոխանցենք իրարու հրեշտակեն տրված մեծ ավետիսը «Որ եղև վասն Ամենայն ժողովրդեանն»:

«Զի ծնաւ մեզ այսօր Փրկիչ»:

Սուրբ ու երջանիկ այս առիթով կմաղթենք Ձեր Ս. Օծության հաստատուն գործություն և սրտի անդորրություն՝ շարունակելու համար նույնքան նվիրումով և նույնքան արդյունավետությամբ Ձեր հովվապետական գործը՝ ի մխիթարություն Սրբությանդ, ի շինություն Ս. Եկեղեցվույս և ի մեծ փառս Մարմնացյալ Որդվույն և մեր Տիրոջ և Փրկչին, որ է օրհնյալ ընդ Հոր և Հոգվույն Սրբո:


Մատչելով ի համբույր Օծելուդ Ս. Աջին խոնարհ աղոթակից՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՄՏԱՄԵՐՈՒԼ



Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:






ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հունվարի 20-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այցելեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանին՝ քաղաքամայր Երևանի կառավարական պալատում:

Նորին Ս. Օծույթյանը ընկերակցում էր՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մեծահարգ նախագահի և Ամենայն Հայոց Հայրապետի միջև տեղի ունեցավ սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:





**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և ջերմ բարեմաղ-
թությունները Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ:

Թող հավետ խաղաղ ու շեն մնա մեր վերածնված Մայր երկիրը և հա-
րատև վերելքով ծաղկի ու զորանա սովետական ժողովուրդների մեծ ընտա-
նիքում:

Հարգալիր ողջունիլ,

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն



**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ**

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձի
ուրախ առիթով հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և լա-
վագույն բարեմաղթությունները անձամբ Ձեզ և Սովետական Հայաստանի
բարեխնամ կառավարության անդամներին:

Մաղթում ենք, որ վերածնված Մայր երկիրը մեր մշտապես խաղաղ և
ապահով անի ու ծաղկի հերջանկություն հաջ ժողովրդի բոլոր զավակների:

Հարգալիր ողջունիլ,

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձի ուրախ առիթով ընդունեցեք Սեր սրտագին շնորհավորանքներն ու բարի մաղթանքները:

Թող անասաւն և շեն մնա ամենայն հայոց Մայր Հայաստանը, համայն աշխարհի խաղաղության պայմաններում:

Սիրով և ողջունիլ,

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Հանեցեք ընդունել Գերագույն սովետի նախագահության անդամների և անձամբ իմ շնորհակալությունը, Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Խորին հարգանքներով,

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմագին շնորհավորանքների և լավագույն բարեմաղթությունների համար:

ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Խորհրդիս և անձամբ իմ սրտագին շնորհակալությունը Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ

ԵՐԵՎԱՆ





ԽՈՂՆԵՐ 1967 ՏԱՐՎԱԼ ՍԵՄԻՆ

38-34

«Խաղաղ ու շինարար կյանքի ծառավի է մեր եկեղեցին և մեր փոքր ածուն...», — պատգամում է վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում, հունվարի 6-ի սուրբ առաքելության՝ ծննդյան իր քարոզի մեջ, շեշտելով, որ «մենք, իբրև եկեղեցի և ժողովուրդ, հացի և լույսի պես կարիք ունինք ներքին հոգևոր միության ու ազգային միասնության՝ ի մասնավորի հայ սփյուռքի տարածքի վրա: Ժամանակն է մեկտեղման, համերաշխ գործակցության, շինարար աշխատանքի՝ մեկ եկեղեցի, մեկ ազգ, մեկ Մայր հայրենիք նշանաբանով: Ամեն երկպիեղում, ամեն կեղծանախություն նախապահ, ամեն շեղում և ամեն դանդաղում՝ ուժեղույն ցուցվում է, անկասկածաբար և անհերքելի»:

Արդարև, սփյուռքում հայ ազգային-եկեղեցական կյանքը կարիք ունի հոգևոր վերանորոգման, հասարակաց իդեալի շուրջ համերաշխ համախմբման, ներքին միության, խաղաղության:

Հայոց Հայրապետը, որպես Գերագույն Պետոս ու Գլուխը Հայ եկեղեցու, ծննդյան իր քարոզի մեջ մի անգամ ևս վշտով նշում է այն հոգեկան տաղանալը, որ այսօր մեր եկեղեցիներն է, մեր ժողովրդին՝ 1963 թվականի նոյեմբերի 1-ից հետո: Սփյուռքում մեզ, որպես եկեղեցու և ժողովրդի, դեռ պակասում է հասարակաց այն հարացույցը, միության ոգին, համերաշխության և ներքին խաղաղության այն բարենպաստ մթնոլորտը, որոնց մեջ կարենային հաշտվել, երջանորանալ հայ հոգիները, ապրել, ջերմանալ բոլոր հայ սրտերը: Դժբախտաբար, ինչպես նշել է վեհափառ Հայրա-

պետը այլ առիթով, դեռ մենք չունենք այդ ոգեկան կարգապահությունը, մեր ընդհանուր, համազգային «ամեն բանն վերը»:

Սփյուռքում այսօր Հայ եկեղեցին է միակ գետինը, ուր կարելի է իրագործել մեր հոգևոր-ազգային միությունը: Բայց վերավոր է մեր եկեղեցին, պառակտված՝ իր իսկ սպասավորների և դավանների ոմանց ձեռքով:

Կազմակերպություններից, անհատներից վեր կան սկզբունքներ, ճշմարտություններ, որոնք համազգային նշանակություն ունեն և սրբություններ են բոլորի համար, և բոլոր ժամանակների համար:

1956 թվականից ի վեր ծանոթ են բոլորիս Անթիլիասից սկիզբ առած եկեղեցական տաղանալի շարժառիթները, նպատակներն ու հետևանքները: Մանոթ են նաև Ամենայն Հայոց Հայրապետի, որպես Հայ եկեղեցու հոգևոր Գերագույն Պետի, բազմաթիվ հորդորներն ու խաղաղասիրական կոչերը, որոնք, սակայն, դժբախտաբար մնացին «ծալն րոնք, սակայն, դժբախտաբար մնացին «ծալն րարբառոյ լանապատի»:

Հայ եկեղեցու ներքին խաղաղությունն ու միությունը վերականգնելու ազնիվ մտահոգությամբ, 1960 թ. ապրիլի 25-ին, սիրո և միության հրավեր-կոնդակով, Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը դիմում էր Անթիլիասին՝ տաղանալի խաղաղ ու համերաշխ լուծման հույսով:

1960 թ. հունիսին, երբ Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը Ամերիկայի Միացյալ Նահանգներում էր գտնվում, հեղինակավոր, սրտացավ հայ մարդիկ՝ Հայի Գավուրքյանը, Տատուր Տատուրյանը և զորա-

պիտի կարենան արժեքավորել իրենց ժամանակն ու կյանքը:

Ահա այսպիսի սրտագին խոհերով և զգացմունքներով, քրիստոնեական վառ հավատքով է դիմավորում մեր եկեղեցին Նոր տարին թե՛ Մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի բոլոր հորիզոնների տակ:

Մեր եկեղեցու, մեր հայրենիքի և մեր ժողովրդի համար բոլորվեց հույսով, աշխատանքով ու սխրագործություններով հարուստ մի տարի:

Հայ ժողովուրդն իր վերածնված Մայր հայրենիքում, իր հայրենի սրբազան հողի վրա, իր հարազատ պետականության ազատ ու խաղաղ պայմաններում նոր տարին դիմավորում է արդար հպարտությամբ, ստեղծագործ ու խաղաղ աշխատանքի պայմաններում, բառացիորեն հրաշքի հավասար վիթխարի փոփոխություններ, նվաճումներ արձանագրելով հայ մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական տնտեսության, լուսավորության, առողջապահության, գյուղատնտեսության բնագավառներում հայ ժողովրդի հոգևոր նոր կյանքի կերտման ասպարեզում:

Ձեռք բերված այս հոգևոր, նյութական նվաճումներն է՛լ ավելի ամրապնդում են մեր հայրենիքի հզորությունը:

«Թող խաղաղության մեջ աճի ու զորանա շինարար ժողովուրդը մեր և նոր իրագործումներով ու նվաճումներով հարստացնե, լուսավորե և զեղեցկացնե Մայր երկիրը մեր Հայաստան աշխարհ, իրականացած երազը մեր լուսաբնակ նախնյաց», — բարեմաղթում է Ազգիս հայրենասեր Հայրապետը՝ Ս. Ծննդյան իր այս տարվա քարոզի մեջ:

Հայոց Հայրապետի սուրբ շրթներով ճշմարտությունն է խոսում:

Արդարև, այսօր մենք, որպես եկեղեցի և ժողովուրդ, կարիքն ունենք խաղաղության, ներքին համերաշխության: Խաղաղության պայմաններում միայն կարող ենք զարգացնել ու պահել, ինչ ստեղծել ենք դարերի ընթացքում և վերջին քառասունյակին: Մեր ժողովուրդը իր անցյալի տխուր կյանքի փորձով հասկացել է իմաստը խաղաղության: Ահա թե ինչու նա այսօր խաղաղության է ձգտում, իր ազգային-եկեղեցական կյանքում, և կանգնել է խաղաղասեր ժողովուրդների ընտանիքում, խաղաղության համար մղվող պայքարում:

Ազգային-եկեղեցական տեսակետից անցյալ տարին նույնպես եղավ իրադարձու-

թյուններով հարուստ, արդյունավետ և հավետ հիշատակելի տարի:

Պետք է ուրախությամբ արձանագրել, որ Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության ներքո Մայր Աթոռում և մեր ներքին թեմերում խաղաղ ու արդյունավետ պայմանների մեջ ընթացավ մեր եկեղեցական-թեմական կյանքը:

Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնությունը, Վեհափառ Հայրապետի աշխուրջ հսկողության ներքև, ծառայության ոգով և պետականվեր զգացմունքներով շարունակեցին կատարել իրենց նվիրական պարտականությունները այս սուրբ ու համազգային հաստատության առավել պայծառության և վայելչության համար:

Սփյուռքում նույնպես մեր ազգային-եկեղեցական կյանքը, Մայր Աթոռի օրհնության ներքո, բոլորեց խաղաղ և շինարար աշխատանքի մի տարի: Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ հայ ժողովուրդը բոլորված իր Մայր եկեղեցու շուրջը, շարունակեց իր խաղաղ, օրինապահ և բնականոն կյանքը՝ ջերմացած իր նախնյաց հավատքով, ամուր կանգնած ազգային ավանդությունների վրա:

Քրիստոնյա հայ մարդը ծնունդն է Ավետարանի:


Պատմության, ժամանակի և միջոցի մեջ մի անգամ ծնված Բանը, որ «մարմին եղև և բնակեաց ի մեզ», ամեն օր կարող է ծնվել մեր ազգային-եկեղեցական, բարոյական կյանքի մեջ, երբ գտնի մաքուր ու բարի, խաղաղ ու քաղցր մթնոլորտը մտքի:

Իմաստություն ու հոգեկան արիություն ունենանք այս նոր տարվա մեջ համազգային միացյալ ճիգերով մեկտեղելու մեր ուժերը՝ ի պաշտպանություն Հայ եկեղեցու միության և իրավանց ու համրապնդումն սփյուռքի հայության ազգապահպանման սրբազան գործի, որը մեր օրերի մեծագույն հարցն է սփյուռքի բոլոր հորիզոնների տակ:

Ահա այս խոհերով ու խորհրդածություններով, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, շնորհավորում ենք բովանդակ հայության Նոր տարին և Փրկչի հրաշափառ Ս. Ծննդյան տոնը՝ ջերմորեն աղոթելով, որ խաղաղություն լինի բոլոր հայ երդիկների տակ, մեր աղոթքի բոլոր տների մեջ ու բոլոր հայ սրտերում՝ ի փառս մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր վերածնված Մայր հայրենիքի:

Ծնորհավոր Նոր տարի և Ս. Ծնունդ, սիրելի եղբայրներ և քույրեր:





ԽՈՂԵՐ 1967 ՏԱՐՎԱ ՍԵՄԻՆ

«Խաղաղ ու շինարար կյանքի ծառավի է մեր եկեղեցին և մեր փոքր ածուն...», — պատգամում է Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում, հունվարի 6-ի սուրբ առավոտյան՝ ծննդյան իր բարոգի մեջ, շեշտելով, որ «մենք, իբրև եկեղեցի և ժողովուրդ, հացի և լույսի պես կարիք ունինք ներքին հոգևոր միության ու ազգային միասնության՝ ի մասնավորի հայ սփյուռքի տարածքի վրա: Ժամանակն է մեկտեղման, համերաշխ գործակցության, շինարար աշխատանքի՝ մեկ եկեղեցի, մեկ ազգ, մեկ Մայր հայրենիք նշանաբանով: Ամեն երկփեղկում, ամեն կեդրոնախույս նախապարհ, ամեն շեղում և ամեն դանդաղում՝ ուժերու ցրվում է, աննպատակ քափառում է, կորուստ է»:

Արդարև, սփյուռքում հայ ազգային-եկեղեցական կյանքը կարիքն ունի հոգևոր վերանորոգման, հասարակաց իդեալի շուրջ համերաշխ համախմբման, ներքին միության, խաղաղության:

Հայոց Հայրապետը, որպես Գերագույն Պետն ու Գլուխը Հայ եկեղեցու, ծննդյան իր բարոգի մեջ մի անգամ ևս վշտով նշում է այն հոգեկան տաղանայր, որ այսօր մեր եկեղեցիին է, մեր ժողովրդին՝ 1963 թվականի Երուսաղեմի ողջազուրումից էլ հետո: Սփյուռքում մեզ, որպես եկեղեցու և ժողովրդի, դեռ պակասում է հասարակաց այն հարացույցը, միության ոգին, համերաշխության և ներքին խաղաղության այն բարենպաստ մթնոլորտը, որոնց մեջ կարենային հաշտվել, եղբայրանալ հայ հոգիները, ապրել, ջերմանալ բոլոր հայ սրտերը: Դժբախտաբար, ինչպես նշել է Վեհափառ Հայրա-

պետը այլ առիթով, դեռ մենք չունենք այդ ոգեկան կարգապահությունը, մեր ընդհանուր, համազգային «ամեն բանն վերը»:

Սփյուռքում այսօր Հայ եկեղեցին է միակ գետինը, ուր կարելի է իրագործել մեր հոգևոր-ազգային միությունը: Բայց վերավոր է մեր եկեղեցին, պառակտված՝ իր իսկ սպասավորների և զավակների ոմանց ձեռքով:

Կազմակերպություններից, անհատներից վեր կան սկզբունքներ, ճշմարտություններ, որոնք համազգային նշանակություն ունեն և սրբություններ են բոլորի համար, և բոլոր ժամանակների համար:

1956 թվականից ի վեր ծանոթ են բոլորիս Անթիլիասից սկիզբ առած եկեղեցական տաղանայի շարժառիթները, նպատակներն ու հետևանքները: Ծանոթ են նաև Ամենայն Հայոց Հայրապետի, որպես Հայ եկեղեցու հոգևոր Գերագույն Պետի, բազմաթիվ հորդորներն ու խաղաղասիրական կոչերը, որոնք, սակայն, դժբախտաբար մնացին «ձայն բարբառոյ յանապատի»:

Հայ եկեղեցու ներքին խաղաղությունն ու միությունը վերականգնելու ազնիվ մտահոգությամբ, 1960 թ. ապրիլի 25-ին, սիրո և միության հրավեր-կոնգալով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը դիմում էր Անթիլիասին՝ տաղանայի խաղաղ ու համերաշխ լուծման հույսով:

1960 թ. հունիսին, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ամերիկայի Միացյալ Նահանգներում էր գտնվում, հեղինակավոր, սրտացավ հայ մարդիկ՝ Հայկ Գավուրբջյանը, Տատուր Տատուրյանը և զորա-

վար Սարգիս Զարգարյանը, իրենց նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, հաշտության առաջարկով Անթիլիաս մեկնեցին և վերադարձան ձեռնուհանդիսում և հուսահատ:

1962 թ. մայիսին Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունում է ծանոթ ազգային մի գործչի նախաձեռնությունն ու առաջարկը՝ հանդիպում ունենալու ժնեում հանգուցյալ Տ. Տ. Զարեհ կաթողիկոսի հետ: Տ. Զարեհ կաթողիկոսը, հակառակ ժնե գնալու և հուլիսին Ամենայն Հայոց Հայրապետին հանդիպելու մասին հայտնած իր գրավոր ցանկության, վերջին բուպին հրաժարվում է անսպասելի կերպով:

Եվ վերջապես, Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ գլուխ է բերվում 1963 թ. Երուսաղեմի ողջագործումը, որը կարևոր իրադարձություն էր մեր եկեղեցական կյանքում՝ տաճարապի բարվոք լուծման ճանապարհի վրա: Երուսաղեմի ողջագործումը շատերին ծանր մտահոգություններ պատճառեց՝ այն նկատելով որպես մի տեսակ «անձնատուլություն» Մայր Աթոռի համար: Վեհափառ Հայրապետը, սակայն, իրեն հատուկ լավատեսությամբ, մեծ հույս էր կապում ողջագործման ակտի հետ՝ Հայ Եկեղեցու ծոցում օրինականությունն ու ներքին խաղաղությունը, վերջապես, վերահաստատված տեսնելու ակնկալությամբ:

Դժբախտաբար Մայր Աթոռի լավատեսությունը, հաշտասեր ոգին, Անթիլիասի համար առիթներ հանդիսացան ողջագործումն օգտագործելու Ս. Էջմիածնի կանոնական իրավասությունների և Հայ Եկեղեցու միության ու գերագույն շահերի դեմ:

Արդարև, ողջագործումից հազիվ երեք ամիսներ անց, 1964 թ. հունվարին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորեն կաթողիկոսն հրապարակով արեց ծանրակշիռ ծանոթ հայտարարությունները «Ամերիկայի Չայն»-ին, և ապա անմիջապես հետո, փետրվարին, դիմեց Մարսելիայի ոտնձգության, հակառակ Երուսաղեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Երուսաղեմի պատրիարքին տված կրկնակի իր խոստումներին: Այս բոլորը ժխտումն իսկ էին ողջագործման ոգու և մի անգամ ևս ցույց էին տալիս, թե Անթիլիասի ղեկավարության մտայնության, հետապնդած նպատակների և գործելու եղանակների մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել: Ողջագործումից այս կողմ մեր եկեղեցուն հուզող ոչ մի հարց դրականորեն և շինիչ ոգով չի լուծվել, ոչ մի տարակարծություն չի հարթվել՝ Անթիլիասի ոչ բարեկամական դիրքի հետևանքով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը անսահման համբերությամբ ու մեծահոգությամբ, ավելի քան երկու տարիներ փորձեց անձնական նամակագրության ճանապարհով և բարեկամական այլ միջնորդություններով հորդորել Անթիլիասի եկեղեցական իշխանությունը, որ հավատարիմ մնա Երուսաղեմի ողջագործման ոգուն և նոր առիթներ չստեղծի ավելի հեռուն գնացող ոտնձգությունների, պառակտումների և անօրինականությունների:

Ցավոք, պետք է արձանագրել, որ Վեհափառ Հայրապետի հուզումով, խոր ու անկեղծ ապրումով զրած նամակները 1964—66 թթ., որոնք հրատարակվել են «Էջմիածին» ամսագրում, մնացին անհետևանք: Անթիլիասը շարունակել է ստեղծել նոր, ծանրակշիռ կացություններ Ս. Էջմիածնի հեղինակության, պատմական կանոնական իրավասության դեմ:

Ողջագործում, համբարշխություն, օրինականություն, դարավոր ավանդություններ և նույնիսկ եղբայրական համբույր՝ Անթիլիասի համար նշանակում են «հաշտվել» 1956 թվականից հետո ստեղծված ապօրեն կացության և աղետալի պառակտումների հետ, և դրանք առավել ևս խորացնել:

Անթիլիասի գահակալը 1965-ին մերժել է նույնիսկ Վեհափառ Հայրապետի եղբայրական հրավերը Ս. Էջմիածին և Մայր հայրենիք այցելելու: Բնականաբար ձևական ու բռնազբոսիկ արտահայտությունները ոչ մի արժեք չեն ներկայացնում, երբ Անթիլիասի գործերը ճիշտ հակառակն են ապացուցում:

Այսօր, ցավոք սրտի, պետք է հաստատենք մենք և համայն հայ ժողովուրդը, թե Երուսաղեմի ողջագործումից հետո՝ Անթիլիասի կողմից կատարված օրինազանցությունների և պառակտիչ ոգու բացահայտ արտահայտություններն են:

1. Ոտնձգությունը Մարսելիայի թեմում 1964-ին և պառակտումը հայ դադութի:

2. Սկսյալ 1965-ից, Անթիլիասի գահակալի կոնդակների մեջ «ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսի կցումը իր անվան:

3. Կրիկիայի կաթողիկոսության կանոնադրության մեջ 1965-ին ներմուծված 32 և 33-րդ հոդվածները, որոնք փորձում են «օրինականացնել» կատարված թեմական հափշտակումները, և ճանապարհ բացում նոր ոտնձգությունների և պառակտումների:

4. Ոտնձգություն Կարակասի (Վենեսուելա) հայ համայնքին մեջ, ուր Անթիլիասից ուղարկված մի վարդապետ, հակառակ իր ժամանման առաջին օրերի հայտարարությանը,

մերժում է ենթարկվել Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետի պատվիրակի գերազանց Տ. Բարգեն արքեպիսկոպոս Ապատոյանի հոգևոր իշխանության, այսինքն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իշխանության, գիտենալով հանդերձ, որ տասնյակ տարիներից ի վեր Հարավային Ամերիկան, ներառյալ Կարակասի գաղութը, եղել են Ս. Էջմիածնի իրավասության ներքո:

5. Անթիլիասի հակաէջմիածնական դիրքավորումը, հայտնի է անհայտ միջոցներով, միջազգային, միջեկեղեցական հարաբերություններում, Մայր Աթոռը մեկուսացնել փորձելու և Կիլիկյան Աթոռը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին «հավասարադոր» ներկայացնելու և նրան հակադրելու քաղաքականությանը:

Իրոք, Անթիլիասի Կիլիկյան Աթոռը ժնկի եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին և այլ միջազգային եկեղեցական կենտրոններին պաշտոնապես ինքն իրեն ներկայացնում է իրեն անջատ, առանձին եկեղեցական կենտրոն, և իր իրավասության ենթակա՝ Ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող մի շարք թեմեր, ինչպիսիք են՝ Միացյալ Նահանգների, Պարսկաստանի և Հունաստանի թեմերը: Ավելին, նա հետապնդում է իր իշխանությունը տարածել Մարսել ու Կարակաս, և իր նոր կանոնադրությանը ճանաչարհ բացել իրեն միացնելու համար նաև այլ թեմեր ու եկեղեցիներ, ինքն իրեն հռչակելու սփյուռքի հայության «ամենայն հայոց կաթողիկոսություն»: Կարճ ասած, Անթիլիաս հաստատված Տանն Կիլիկիայի Աթոռը, կամենում է օտար աշխարհին ցույց տալ, թե ծրագրել է և ի կատար է ածում՝ սփյուռքի հայ եկեղեցու ու ժողովրդի «ազատագրումը» Ս. Էջմիածնից:

Տխուր է, շատ տխուր է հաստատել այս բոլորը: Անթիլիասի Աթոռը իր վրա է վերցրել ողբալի դերը՝ վերջնապես հերձելու Հայ եկեղեցու միությունը և արմատապես ճեղքելու և բաժանելու հայ ժողովուրդը երկու իրարամերձ հատվածների:

Նոր տարվա սեմին հարկադրված ենք այս հաստատումներն ու խորհրդածությունները կատարել հանուն ճշմարտության, հանուն մեր Սուրբ եկեղեցու և ազգի գերագույն շահերի:

Անթիլիասի որդեգրած քաղաքականությունը և նրա հետևանքով սփյուռքում ստեղծված եկեղեցական տագնապը մեր ազգային-եկեղեցական կյանքի համար կատարյալ մի ողբերգություն է: Այդ տագնապը տկարացնում է Հայ եկեղեցու ներքին ուժը, ջլատում նրա կենսունակությունը, տկարացնում՝ սփյուռքի մեր ժողովրդի միասնականությունը ու ազգայնահայանման նվիրական գործը: Հայ մար-

դը հարց է տալիս ինքն իրեն՝ ի վերջո հանուն ինչի՞ են արվում այդ բոլորը և ո՞ւմ են օգուտ բերում:

Ստեղծված այս կացության առաջ ծանրորեն մտահոգվել են ոչ միայն Մայր Աթոռն ու հայ հոգևորականությունը, այլ նաև սփյուռքի բոլոր գիտակից ազգայիններն ու մեր հավատացյալ ժողովրդի լայն զանգվածները:

Վերջին երեք-չորս տարիների ընթացքում Մայր Աթոռում ստացվել են բազմաթիվ գրություններ, նամակներ արտասահմանի մեր եկեղեցական կենտրոններից, թեմակալ առաջնորդներից և զանազան հեղինակավոր, ազգային-հասարակական գործիչներից, որոնք սրտացավորեն ներկայացնելով իրենց մտահոգություններն ու վրդովմունքը, մատնանիչ են արել Անթիլիասի քաղաքականության վնասները:

Անցյալ տարի Ավստրիայում, ուր Վեհափառ Հայրապետը գտնվում էր Վիեննայի հայոց եկեղեցու հիմարկիբի առիթով, Եվրոպայից, ԱՄՆ-ից և Մերձավոր Արևելքից մի շարք կարևոր ազգային դեմքերի հանդիպումները Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարք հոր գլխավորությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի հետ, վերջին արտահայտությունն էին նրանց ծանր մտահոգությունների և, միաժամանակ, նրանց բարկ կամեցողության՝ ի խնդիր Հայ եկեղեցու իրավանց և միության պաշտպանության:

«Կիլիկիո Կաթողիկոսությունը» հինգ հարյուր տարիների պատմական և փաստական մի իրողություն է և, իբրև այդպիսին, գործնապես ընդունված Ամենայն Հայոց բազմաթիվ կաթողիկոսների կողմից, մասնավորապես Խորմյան Հայրիկի օրերից այս կողմ, հաճախ պաշտոնապես սիրալիր հարաբերությունների և գործակցության պայմանների մեջ, իբրև մասնավոր Աթոռ Հայաստանյայց եկեղեցու նվիրապետության ծոցի մեջ, իրեն հատուկ իրավասությունների սահմանների մեջ, սակայն առանց երբեք հավասարադոր լինելու Ամենայն Հայոց Հայրապետության և առանց Հայ եկեղեցին ներկայացնելու իրավասության՝ որևէ միջեկեղեցական կամ միջազգային մակարդակի վրա:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երեկ և այսօր ընդունել է հինգ դարերի հոլովույթով նվիրագործված իրողությունը, վճռականորեն սակայն պահանջելով, որպեսզի Կիլիկյան Կաթողիկոսությունը դուրս չգա այդ նույն հինգ դարերի հոլովույթով նվիրագործված սահմաններից և իրավասություններից: Մենք ընդունում ենք, թե Կիլիկիո Կաթողիկոսը Կաթողիկոս է՝ իրեն վիճակված իրավասությունների մեջ միայն, Կիլիկիան թի-

մեր Հայելիի և Կիպրոսի և 1929 թվին Ամենայն Հայոց Կաթողիկոսի համաձայնությամբ և օրհնությամբ, Երուսաղեմի Հայոց պատրիարքության կողմից իր իրավասության ներքև դրված թեմերի Դամասկոսի և Լիբանանի սահմաններից ներս միայն, Հայաստանյայց եկեղեցվո ընդհանրական Կաթողիկոսության իբրև մաս, և այդ շափով և այդ իմաստով ենթակա նրան այն բոլոր կացությունների առջև և այն բոլոր հարցերի մեջ, որոնք վերաբերում են ընդհանուր Հայ եկեղեցուն, որ ունի իր իրավասու Գերագույն Պետր և Դավթը՝ հանձին Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ահա թե ինչ է հասկանում Մայր Աթոռ օրինականության հրավերելով Անթիլիաս հաստատված Կիլիկյան Կաթողիկոսությունը:

Որքան ժամանակ Անթիլիասի Կիլիկյան Աթոռը կհարգի վերոհիշյալ սկզբունքները, Մայր Աթոռի համար նրա գոյությունը և գործակցությունը պետք է նկատել ընդունելի և ցանկալի: Սակայն, որքան ժամանակ Անթիլիասի Աթոռը գուրս գալով հինգ դարերի իր պատմական իրավասությունների սահմաններից, կփորձի ընթանալ վերջին տասը տարիների իր որդեգրած քաղաքականությամբ՝ հակադրվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ոտնձգություններ կատարելով էջմիածնական թեմերի մեջ և միջեկեղեցական մակարդակի վրա ներկայանալով իբրև «հավասարազոր» Ամենայն Հայոց Կաթողիկոսության, նա իրեն կդնի Հայ եկեղեցին պառակտողի դերի մեջ: Հետևաբար, մեր պարտականությունը պետք է լինի՝ պաշտպանել Ս. Էջմիածնով մեկությունը և միությունը Հայ եկեղեցու, Անթիլիասի արդի հակապատմական, հակաօրինա-

կան և հակաժողովրդական քաղաքականության դեմ:

1966 թ. հոկտեմբերի 2-ին, իր գահակալության տասնմեկերորդ տարեդարձի առթիվ Մայր Տաճարում խոսած իր քարոզում, վեհափառ Հայրապետը արտահայտելով բովանդակ Հայ եկեղեցու և ժողովրդի խոհերն ու զգացմունքները, հայրաբար շեշտում էր հորդորում՝

«Հանուն մեր բոլոր սրբություններում, պետք է անխախտ ու ամուր պահպանվին ու պաշտպանվին միությունը ու դարավոր կառույնները Հայ եկեղեցվո, և հոգևոր հաղորդակցությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և արտասահմանի հայ եկեղեցիներու հավատացյալներու միջև: Հայ ժողովուրդը Ս. Էջմիածնով, Ս. Էջմիածինը՝ հայ ժողովրդով, այժմ և հավիտյան: Այս է իրավ և խոր զգացումը համայն հայ ժողովրդին և անոր ուխտապան ու պայծառառես հոգևոր սպասավորներուն»:

Ամեն դեպի պետք է պահենք մեր եկեղեցու մեկությունն ու միությունը, նվիրապետական կարգն ու կանոնը, իրավասության սահմաններն ու գերագույն հոգևոր իշխանությունը Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության:

Այս է միակ և ուղիղ ճանապարհը:

Այս է պատմության և մեր ժամանակների թելադրանքը:

Թող Աստված հաստատ ու անսասան պահի իր իսկ հիմնած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Մենք խոր հավատքով տոգորված ապավինում ենք Աստծու արդարությանը և մեր հավատացյալ ժողովրդի հոգևոր ու ազգային գիտակցությանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ տոնվեց Քրիստոսի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոներ:

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մ. Տաճարում՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով և ամպհովանու տակ հանդիսավորապես առաջնորդվեց Մ. Տաճար՝ Ս. Ծննդյան պատարագը մատուցելու:

Զմեռվա պայծառ արևը՝ ջերմություն էր հաղորդել և՛ բնության, և՛ սրտերին:

Մայր Տաճարը լիքն էր աղոթավոր ուխտավորներով և հավատացյալներով: Զանգերը ուրախ ու հանդիսավոր ղողանջով ավետում էին օրվա մեծ տոնի սրտառու խորհուրդը:

Հայրապետական ս. պատարագի ժամանակ Սեղանին սպասարկում էին գեր. Տ. Հայկազուն և Տ. Հուսիկ սրբազանները, հոգ. Տ. Մուշեղ, Տ. Ներսես ծ., Տ. Արսեն և Տ. Նա-

րեկ վարդապետները, բահանայից դասը և սարկավազների խումբը:

Մ. Տաճարի կամարների տակ հնչում էր «Խորհուրդ մեծ և սբանչի»-ն, հոգիները լցնելով Ս. Ծննդյան ուրախությամբ և պատգամով:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Քրիստոսի Ս. Ծննդյան խորհրդի մեծ ավետիսը տալով Հայ եկեղեցուն և բովանդակ հայությանը, խոսում է հետևյալ ոգեշունչ բարոզը՝ օրվա տոնի համամարդկային, հոգևոր, բարոյական մեծ նշանակության մասին՝ համեմատ կրոնաբույր և հայրենաշունչ խոհերով, որը նույն գիշեր ձայնափովում է Երևանի ողորկայանից:

«Երկնքի հեռու բարձունքներեն, աշխարհ ու ժողովուրդներ ամեն տարի կլսեն հրաշալի երգը հրեշտակներուն, որոնք երկու հազար տարիներ առաջ ավետեցին պատգամը տիեզերքի և կյանքի Արարչին՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այս ավետիսով կրացվի անա մարդկության առաջ, հորիզոնը հոր տարիի մը և՛ Փրկչական 1967-րդ տարիին: Փրկչական տարի այո, որովհետև մեր Տերը և Փրկիչը Հիսուս, այս ավետիսով ծնավ, և զայն իր սրտին մեջ առած, իշավ աշխարհ, փոխելու համար նակատագիրը մարդուն, ազատ արձակելու զայն նյութի և մարմնի պայմանեն: Հիսուս աշխարհ եկավ քսելու համար՝ ով մարդ, դուն քու մարմնույդ մեջ հոգի մը կկրես. այդ հոգին ազատ է և կրնա փշրել ամեն կապանք, արարչագործելու համար հոր աշխարհ մը, կյանքի հոր մակարդակ մը, ուր կտիրակալեն ուժը ոգիին և օրենքը բարիին, աշխարհը իրավ մարդուն: Այդ ոգիին ու անոր թագավորության հայտարար նշանները պիտի բլլան՝ խաղաղությունը և հանությունը ի մարդիկ:

Գիտե՛նք արդյոք լսել խոսքը մեր երկնային Տիրոջ, և հետևիլ անոր: Ինչքան ատեն մարդիկ ու ազգեր չեն կրցած ամբողջապես և վերջնապես կյանքի կոչել պատվիրաններն այս աստվածային, անոնք ձերբազատած չեն իրենց հոգիները և տակավին գերի են նյութին և կույր կիրքերու շղթային: Եվ կտիրեն ոգիի սով:

Եվ այսօր անա, սիրելի ժողովուրդ, երկնքի հեշտակները վերստին կերգեն մեծ ավետիսը փրկարար, օգնելու համար մարդոց, որ պեսգի անոնք առավել իրականացնեն իրենց իսկական կոչումը այս անցավոր աշխարհի վրա՝ դառնալու սիրտ և խաղաղության ջահակիրներ, դառնալու ճշմարիտ մարդիկ, արժանի կոչվելու «լուսոյ որդիներ», «Աստուծոյ որդիներ»:

Մեր դարաշրջանին մանավանդ, մարդկությունը ցավատանջ ծարավով իր սիրտը կրանա Սուրբ Մենդյան հրաշալի ավետիսին, իբրև գերագույն ապավեն, հույս և մխիթարություն: Իրանի բոլոր անոնց որ գիտեն լսել ձայնը երկնքի և իրենց կյանքի գործերով ընթանալ խաղաղության, արդարության ու մարդասիրության նախապահին: Հիշենք լեռան քարոզին՝ «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցին»:

Մեզի համար, հոգեկան անհուն սփոփանք է և բուրխություն, որ հայ ժողովուրդը, միասիրտ ու միակամ, անխախտ կանգնած է խաղաղության սրբազան դատի պաշտպանի դիրքերուն վրա:

Մեր օրերուն, խաղաղության սպիտակ ազնվին, խորհրդանշանն է երկնքի հեշտակներուն, որոնք շատ դարեր առաջ, երանելի գիշեր մը, Սուրբ Մենդյան մեծ ավետիսը երգեցին:

Քրիստոսի անունով խոսող ու գործող եկեղեցիները, ավելի քան երբեք կոչված են

այսօր, իրենց ժողովուրդները առաջնորդելու խաղաղության ավետարանական պատվիրաններով, ընդդեմ պատերազմին և ընդդեմ անոր մուր ուժերուն: Քրիստոսի եկեղեցիներ, իբրև պատգամակիր Աստուծո Որդվույն և իր հիմնադրին, և իբրև ճշմարիտ արտահայտիչ մարդկային խղիին, չի կրնար իր բար ու վեհա խոսքը չքսել, և իր աշխատանքը զլանալ. խաղաղության դատի վերջնական ու ամբողջական հաղթանակին համար: Պատերազմը համագումարն է բոլոր շարիքներուն ու ոճիրներուն, և ժխտումն իսկ Քրիստոսի սուրբ Ավետարանին: Պետք է դատապարտել և բոլոր միջոցներով խափանել պատերազմի մահասփյուռ մեկնումն, ուր որ աշխարհի վրա իր ուրվակները երևա:

«Խաղաղություն հեռատրաց, խաղաղություն մերձատրաց, խաղաղություն ամենեցուն»:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, իր պատմական կեդրոն Սուրբ Էջմիածնի հոգևոր առաջնորդության ներքև, անձանձույթ պիտի շարունակե աղոթել ու գործել ի խնդիր աշխարհի խաղաղության և ժողովուրդներու եղբայրության:

Յոդ ոգորմածն Աստված քաղցրությամբ ընդունի մեր աղաթները. բոլր իմաստության լույսը շատցնե մարդոց մտածումներուն և սրտերուն մեջ, և ինքը Ամենակալը գորավի ու մարտակից դառնա խաղաղության բոլոր պաշտպաններուն:

Խաղաղ ու շինարար կյանքի ծարավի է նաև մեր եկեղեցին և մեր փոքր ածուն:

Ահավոր փորձանքներն և ողբերգություններն հետո, որոնց հիսուն տարիներու ոգեկոչումին կրակը կայրե տակավին սրտերը մեր ազգի բոլոր զավակներուն, մենք իբրև եկեղեցի և ժողովուրդ, հացի և լույսի պես կարիք ունինք ներքին հոգևոր միության ու ազգային միասնության, ի մասնավորի հայ սփյուռքի տարածքի վրա: Ժամանակն է մեկտեղման, համերաշխ գործակցության, շինարար աշխատանքի՝ մեկ եկեղեցի, մեկ ազգ, մեկ Մայր հայրենիք՝ նշանաբանով: Ամեն երկփեղկում, ամեն կեդրոնախույս նախապահ, ամեն շեղում և կամ դանդաղում՝ ուժերու ցրվում է, աննպատակ թափառում է, կորուստ է:

Ով հարագատ ու հավատարիմ զավակն է մեր սուրբ եկեղեցիին, ուղիղ կհասկնա մեր արդար մտածումը և իդժը: Խաղաղություն ի սփյուռս աշխարհի ցրված մեր եկեղեցիներուն և մեր հավատացյալ պանդուխտ զավակներուն: Եկեղեցիներն են, պառակտումները և օրինազանցությունները ոչ մեկ լավ բան կխոստանան մեր ազգին: Աստվածային նախախնամությամբ հիմնադրված ու հայոց պատմության մեծ երկու հազար տա-

րիներու կենսափորձով նվիրագործված՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կա ու կմնա մեր լույս հավատքի և մեր հայ հոգիի անշարժ վեմը, նվիրական սրբություն Սրբոցը, որ հեռագնեռն առավել փառով կշողով և իր հոգեւոր հովանին ու աստվածային օրհնությունը կառարածն հումայն Հայ եկեղեցիին և հավատացյալ ժողովրդին վրա, իբրև Աթոռ Հայրապետության Ամենայն Հայոց: Այսպես է որ ներշնչումի սուրբ պահու մը, Դավրիժեցի Առաքել պատմիչը, հայրենի վիշտը իր սրտին մեջ ծրարած, բուրբին հանձնած է՝ հայոց պատմության բոլոր ժամանակներու մեծ նշմարտություններեն մեկը՝ «ի վերայ Արշոյն և Ս. Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Փառք և հավերժական լույս, հրաշք էջմիածնին: Անսպառ կորով ու պայծառ տեսիլք, մեր եկեղեցւոյ ուխտապան սպասավորներուն, որ անեղբ բոլորը ձեռք-ձեռքի տված, մեկ սիրտ մեկ հոգի, արթուն հսկեն և անդուլ աշխատին, որպեսզի Արարատի փեշերուն, Հայոց վերածնած աշխարհի երկնքի տակ, միշտ վառ ու փառավոր մնա Ս. Էջմիածնի անմար կանքեղը, և Ս. Էջմիածինը հաղթական շարունակե իր պատմական առաքելությունը, լույս և հույս բաշխելով մեր ազգի բոլոր գավակներուն անխափր որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Սիրեցյալ գավակներ Մեր. «Լցէք զխնդրքիս իմ. զնոյն խորհիքիք, զնոյն սէր յանձին ունիքիք, համաշունչ, միախորհուրդ» (Փիլիպ. Բ 2):

Նվարդ, Սուրբ Մենդյան և Աստվածահայտնության այս սրբասուրբ պահուն, շնորհաց խորան Փրկչի Իշման Սուրբ Տաճարեն, Ձեզի ամենուր հայրական սիրտ ողջույն և օրհնություն, բոլոր բարի մաղթանքներով, որ երկնային Տերը Ձեզ բոլորդ հեռու պահն ամեն շարե և փորձություն՝ պարգևելով Ձեզի փառառոյ երջանիկ կյանք, արեւոտ խաղաղ օրերով, Ձեր առաքիւնի գործերու հաջողությամբ:

Թող բարին Աստված անշարժ ու շեն պահե, մեկ ու անբաժան մեր Սուրբ եկեղեցին, բնակարանը մեր հոգիներուն, հրաշագործ հովանին մեր ազգին:

Թող խաղաղության մեջ անի ու գորանա շինարար ժողովուրդը մեր և նոր իրագործումներով ու նվաճումներով հարստացնե, լուսավորե և գեղեցկացնե Մայր երկիրը մեր Հայաստան աշխարհ, իրականացած երազը մեր լուսաբնակ նախնայց:

Միածին Արդվույն Սուրբ Մենդյան շնորհներով, նոր տարին քաղ ըլլա խաղաղության տարի, եղբայրության տարի, խնդության տարի աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար:

Շնորհավոր նոր տարի և Սուրբ Մենդ:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերջ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յապտեան: Ամէն»:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսագրութեամբ, Ավագ Սեղանի բեմի առաջ կատարվում է Ջրօրհնյաց սրբազան կարգը, ի հիշատակ Քրիստոսի մկրտության «ի Յովհաննէ, ի Յորդանան գետ»:


Մ. Տաճարի կամարների տակ տպավորիչ դաշն ու ոգելից հնչում են «Ուլ զարմանալի» և «Այսօր Ձայնն հայրական» մկրտության տաղերը: Այնուհետև հավատացյալները ջերմեռանդ բարեպաշտութեամբ վերցնում են Քրիստոսի մկրտության ջրից, հոգեպես պալծառացած նաև օրվա մեծ տոնի խորհրդով: Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, Ս. Մենդյան տոնի առթիվ շնորհավորություններ ընդունելու:

Վեհարանում լուսարարապետ գեր. Տ. Հայկազուն սրբազանը, հանուն Մ. Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և բոլոր ներկաների, շնորհավորում է Վեհափառ Հայրապետին՝ Մ. Աթոռի անսասանության, պալծառության և նրա Գահակալի կենաց արեւշատության սրտագին բարեմաղթություններով:

Վերջում Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունն ու գոհունակությունն է հայտնում բոլոր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար և օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով խաղաղություն աշխարհին, համերաշխություն և հաշտություն բոլոր ազգերին:

Ն. Ս. Օծուկյան «Պահպանիչ»-ով ավարտվում է օրվա հանդիսությունը:





ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 13-ին, կիրակի օր, Մայր Տաճարում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եպիսկոպոս ձեռնադրեց Կ. Պոլսի Պատրիարքական Աթոռի Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի նախկին տեսուչ հոգ. Տ. Շահան ծ. վրդ. Սվաճյանին և դպրեվանքի նորընտիր տեսուչ հոգ. Տ. Խոսրով ծ. վրդ. էմիրզեյանին:

Նոյեմբերի 12-ին, շաբաթ օր, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարում կատարվեց նորընծաների ճրտություն և ուխտադրություն՝ ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ: Իջման Ս. Սեղանի առաջ Տ. Շահան և Տ. Խոսրով ծ. վարդապետները ուխտեցին՝ անխտոր և անսայթաք ընթանալ Հայաստանայց Առաքելական Եկեղեցու ուղղափառ դավանության ճանապարհով, «հաւատարիմ լինել Սրբոյ էջմիածնի միջև ցվախճան կենաց մերոց և կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյ»:

Ուխտագրի ընթերցումից հետո, նորընծաները այն ստորագրեցին: Մայր Տաճարի լուսարարապետ գեր. Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը վկայում է ուխտագրությանը: «Պահպանիչ»-ով ավարտվում է ուխտադրման արարողությունը:

Հաջորդ օրը, կիրակի, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես, ամպհովանու տակ և եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար, ս. պատարագ մատուցելու և եպիսկոպոսական ձեռնադրություն

կատարելու: Ն. Ս. Օծուխյան ուղեկցում են եպիսկոպոսական զգեստավորման մեջ, որպես առընթերակա Տ. Հուսիկ և Տ. Վահան եպիսկոպոսները: Քահանայական պարզ զգեստավորման մեջ, նորընծաները նույնպես հետևում են թափորին:

Օրվա հանդիսության խարտավիլակ է լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը:

Մ. Տաճարում, Ս. Ստեփանոսի սեղանի առաջ սկսվում է ձեռնադրության խորհուրդը: Ամենայն Հայոց Հայրապետի աղոթքով և օրհնութեամբ նորընծաներին շնորհվում են եպիսկոպոսական կոչման յոթ աստիճաններ: Այնուհետև ս. պատարագը շարունակվում է Ավագ Սեղանի վրա, մինչև ճաշու Գրքի ընթերցումը, որից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Ձեռնադրիչ Վեհափառ Հայրապետը Ավագ Սեղանի առաջ նստած իր առաքելական Աթոռի վրա է, ընթերցում է ոգեշնչումով ձեռնադրության մեծ աղոթքը՝ «Դո՛ւ Տէ՛ր, այսօր վերածիր տնօրինութեամբ քո ի քահանայապետական շնորհ, տո՛ւր սոցա նմանիլ Քեզ՝ ճշմարիտ Հովուիդ, դնել զանձինս իւրեանց ի վերայ ոշխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տիեզերաց...»:

Ապա նորընծաները ծնկաչոք, դեմքներն դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում են աշխարհի ունայնություններից, մինչ Մայր Տաճարի կամարների տակ հնչում է կոչման խորհիմաստ ու վեհ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր սնունդ, որ միշտ



Չեռնադրության պահը

լնու զպէտս սպասաւորութեան Առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՇահան և զնոսրով վարդապետս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Օրհնեբգութիւնը կրկնվում է երեք անգամ, որից հետո Վեհափառ Հայրապետը կատարում է ձեռնադրության և օծման կարգը:

Ապա համապատասխան աղոթքներով նորոժ եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական զավազան և մատանի:

Ընթերցվում է վերջին Ավետարանը, որից հետո Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է ձեռնադրության խորհուրդը:

Վեհափառ Հայրապետը համբուրում է ճակատը հայ եկեղեցու նորապսակ իշխաններին և տալիս հայրապետական իր ներշնչված պատգամն ու հորդորները:

«Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր, փա՛ռք քեզ, յաղագս յամենայնի, Տէ՛ր, փառք քեզ»:

«Այսօր Մենք առավել ևս հոգեւոր պարտականութիւնն ունենք փառք տալու Աստծուն, հայոց Աստծուն, որ մեզ պարգևեց այս փառավոր, այս սքանչելի պահը: Այս տաճարի նվիրական կամաների տակ, ս. պատարագի

այս սրբազան պահին, Մենք, որպէս Հայրապետը Հայոց, Աստծու օգնականությամբ և Սուրբ Հոգու շնորհաբաշխությամբ հայ եկեղեցու համար երկու նոր սպասավորներ ձեռնադրեցին, Տ. Շահան և Տ. Խոսրով Ժ. վարդապետներին, որոնք կոչվեցին եպիսկոպոսական բարձր աստիճանին: Մենք հավատում ենք, որ այսօր Մեր ձեռնադրությամբ, սրբալույս մեռոնի օծմամբ, Մեր և ձեր աղոթքներով Աստուծոյ Սուրբ Հոգին իջավ մի անգամ ևս առատ շնորհներով զարդարեց նորապսակ եպիսկոպոսների միտք ու հոգին:

Այս սուրբ սեղանների առաջ, նման առիթներով, հայոց հայրապետները, հազար վեց հարյուր տարիներ շարունակ Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից սկսած, աստվածային շնորհներ են հայցել մեր եկեղեցու և նրա ծառայության նվիրված հոգիների համար: Այդ աստվածատուր շնորհների մասին է վկայում մեր եկեղեցու ողջ պատմությունը: Այդ շնորհների և այդ լույսին մեջ հոգեպես պայծառացել ու հզորացել են մեր սուրբ հայրապետներն ու վարդապետները և այդ լույսով հիշատակության արժանի գործեր են



Օծում Ս. Շահան եպիսկոպոսի

կատարել հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և ազգային կյանքում: Ունեցել ենք մեծ հայրապետներ, որոնք եկեղեցաշեն և հայրենանվեր անմոռաց գործեր են կատարել: Երկնքի բարձունքներից իջած ոգեկան գործքներ, իմանալի լույսը նրանք տեսել և ընդունել են այս տաճարի կամարների տակ, և նրանով փառավորել են իրենց կյանքն ու մեր ժողովուրդի պատմությունը:

Այսօր էլ շարունակվում է մեր ազգի ու եկեղեցու հոգևոր պատմությունը: Աստված այսօր էլ իր լույս շնորհները առաքում է և բաշխում մեզ բոլորիս, և մանավանդ արժանավորներին, որոնք իբրև ընտիր անոթներ գիտեն պատրաստ լինել այդ շնորհները ընդունելու:

Սույն ձեռնադրության նվիրական պահին Մենք ջերմապես աղոթեցինք, որ Տերը իր լույս շնորհները քառասպես բաշխե Ս. Շահան և Ս. Խոսրով վարդապետների հոգիներին, որպեսզի նրանք ոգեպես վերածնած ու

պայծառակերպված հետ այսու ամբողջապես և մինչև իրենց երկրային կյանքի վախճանը նվիրվեն Աստուծո և իրենց հոտին ծառայելու սուրբ առաքելության: Ս. Շահան և Ս. Խոսրով ծ. վարդապետները եկել են Ս. Էջմիածին միջնորդությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ Ս. Շնորհիս սրբազան արքեպիսկոպոսի, ինչպես նաև բարի վկայությամբ Ստամբուլի կրոնական ժողովին և Թուրքիա ապրող հարյուր հազար հայ հավատացյալներին:

Կ. Պոլսի պատրիարքական պատմական Աթոռը հայ եկեղեցու նվիրապետության կարևոր կենտրոններից մեկն է, որն իր բարեգաղ շուրջ երեսուն եկեղեցիներով, հավատավոր և նվիրյալ հոգևորականությամբ, գովելի նախանձախնդրությամբ կատարում է Թուրքիայում ապրող Մեր հավատացյալ զավակների հոգևոր առաջնորդության գործը:

Ահա Ս. Շահան նորապսակ եպիսկոպոսը ստամբուլահայ մեր ժողովրդի հարազատ զավակն է, նրա ծոցից դուրս եկած, բազում տարիներ ծառայած այնտեղ որպես ֆարզիշ և Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի տեսուչ:

Նույնպիսի ծառայությամբ է ներկայումս նաև Ս. Խոսրով նորապսակ եպիսկոպոսը, ինքն էլ ստամբուլահայ ժողովրդի հարազատ զավակ, որ իր ետին ունի ֆարզչական տարիների արդյունավոր գործունեություն, և այժմ տեսուչն է դպրեվանքի:

Երկուսն էլ երիտասարդ, բարեպաշտ, իրենց կոչման և առաքելության բարձրության վրա կանգնած, շնորհներով օծված հոգևորականներ են, որոնք պատասխանատու հոգեվոր, ֆարզչական և կրթական ծառայության են կոչվում՝ ստամբուլահայության ծոցին մեջ:

Աղոթենք և հայցենք Աստծու օգնականությունը նրանց վրա, որպեսզի նվիրումով, պայծառությամբ և ներշնչումով կատարեն իրենց պարտականությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռի մեջ, իրենց ժողովրդի մխիթարության համար, ամենապատիվ Շնորհիս պատրիարքի հովանու և իշխանության ներքև:

Մենք միշտ պիտի աղոթենք, սիրելի սրբազաններ, հարազատ զավակներ Մայր Աթոնիս, ձեր աստվածասեր ու ժողովրդասեր գործող հաջողության համար:

Այս սուրբ պահը դուրս էլ մի մոռանալ: Ձեր հոգու բոլոր քելերով կապված մնացե՛ք Լուսավորչի անմար կանթեղին, Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին սիրով, նվիրումով և հավատարմությամբ:

Աղոթեցե՛ք և գործեցե՛ք նախ Աստծու փառքին համար, ապա Հայաստանյայց Առաքե-

լական եկեղեցու և ձեր ժողովրդին համար:

Թող Աստված հարցն մերոց հավետ օգնական մեզ ձեզ և գորավիզ: Տարեք Ձեզի հետ Մեր սերը, Մեր զնաճատանքը և Մեր օրհնությունը»:

Վեհափառի հուզիչ խոսքից հետո շատունակվում է ս. պատարագը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր ժամը 3-ին նորոժ Տ. Շահան և Տ. Խոսրով եպիսկոպոսների պատվին տրվում է ճաշկերույթ:

Ընդունելության ներկա են Մ. Աթոռի միառանությունը, Գեր. Հոգ. Խորհրդի և վերըստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայրավանքի միաբանությունը և հյուրեր:

Հյուրերի թվում է նաև հանրածանոթ արվեստագետ-քյամանչահար Ռուբենը, որը ղեկավարվող բարբար գտնվում էր Մայր Հայրենիքում:

Ճաշկերույթի ժամանակ նորապսակ սրբազաններին առաջինը շնորհավորելով Վեհափառ Հայրապետը՝ իր խորունկ ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց, շեշտելով, որ այսօրվա շնորհաբաշխության մ. Պոլսի պատրիարքական Աթոռը օժտվում է երկու խոստումնալից երիտասարդ եպիսկոպոսներով, որոնց կարիքն ուներ այդ Աթոռը երկար ժամանակներից, մի հանգամանք, որը հոգևոր մխիթարության առիթ է Մ. Աթոռի, հայ եկեղեցու համար ընդհանրապես, և ի մասնավոր՝ Ստամբուլի հայ ժողովրդի համար: Ն. Ս. Օծությունը ջերմագին բարեմաղթություններ արեց միաժամանակ Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի պայծառության, անասանության, ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի գործոց հաջողության, առողջության և Թուրքիայում ապրող իր հոգևոր զավակների բարօրության և համայն աշխարհի խաղաղության համար:

Նորապսակ սրբազաններին շնորհավորելին նաև գեր. Տ. Հայկազուն արքեպ. Արրահամյանը՝ հանուն Մայր Աթոռի միաբանության և Գեր. Հոգ. Խորհրդի, Հոգևոր ձեմարանի տեսուչ հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ հանուն ձեմարանի, և Ա. Հատիտյանը՝ հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության:

Հոգ. Տ. Արսեն վրդ. Բերբերյանը ապրումով երգեց «Ի կոյս գերեզմանէն» զմայլելի մեղեդին:




Օծում Տ. Խոսրով եպիսկոպոսի

Քյամանչահար Ռուբենը, ի պատիվ օրվա հանդիսության, իրեն հատուկ արվեստով, մի բանի գործեր նվագեց Սայաթ-Նովայից և այլ հեղինակներից:


Վերջում, Վեհափառ Հայրապետին ուղղվալ որդիական երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսքեր արտասանեցին նորապսակ եպիսկոպոսները՝ Տ. Շահան և Տ. Խոսրով սրբազանները, մի անգամ ևս ուխտելով իրենց ապագա հոգևոր աշխատանքով ու նվիրումով արդարացնել Վեհափառ Հայրապետի բարձր գնահատությունը, Կ. Պոլսի սրբազան պատրիարք հոր ու ստամբուլահայ ժողովրդի սպասումներն ու ջերմ համակրանքը:

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված Տերունական հղթթրով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:





ԳԵՐ. Տ. ՇԱՀԱՆ ԵՊԻՍԿ. ՍՎԱԾՅԱՆ



Նորապսակ Տ. Շահան եպս. Սվաճյանը, ավագանի անունով՝ Սիմոն, ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղում՝ 1926 թվականի սեպտեմբերի 15-ին, բարեպաշտ ու հավատացյալ ընտանիքի ծոցում։ Հայրը՝ Թորոս, թոմարզացի, մայրը՝ Մարիա, խարբերդցի։

Նախնական ու միջնակարգ կրթությունը ստացել է Կ. Պոլսի հայոց ներսիսյան և Ճեմարան վարժարաններում։ 1949 թվականին ընդունվել է Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժա-

րանը, որի ընթացքը հաջողությամբ ավարտելով 1951 թվականի ապրիլին սարկավագ է ձեռնադրվել։ Այնուհետև իր ուսումը շարունակելով Ընծայարանում, այն փայլուն հաջողությամբ ավարտում է։ 1954 թվականի օգոստոսին կուսակրոն քահանա է ձեռնադրվում պատրիարքական տեղապահ դեր. Տ. Նդիշե արքեպ. Տերտերյանից։

Այնուհետև խոստումնալից և երիտասարդ հոգեորականի առաջ բացվում է վանքում և Ստամբուլում վանական-վարչական, քարոզչական-կրթական գործունեության լայն ասպարեզ։

Մինչև 1957 թվականը Երուսաղեմում, Ժառանգավորաց և ա. Թարգմանչաց վարժարաններում վարում է ուսուցչական, Նաֆա, Հայֆա քաղաքներում՝ հովվական և քարոզչական պաշտոններ։

1957 թվականի մարտին, Կ. Պոլսի հայոց ամեն. Տ. Գարեգին սրբազան պատրիարքի հրավերով ստանձնում է Սկյուտարի Ս. Խաչ դպրեմանքի փոխ-տեսչի և ապա 1959 թվականին՝ տեսչի պաշտոնն, պաշտոն, որը բեղուն արդյունավորությամբ շարունակում է մինչև 1963 թվականը։

1957 թվականին Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցում ստանում է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն՝ Տ. Գարեգին պատրիարքից, իսկ 1961 թվականին Նաֆայի հայոց Ս. Նիկողոս եկեղեցում՝ ծայրագույն վարդապետական իշխանություն՝ ամենապատիվ Տ. Նդիշե պատրիարքից։

1961 թվականին ընտրվել է Կ. Պոլսում կրոնական ժողովի անդամ և ապա ատենապետ։

1957—1966 տարիներին Կ. Պոլսի հայկական եկեղեցիներում վարել է քարոզչական, իսկ հայկական դպրոցներում՝ ուսուցչական պաշտոններ։

Այժմ Տ. Շահան սրբազանը Կ. Պոլսում, բարոզչական իր աշխատանքների հետ, Գատրգյուղի հայոց Արամյան, Ֆերիգյուղի հայոց Միրամեթիյան վարժարաններում դասավանդում է կրոն, հայ եկեղեցու պատմություն և բարոյագիտություն:


1966 թվականի հունիսին Կ. Պոլսում սրբազան պատրիարք հոր նախագահության ներքո գումարված կրոնական ժողովը Տ. Շահան ծ. վարդապետին տվել է եպիսկոպոսության վկայություն:

1966 թվականի նոյեմբերի 13-ին, կիրակի օր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մ. Տաճարում եպիսկոպոս ձեռնադրեց և օ-

ծեց Տ. Շահան ծ. վրդ. Սվաճյանին:

Գերաշնորհ Տ. Շահան եպիսկոպոսը հավատավոր, պատրաստված, իր կոչման և հոգևոր պարտականություններին նվիրված հոգևորական է, սիրված ու գնահատված Կ. Պոլսի սրբազան պատրիարք հոր կողմից և իր հավատացյալ ժողովրդից:

Սրբազանը գտնվում է իր հոգևոր և իմացական ուժերի հասունության ու ծաղկման մեջ: Կ. Պոլսի պատրիարքական Աթոռը, Ստամբուլի հայ հավատացյալ համայնքներն ու ժողովուրդը նորապսակ սրբազանից սպասում են արդյունաշատ և բեղուն գործունեության:



ԳԵՐ. Տ. ԽՈՍՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԷՄԻՐՁԵՅԱՆ



Նորապսակ Տ. Խոսրով եպս. էմիրզեյանը, ավագանի անունով՝ Անդրանիկ, ծնվել է Կ. Պոլսում, 1932 թվականին, հավատացյալ և բարեպաշտ հայ ընտանիքի ծոցում: Հայրը՝ Կարապետ, ակնցի, մայրը՝ Մայրենի, արաբ-կիրցի:

Նախնական կրթությունն ստացել է Պեղ-ճյան վարժարանում, իսկ միջնակարգը՝ Բան-կալթիի Մխիթարյան վարժարանում:

1951 թվականի դեկտեմբերին Գումգաբուի մայր եկեղեցում սարկավագ է ձեռնադրվել հոգևույս Տ. Գարեգին պատրիարքից և մինչև 1953 թվականը հետևել է պատրիարքարանին առընթեր բացված Ընծայարանի դասընթաց-ներին: 1954 թվականին ուսուցչության է կոչվել Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքում:

1957 թվականին ընդունվում է Անթիլիա-սի դպրեվանքի Ընծայարանի բաժինը, և 1958 թվականին փայլուն հաջողությամբ ավար-տելով այն, կուսակրոն բահանա է ձեռ-

նադրվում Անթիլիասի Մայր Տաճարում՝ Գեր. Տ. Արտակ եպս. Մանուկյանի ձեռամբ: 1961 թվականին հոգևույս Տ. Զարեհ կաթո-ղիկոսից ստանում է մասնավոր վարդապե-տության աստիճան: 1958—1962 թթ. Անթի-լիասի վանքի մեջ վարում է մի շարք պա-տասխանատու պաշտոններ:

1962 թվականին վերադառնում է Կ. Պո-լիս և նշանակվում քարոզիչ եկեղեցիների, և ուսուցիչ՝ Ս. Խաչ դպրեվանքի: 1963 թվա-կանին ստանձնում է Ս. Խաչ դպրեվանքի փոխ-տեսչի պաշտոնը:

1965 թվականի հունիսին Բեյ-օղլուի Ս. Երրորդություն եկեղեցում ստանում է ծայ-րագույն վարդապետության իշխանություն՝ ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատ-րիարքից:

1966 թվականի հունիսին Կ. Պոլսում սրբազան պատրիարք հոր նախագահության ներքո գումարված կրոնական ժողովը Տ. Խոսրով ծ. վարդապետին տվել է եպիսկոպո-սացման ընծայագիր:

1966 թվականի նոյեմբերի 13-ին, կիրակի օր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մ. Տաճարում եպիսկոպոս է ձեռնադրում և օծում Տ. Խոսրով ծ. վարդապետին:

1966 թվականի նոյեմբերի 7-ին Տ. Խոս-րով ծ. վարդապետը գրավոր դիմում էր ներ-կայացրել Ամենայն Հայոց Վեհափառ Հայ-րապետին, Մ. Աթոռ Ս. էջմիածնի միաբան դառնալու համար, հրաժարվելով Անթիլիա-սի Կիլիկյան Աթոռի միաբանությունից: Ն. Ս. Օծությունը հարգելով եղած դիմումը, բա-րեհաճել էր տալ իր համաձայնությունը, ըն-դունելով նորապսակ սրբազանին միաբան Մայր Աթոռ Ս. էջմիածնի:

Գեր. Տ. Խոսրով եպիսկոպոսը գտնվում է իր հոգևուն և իմացական ուժերի հասունու-թյան և ծաղկման շրջանում: Սրբազանը հա-վատավոր, պատրաստված իր կոչման և իր պարտականություններին նվիրված հոգևո-րական է:

Կ. Պոլսի սրբազան պատրիարք հայրը, Ստամբուլի հայ հավատացյալ համայնե-րեն ու ժողովուրդը նորապսակ սրբազանից սպասում են արդյունաշատ և բեղուն գոր-ծունեություն, ի պայծառություն Հայաստան-յայց Եկեղեցու:



ԳԵՐ. Տ. ՇԱՀԱՆ ԵՎ ԳԵՐ. Տ. ԽՈՍՐՈՎ ԶՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՍՏԱՄԲՈՒԼ

1966 թվականի նոյեմբերի 18-ին, ուրբաթ օրը, նորապսակ գեր. Տ. Շահան և գեր. Տ. Խոսրով եպիսկոպոսները լավագույն տպավորություններով հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնում իրենց պաշտոնատեղին՝ Ստամբուլ:

Իրենց ճանապարհի վրա երկու սրբազանները այցելում են Լենինական, ուր հանդիսությամբ առաջնորդվում են Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ մուտք են գործում «Հրաշափառ»-ով: Երրակի թեմի առաջնորդ գեր. Տ. Մաշտոց եպիսկոպոսը, հանուն թեմի և հավատացյալների, ջերմորեն ողջունում է հյուր բարձրաստիճան հոգևորականների ժամանումը: Գեր. Տ. Շահան եպիսկոպոսը իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում սիրալիր ընդունելության և առաջնորդ սրբազան հոր բարիգալստյան խոսքերի համար, և դիմելով եկեղեցում ներկա հավատացյալների բազմությանը, թելադրում է «հավատարիմ մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և, քաղաքական ինչ տեսակ ըմբռնումների մեջ էլ ապրենք, պահե՛ք մեր հավատքը, հայրենական մեր ավանդությունները, ընտանեկան տոհմիկ սրբություններն ու բարքերը»:

Նոյեմբերի 19-ին, շաբաթ օրը, կեսօրին, երկու սրբազանները գնացքով մեկնում են Լենինականից և, երեքօրյա ճանապարհորդ-

դությունից հետո, նոյեմբերի 22-ին, երեքշաբթի, Աստծու օգնությամբ, խաղաղ ու ապահով ժամանում են Ստամբուլ՝ Հայդարբաշայի քաղաքային կայարանը, ուր դիմավորվում են պատրիարքական փոխանորդի, հոգևորական դասի, հայ մամուլի ներկայացուցիչների և հարազատների կողմից:

Այնուհետև, երկու սրբազանները ժամը 11.15-ին առաջնորդվում են Մայր Եկեղեցի և, ղգեստավորված, «Հրաշափառ»-ով, մուտք են գործում եկեղեցի: Արարողության ավարտին Տ. Շահան եպիսկոպոսը, խոսք առնելով, հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջուններն ու օրհնությունները՝ սրբազան պատրիարք հորը, հոգևորականությանը և բովանդակ ստամբուլահայությանը, ասելով.

«Սիրելի հոգևոր եղբայրներ և հավատացյալ ժողովուրդ: Փառք Ամենակալին, որ ողջ առողջ վերադարձուց մեզ մեր ծննդավայրը՝ Իսթամպուլ: Մեր հոգիները ձմված են եպիսկոպոսական ձեռնադրության և ձեր ցույց տված սիրո զգացումներուն համար. բայց այդ ձմվումը մեր մեջ զորացուցած է ծառայության և հավատարմության ոգին՝ հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Անոր արժանքներին Գահակալին և Անոր հոգևոր ղավակներուն ի Թուրքիա և ի սփյուռս աշխարհի:

Մենք ղավակները և ծառանգորդները մեր նախնյաց, հավատարիմ անոնց ծառայության և ղոհաբերության ոգիին, ամեն. Ս. պատ-

րիւրաբ հոր միջնորդութեամբ և բարի վկայութեամբ գացինք Մայր Աթոռ և ստացանք եպիսկոպոսական օծում շատ մաքուր ձեռք մը. թէև եպիսկոպոսական բարձրագույն աստիճաններ ստացանք, բայց կուզենք դարձալ համեստ մշակները ըլլալ մեր եկեղեցիին և մեր ծառայութեամբը և մաքուր ընթացքովը արդարացնել մեր վրա դրված հուսերը:

Տկար են մեր անձերը, բայց զորացած ենք հավատքով և հույսով և Վեհափառ Հայրապետի աղոթքով և սրբալույս մշուտնի օրհնութեամբ պիտի աշխատինք մեր սիրելի պատրիարք հոր հովանիին ներքև մեր կրօնականի պարտքը կատարել ի փառս Հայց. Եկեղեցւոյ Թուրքիոյ մեջ. մենք խոստացանք Ս. էջմիածնի Իջման Սեղանի առջև թե գրավոր և թե բերանացի հավատարիմ մնալ Հայց. Եկեղեցւոյ կարգին, կանոնին ավանդութեանց և օրենքներուն, մանավանդ չձեռնարել քահանաներ, որոնք անարժան են քահանայութեան սուրբ կոչումին: Մանավանդ ուխտեցինք հավատարիմ մնալ Մայր Աթոռ Ս. էջմիածնին և անոր կարևոր մեկ թեմը եղող Թուրքիոյ հայոց պատրիարքական Աթոռին:

Այցելեցինք Հայաստանի բոլոր վանքերն ու եկեղեցիները, գեղարվեստի ու մշակութի կեդրոնները, ուր ամեն կետի մեջ տեսանք հայ գեղապաշտ հոգիին նմուշները. գացինք Օշական, համբուրեցինք Մեծ Սուրբին և հայոց առաջին ուսուցչին գերեզմանը, իր շնորհքն կաթիլ մը խնդրեցինք: Ս. Մեսրոպ Մաշտոցի 36 ղենկոնները՝ հայ այբուբենը, որպես հոգևոր բանակը մեր ժողովուրդին, դարերու ընթացքին պահած է մեզ որպես հայ, որպես քաղաքակիրթ և հավատացյալ ժողովուրդ մը, և ուխտեցինք այդ գիրին և անկե ծնունդ առնող հայ գրականութեան հավատարիմ աշակերտները մնալ մինչև մեր մահը: Սիրո ողջույններ Վեհ. Հայրապետն և օրհնութեաններ Միածնաէջ Մայր Աթոռ Ս. էջմիածնն ձեռք բոլորիդ: Աստված անսասան պահե Հայց. Եկեղեցին և անոր Հովվապետը՝ Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգեն Ա Կաթողիկոսը:

Արարողութեան ավարտին արժ. Տ. Հարություն քահանան ողջունում է նորապսակ սրբազանների ժամանումը՝ ներկայացնելով նաև Ստամբուլի քահանայական դասի շնորհավորութեանները:

Այնուհետև Տ. Շահան և Տ. Խոսրով եպիսկոպոսները առաջնորդվում են եկեղեցական թափոքով պատրիարքարան, ուր նրանց սիրով ընդունում և ողջունում է ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքը՝ հայտնելով միաժամանակ իր և համայնքի գոհու-

նակութեանն ու ուրախութեանը, այս բարեբախտիկ առիթով և այն երջանիկ լավատեսութեամբ, որ Թուրքիայի հայոց պատրիարքական Աթոռը օժտվում է երկու երիտասարդ և իրենց կոչման բարձրութեան վրա գտնվող եպիսկոպոսներով: Սրբազան պատրիարքը իր ողջույնի և օրհնութեան խոսքի մեջ մաղթում է, որ երկու եպիսկոպոսների ձեռքում նրանց հովվական գավազանը միշտ դալար իր խոսքն ավարտում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հայտնելով իր և Թուրքիայի հայոց պատրիարքական Աթոռի, համայնքային վարչութեանց և բովանդակ ստամբուլահայության որդիական երախտադետ զգացմունքները եպիսկոպոսական ձեռնադրութեամբ այս շնորհք և հոգևոր ուրախութեամբ իրենց պատճառած լինելու համար, մաղթելով միաժամանակ, որ Աստված միշտ առողջութեան մեջ պահի Հայոց Հայրապետին ճշմարիտ երկայն աւուրս», լի արդյունավորութեամբ:

Տ. Շահան եպիսկոպոսը պատասխանելով սրբազան պատրիարք հոր խոսքերին, իր և Տ. Խոսրով եպիսկոպոսի անունից շնորհակալութեան է հայտնում Ն. Սրբազանության և ներկայացնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հոգևոր նվերը՝ սրբալույս մեծուն և երեք կոնդակներ, մին ուղղյալ ամեն. Տ. Շնորհք պատրիարքին՝ եպիսկոպոսական ձեռնադրութեան առիթով, մյուսները՝ տրված նորապսակ երկու եպիսկոպոսներին՝ որպես զգիր վկայութեան եպիսկոպոսական ձեռնադրութեան:

Սրբազան պատրիարք հայրը համբուրելով ընդունում է հայրապետական կոնդակներն ու սրբալույս մեծունը, կարգադրելով, որ կոնդակները հանդիսավորապես ընթերցվեն հառաջիկա հինգշաբթի՝ Ստամբուլի եկեղեցիներում:

Այնուհետև երկու սրբազանները պատրիարքարանում ընդունում են ներկաների շնորհավորութեանները:

Նոյեմբերի 25-ին, ուրբաթ օրը, Տ. Շահան և Տ. Խոսրով եպիսկոպոսները ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարք հոր, որպես պատվարժան կրօնական ժողովի նախագահի, ներկայացնում են իրենց տեղեկագիրը Մայր Աթոռ Ս. էջմիածնի ժամանելու, եպիսկոպոսական ձեռնադրութեան, իրենց այցելութեանների և այլ տպավորութեանների մասին: Քաղվածքաբար մեր ընթերցողներին ներկայացնում ենք որոշ հատվածներ այդ տեղեկագրից.

«Կիրակի, 30 հոկտեմբեր, ներկայացանք Վեհափառ Հայրապետին, հաղորդեցինք Ձեր Ամենապատվութեան սիրալիք ողջուններն ու

բարեմադրությունները: Վեհ. Կաթողիկոսը մեզ ընդունեց հայրական ջերմ սիրով ու խանդավառությամբ:

Վեհափառ Հայրապետը 13 նոյեմբեր կիրակի օրը որոշեց մեր եպիսկոպոսական ձեռնադրության թվականը, ինչ որ հեռագրավալ հաղորդեց Ձեր Ամենապատվության:

Մենք առիթ են օգտվելով, Վեհին պատրաստած ծրագիրով, սկսանք ուխտի երթալ կարգ մը վանքեր, ընդ որս Ս. Հոփսիսիմե, Ս. Գայիանե, Շողակաթ, Գեղարդ, Սեան և այլ եկեղեցիներ:

Սիրտերնիս լեցվեցավ արդար հպարտութեամբ, տեսնելով մեր նախնայաց ճարտարապետական նուրբ ճաշակը, և այդ հոյակապ կոթողներուն տուն տվող քրիստոնեական նորունկ հավատքը:

Այցելեցինք նաև գեղարվեստի և մշակույթի վայրեր, որոնք ևս ուրախացուցին մեզ, դրովհետև անկարելի էր անոնց մեջ շտեմել հայ ժողովուրդի ունեցած նվաճումները, որոնք անշուշտ արդյունք էին կանոնավոր և ծրագրված աշխատանքի:

Անտարակույս մեզի համար ամենեն խիթարականը եղավ տեսնել Ս. Էջմիածինը պայծառ ու ծաղկալ վիճակի մեջ: Տ. Տ. Վաղգեն Ա. Կաթողիկոս աստվածային գանձ մըն է մեր Ս. Եկեղեցիին համար: 10 տարիներու շրջանին նորին Սրբությունը կատարած գործեր, որոնք հրաշքի համագործ են: Իր սղնիական բնավորութեամբ, չափազանց արթի ու մաքուր նկարագիրով, քրիստոնեական սիրով, հավատքով և իմաստութեամբ եցուն իր վճիտ սիրտն ու ձեռքերը վերաշինած են Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Որպես Մայր Աթոռ և վանական հաստատություն, Ս. Էջմիածինը գտանք շատ կարևորություն: Միաբան եպիսկոպոսներն ու վարդապետները առանց բացառության աշակոտ և երեկո կմասնակցին ժամերգության: Իսկ ամեն կիրակի քարոզխոսություն տեղի կունենա: Թեև ամեն օր ժողովուրդը ներկա կըլլա եկեղեցի, սակայն կիրակի օրերը Մայր Տաճարը նեղ կուզա հաճախատացալ ժողովուրդին, որոնք կուզան տեղ առ դունդ, շմոռնալով նաև բերել հարուրներով մատաղցու ոշխար:

Մեր Ս. Էջմիածին բնակության շրջանին, ինքն ալ մասնակցեցանք առավոտ և երեկոյան ժամերգության: 6 նոյեմ. կիրակի օր, Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ, հաճախ ծ. վարդապետ պատարագեց և քառօրեց Երևանի Ս. Սարգիս առաջնորդախոս եկեղեցիին մեջ: Խուռն բազմությունը լեցուցած էր եկեղեցին և շրջակայքը: Քառօրի պահուն Շահան ծ. վարդապետ Ձեր Ամենապատվության և թրքահայ ժողովուր-

դին սիրո ողջունները հաղորդեց ներկաներուն: Խոսքով ծ. վարդապետն ալ պիտի պատարագեր Երևանի Ս. Զորավար եկեղեցիին մեջ, սակայն հիվանդության պատճառով չկարողացավ:

Այցելեցինք նաև Հոգևոր ձեռնարան, որ ունի չորս ավագ սարկավագ և երեսուն աշակերտներ, որոնք ևս անխափան կմասնակցին ամենօրյա ժամերգությանը:

13 նոյեմբեր 1966 կիրակի, Աստուծո ողորմութեամբ արժանի եղանք ընդունիլ եպիսկոպոսության սուրբ և բարձր աստիճանները ձեռամբ պատարագիչ Վեհափառ Հայրապետին:

Թե՛ ձեռնադրությունը և թե՛ ս. օծումը եղան կանոնական ու վեհաշուք արարողություն: Վեհափառ Կաթողիկոսը խոսեցավ հոյակապ քարոզ մը, որ մեր մտքեն անջնջելի պիտի մնա մինչև մեր մահը:

Հավարտ ս. պատարագի երկար տևեց աջահամբույրի արարողությունը և մենք հաղիվ կարողացանք ժամը 3-ին դուրս ելլել Մայր Տաճարեն:

Նույն օրը ժամը 3.30-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանին մեջ ի պատիվ մեզի տվավ ճաշկերույթ մը, որտեղ ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Գերագույն Խորհուրդի անդամները, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վեհամայրն ու կարգ մը հյուրեր:

Առաջին անգամ խոսեցավ Հոգևոր Գերագույն Խորհուրդի առնեսպետ գեր. Տ. Հակազուն արքեպիսկոպոս Աբրահամյան. հաջորդաբար խոսեցան՝ Հուսիկ և Վահան սրբազան եպիսկոպոսները, Հոգևոր Գերագույն Խորհուրդի անդամները, վարդապետ հայրերը, «Էջմիածին» ամսագրի խմբագրապետ պ. Արթուր Հատիտյանը:

Մենք ալ խոսելով բացատրեցինք մեր զգացումները, Ս. Էջմիածնի և անոր Գահակալին հանդեպ մեր ունեցած փարումն ու սերը: Ծնորհակալություն հայտնեցինք Ն. Ս. Օ. Տ. Տ. Վաղգեն Ա. Կաթողիկոսին, Ձեր Ամենապատվության, Հոգևոր Գերագույն Խորհուրդի անդամներուն և Մայր Աթոռի ժրջան միաբանության:

Վեհափառ Կաթողիկոսը ճաշի ընթացքին բաժակ բարձրացուց նաև Ձեր Ամենապատվության կենացը, որ պատճառ հանդիսացած էր այսօրվան հոգևոր ուրախության:

14 և 15 նոյեմբեր երկուշաբթի և երեքշաբթի օրերը մենք Ս. Էջմիածնի մեջ հաջորդաբար մատուցինք մեր եպիսկոպոսական անդրանիկ ուխտի ս. պատարագները:

Մեր Մայր Աթոռի մեջ բնակության շրջանը շատ հաճելի ու հանգիստ անցավ, շնոր-

հիվ Վեհափառ Հայրապետի հոգածության և խնամքին:

Ձենք կրնար մոռնալ նաև Ս. Էջմիածնի եպիսկոպոսներուն և վարդապետներուն ազնիվ ու եղբայրական շատ անկեղծ սերն ու գորովը, զորս ցույց տվին գրեթե ամեն վայրկյան:

Պաշտոնական հանդիպումներն ու ճաշերն զատ, Վեհափառ Հայրապետի հետ ունեցանք նաև անսլաշտոն հանդիպումներ և ճաշեր, որոնց ընթացքին, Նորին Սրբություն Վեհ. Կաթողիկոսը մանրամասն տեղեկություններ ուղեց թրքահայ եկեղեցական կյանքի մասին: Մասնավորաբար հետաքրքրվեցավ Ս. Խաչ դպրեվանքով, քահանա հայրերու կյանքով և անոնց ըրած աշխատանքներով: Չմոռցավ նաև դպրաց դաս-երգչախումբերը, զույգ որբանոցները և Ս. Փրկիչ հիվանդանոցը:

Վեհափառ Կաթողիկոսի առողջական վիճակը փառք Աստուծո շատ լավ է: Որպես կատարյալ և իմաստուն հովվապետ կվայելե տեղական կառավարության սերն ու վստահությունը և ամբողջ հայ աշխարհի անխառն համակրանքն ու հիացումը:

Մենք երկու նորաստեղծ եպիսկոպոսներս տեսանք մեր Վեհափառ Հայրապետի և մեր


հոգեծնողի անստղյուտ արժանիքները և ներշնչվեցանք Իմե, կրկնապատկվեցավ մեր սերն ու հավատարմությունը Իր Սրբության հանդեպ, և Իրմով ամբողջ հայ ժողովուրդի հանդեպ:

Կմաղթենք որ բարին Աստված երկա՛ր ու քաջառողջ կյանք պարգևե ազգին սիրեցյալ Հայրապետին:

18 նոյեմբեր 1966, ուրբաթ առտու, հետա-ռավոտյան ժամերգությանց, հրաժեշտ ատինք Նորին Վեհափառությունն, չափազանց հուզված ու արցունքոտ աչքերով համբուրեցինք Իր օրհնյալ Սուրբ Աչքը, և Ինք ալ հուզված համբուրեց մեր ճակատները, «Պահպանիչ» ու օրհնեց մեզ և բարի ճանապարհ մաղթեց մեզի: Այս առիթով հանձնեց նաև մեզի սրբալույս մյուտոն, որպես հոգևոր նվեր Ձեր Ամենապատվության և թրքահայ Իր հավատացյալ զավակներուն»:

Վստահ ենք, որ նորապսակ Տ. Շահան և Տ. Խոսրով եպիսկոպոսները իրենց ապագա եկեղեցանվեր և հոգևոր ծառայություններով կարգարացնեն Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր բարձր վստահու-թյունը:





ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

1966 թվականի վերջին օրն է, շաբաթ, դեկտեմբերի 31-ը:

Կազանդի գիշեր է:

Հոգևոր ձեմարանի հանդիսությանց սրահում, ամանորի ավանդական սեղանների շուրջ, համախմբվել են Մ. Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր հորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները, ձեմարանի դասախոսներն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ, գոհունակությամբ և երախտագիտությամբ լցված դեպի այս համադգային սուրբ հաստատությունը, որ Մ. Աթոռ Ս. Էջմիածինն է, ու դեպի նրա գահակալը:

Նրեկոյան ժամը 8-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը և օրհնում Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն ամանորական սեղանը: Ստեղծվում է սեղանների շուրջ նոր տարվա խորհրդավոր, մտերիմ, ընտանեկան մթնոլորտ:

Ն. Ս. Օծությունը ողջունելով բոլորի ներկայությունը, շնորհավորում է նրանց նոր տարին՝ հայրական բարեմաղթություններ անելով:

Այնուհետև սեղանը շնորհալիորեն ղեկավարում է Հոգևոր ձեմարանի տեսուչ Տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը:

Տեսուչ հայր սուրբը երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին՝ նրա օրհնաբեր ներկայության համար, և շնորհավորում նրա նոր տարին:

Մ. Տաճարի լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանը Հայաստանի անուշ գինիով լիքը առաջին բաժակն առաջարկում է խմել Մ. Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և նրա արժանավոր գահակալ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արեւատության համար:

Բոլոր ներկաները հոտնկայա բաժակ են բարձրացնում Մ. Աթոռի հավերժության և նրա գահակալի կենաց՝ սրտագին ծափերի հնչյունների տակ: Ուսանողական երգչախումբը խանդավառ ու տպավորիչ երգում է Մ. Աթոռի հիմներ՝ «Էջմիածին ի հօրէ» շարականը:

Իր աթոռից բարձրանում է Վեհափառ Հայրապետը ուրախ ու բարձր արամադրության ներքո, նոր տարվա խոհերով տարված և գալիք պայծառ օրերի լավատեսությամբ համակված, բաժակ է բարձրացնում մայր հայրենիքի, նրա բարեխնամ կառավարության և բովանդակ հայ ժողովրդի կենաց, բարեմաղ-

թելով, որ 1967 թվականը լինի բարօրության, բարգավաճման, խաղաղության տարի, հայրենաշեն, խոստովնալից նոր հեռանկարներով խանդավառ:

Ն. Ս. Օծուխյունը խոսում է հավատքով, հույսով Ս. Էջմիածնի և հայրենիքի պայծառ ապագայի մասին և իր խանդավառությունն ու ոգևորությունը փոխանցում ներկաներին:

Ամանորի սեղանների շուրջ ստեղծված խանդավառությունը կրկնապատկում են Հոգևոր ձեմարանի սաները՝ իրենց արտասանություններով և երգերով: Զեմարանի երգչախումբը կատարում է «Ուլ հայոց աշխարհ», «Խնջույքի երգ», «Քամանչա», «Ուստի կուգաս», «Մերիկ ջան», «Ջան հայրենիք», «Թագվոր բարով», «Առավոտյան բարի լույս» խմբերգերը:

Բ լսարանի ուսանող Աբգար Մարտիրոսյանը արտասանում է Մ. Մեծարենցի «Հյուղը», Բ դասարանի ուսանողներ Խ. Խաչատրյանը՝ Ա. Իսահակյանի «Մեր պատմիչներն ու մեր գուսանները», Տ. Սահակյանը՝ Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի», Բ դասարանցի Ժ. Սիմոնյանը՝ Ա. Պուշկինի «Ձմեռային ճանապարհ» ռուսերեն լեզվով: Ա լսարանցի Հ. Նալբանդյանը՝ Ա. Չոպանյանի «Մորս»՝ ֆրանսերեն լեզվով, Բ լսարանցի Վ. Ներսիսյանը՝ «Նոր տարին»՝ անգլերեն լեզվով: Ա լսարանի ուսանող Հովհաննես Գրվրգյանը ընթերցում է Տ. Ստեփանոս արքեպս. Հովակիմյանի մի գեղեցիկ բարոյը՝ «Քալեցեք, զավակներս, քալեցեք», և Ա. Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Ա. Բաբաջանյանի «Էքսպրոմտ»-ը, Բ դասարանի աշակերտ Ս. Նդիազարյանը արտասանելուց հետո Հ. Շիրազի «Կտակ»-ը, կարդում է իր ինքնագիր հետևյալ բանաստեղծությունը՝ «Հայաստան» վերնագրված:

Հաճախ պապիս ճակատը որպես խաչբար
համբուրել,
Քարե բույր եմ զգացել իմ կարոտած
շուրթերին:

Իսկ երբ գգվել խենթի պես խաչբարերդ,
կիրճերդ,
Պատմությունդ եմ գուրգուրել, որպես
քարե մի կնճիռ...
Հասկացել եմ: Ո՛չ թե քար, ո՛չ թե խաչբարն
իմ պապի,

Այլ բո դարե՛ր մաքառած սեզ ճակատն եմ
համբուրել:

Բ լսարանի ուսանող Սասուն Վարդանյանը կարդում է հետևյալ «Ուղերձ շնորհավորանքի» ձոնը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին՝ ի դիմաց Հոգևոր ձեմարանի ուսանողության:

«Մեր ժողովրդի, եկեղեցու և Հոգևոր ձեմարանի համար անմիտ վատնումի տարի չի եղել: Գուցե երազել ենք շատ, բայց հասել ենք քչին: Բայց բանի որ հասել ենք, դուրս եկանք, չենք ապրել նահանջ, արիւն ենք մի բան,— նշանակում է ընդունակ ենք լավին ձգտելու, լավին հասնելու, եթե ոչ լեռներ, գոնե բլուրներ նվաճելու:

Մենք՝ Հոգևոր ձեմարանի ուսանողներս, վստահեցնում ենք Ձեզ, Վեհափառ Տեմ, որ մեր վերելքի ճամփին մենք կլինենք համառ, հաստատակամ: Չենք ընկճվի դժվարություններից: Կանգ չենք առնի ճամփի կեսին: Կձգտենք միշտ դեպի գագաթ, միշտ դեպի բարձունք: Զէ՛ որ մեր ժողովրդի և մեր եկեղեցու պատմությունը դաշտավայրերի, մարգագետինների չէ նման, հարթ, հավասար, այլ բլրաշատ լեռնաստանի (ինչպիսին մեկ երկիրն է): Որքան որ շատ են անկումների ձորերը, որքան խորն են պարտությունների վիհերը, նույնքան էլ առատ են հաղթանակների, սխրանքների բարձունքները:

Մենք՝ Հոգևոր ձեմարանի ուսանողներս, լավ սովորելով, մաքուր վարք ու բարքով և մեր հաստատակամությամբ ենք ցանկանում շնորհավորել Ձեր Նոր տարին, բանդի մենք բաջ գիտենք, որ մեր եկեղեցու և մեր ժողովրդի բարգավաճումը հայոց հայրապետի գերագույն ուրախությունն է:

Վեհափառ Տեմ, թույլ տվեք Հոգևոր ձեմարանի ուսանողության կողմից Ձեզ շնորհակալություն հայտնելու՝ Ձեր անսպառ հոգատարության համար, որով շրջապատել եք Հոգևոր ձեմարանը, և շնորհավորելով Ձեր Նոր տարին, մաղթել Ձեզ տարիների բեղուն գործունեություն...»:

Հանդիսության ընթացքում նոր տարվա խոհերով համակված, հուզիչ, ջերմ ելույթներ են ունենում Տ. Հայկազուն սրբազանը, Տ. Ներսես Ժ. վարդապետը, հյուրաբար ներկա գտնվող երաժշտագետ Միհրան Թումա-

անոր, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Կատիտյանը, դասախոս Պարգև Շահբաղ-անը:

Ընդհանուր խանդավառության և ուրախու-յան մեջ առհասարակ հայր սուրբը գրական, սրա-խո ու դիպուկ «կաղանդչեքներ» է բաժանում հարանության անդամներին, ուսանողու-յանը՝ հաջող բնութագրումներով:

Մի պահ հանդուժ են դաժիճի լույսերը: Դոմերի դժգույն ու պլպլացող լույսի տակ, հղմորեն ու վեհ, հնչում է ծննդյան տաղը՝ թուրք գիշեր»-ը, Փրկչի ծննդյան խորհուրդը աշխելով՝ ներկաներին:


Տեսուչ վարդապետի հրավերով Վեհափառ սյրապետն էր օրհնությունն ու նոր տարվա առաջամյն է տալիս միաբանությանը, ուսա-ղողությանը, պաշտոնեությունը՝ է՛լ ավելի ստաճությամբ, նվիրումով, հավատքով ու անդամավառությամբ աշխատելու, գլուխ բե-


րելու համար Մ. Աթոռի առաջ կանգնած ե-կեղեցական, հայրենանվեր գործերի, ազգա-յին-եկեղեցական ծրագրերի իրագործումը, հոգեպես և իմացապես աճելու, վերանորոգ-վելու, լավագույնս ծառայելու համար Աստ-ծուն, եկեղեցուն, հայրենիքին և ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը էր եռանդով, իրավ լավատեսությամբ խանդավառում է բոլորին՝ Մայր Աթոռի ապագա եկեղեցական, հայրե-նանվեր առաքելության նկատմամբ:

Ն. Ս. Օծությունը նոր տարվա իր պատգա-մը ավարտում է՝ բովանդակ աշխարհում կա-յուն և մնայուն խաղաղության հաղթանակի բարեմաղթություններով:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով, ավարտվում է նոր տարվան նվիր-ված հանդիսությունը Հոգևոր Ընթացքի հարկի տակ:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՍԱՄՈՒԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ*

Կ Ա Հ Ի Ր Ե

Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա-ը ստացած է Ձեր 31 հոկտեմբեր և 17 նոյեմբեր 1966 թվակիր նամակները, որով Ձերդ Սրբազնությունը կհրավիրե Հայ Եկեղեցին մասնակցելու արևելյան եկեղեցիներու ներկայացուցիչներու հանդիպումին, որ տեղի պիտի ունենա Ամսթի-լիասի մեջ 29 հունվար—10 փետրվար 1967-ին:

Նորին Սրբությունը զգացված է Ձեր եղբայրական բարի մտածումներու համար Հայ Եկեղեցւոյ և Մար Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, և այսու կհղե Ձեզ մեր միջոցով իր հայրական օրհնությունը: Ամենայն Հայոց Հայրապետը բարձր կգնահատե այն եկեղեցաշէն շարժումը, որ սկիզբ առավ հալստքի պաշտպան Նորին Վեհափառություն Հայր Սեւասիէ կայսեր նախաձեռնությամբ և օգնությամբ, որուն նպատակն է՝ ամրապնդել կատարյալ միությունը արևելյան ոչ քաղկեդոնական եկեղեցիներու միջև:

Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսը իրապէս կգնահատե Ադիս-Աբեբայի 1965 թվականի արևելյան եկեղեցիներու պետերու հանդիպումով սկիզբ առած շարժումը, խորապէս ցավելով անշուշտ, թե ինքը՝ Նորին Սրբությունը, իբրև Հայ Եկեղեցւոյ գերագույն պետ, պաշտոնապէս չկարողացավ մասնակցիլ այդ ժողովին Ձեզի ծանոթ պատճառներով:

Նորին Սրբությունը 1964-ին և 1965-ին, Ադիս-Աբեբայի ժողովէն առաջ և հետո, բազմաթիվ անգամներ հատուկ գրություններով բացատրած է հանգամանորեն և ներկայացուցած հստակ կերպով պայմանները, որով կրնա մասնակցիլ Հայ Եկեղեցին արևելյան եկեղեցիներու շարժումին: Այդ նպատակով գրված Վազգեն Ա Կաթողիկոսի վերջին նամակը, 24 դեկտեմբեր 1965-ին, ուղարկվեց Ադիս-Աբեբա և այդ ճանապարհով նաև մեր մյուս քույր եկեղեցիներուն:

* Սույն նամակը ուղղված է դպտի քույր եկեղեցու ներկայացուցիչ գեր. Տ. Սամվել եպիսկոպոսին, որը նախագահն է՝ արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների՝ Ադիս-Աբեբայի ժողովում ընտրված միջեկեղեցական մնայուն հանձնաժողովի:

Մենք լիազորված ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմն հայտնել Ձեզի, թե ներկա պայմաններու մեջ Հայ Եկեղեցին չի կրնար մասնակցիլ Անթիքի մեջ Ձեր կոմիտեի կազմակերպած միջեկեղեցական հանդիպումին: Պարզ է անշուշտ, թե Կիլիկյան Աթոռի մասնակցությունը այդ հանդիպումին իրապես և գործնապես չի նշանակեր Հայ Եկեղեցվո մասնակցությունը:

Մենք կմնանք աղոթող, որ Տերը Իր հովանին տարածյալ պահե մեր եկեղեցիներու և մեր հավատացյալ ժողովուրդներու վրա և լուսավորե մեր աշխատանքի ճանապարհը:

Հաճեցեք ընդունիլ մեր եղբայրական սիրո ջերմագին բարեմաղթությունները Ձեր սուրբ գործոց հաջողության համար:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի

14 դեկտեմբերի 1966 թ.

Մայր Աթոռ

(Ազնուհետև նույն հարցի մասին, Մայր Աթոռի դիվանի կողմից, հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը տրվեց նվիրապետական Աթոռներին, թեմերին և հայ մամուլին):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի անունից Ս. Էջմիածնի Մայր Աթոռիս դիվանը լիազորված է հայտարարելու, թե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին չի մասնակցում արևելյան ուղղափառ քույր եկեղեցիների մշտական կոմիտեի կողմից հրավիրված հանդիպումին, որ տեղի է ունենալու Անթիքի մեջ՝ 1967 թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 10-ը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՐ

17 դեկտեմբերի 1966 թ.





ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԲԵԹՂԵՀԵՄԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ

Լեռների լանջում—քարայրի խորքում
Շողում է կրակ երկնային սիրո
Կայծերով վառված մի նորոգ կյանքի.
Շողում է կրակ—այնտեղ հավիտյան
Լույսը չի հանգչում,
Հույսը չի խաբվում:

Նե՛րս մտիր այրը—հովիվ ու գառներ,
Գառների մսուր—անշուք խանձարուր,
Ահա Մանկիկը անմեղ ու անքիծ
Ժպտում է պայծառ—սեր է մեզ շնչում.
Ահա՛ լալիս է—այդ նրա սիրտն է,
Որ կյանքի շեմքից, ծաղիկ օրերից,
Մարդկանց վշտերի համար ճմլվում,
Մարդկանց մեղքերին ներումն աղերսում:

Անկեղծ պղծումով, մաքուր արցունքով
Խոնարհվի՛ր, ընկե՛ր, համբուրիր նրան,—
Նա քեզ կներե, նա քեզ հույս կտա
Եվ դու պորացած կրքի քո խաչը,—
Էլ շղթա չըկա,
Էլ արյուն չկա:

1893 թ.





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Նոյեմբերի 27-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Արսեն վրդ. Բերեքյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց յառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձի առթիվ:

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի.—Հոգ. Տ. Դարեկ վրդ. Շաքարյանը հովվական աչքերով մեկնեց Բաբու և Կիրովաբադ: Հայրուրբը Մայր Աթոռ վերադարձավ դեկտեմբերի 14-ին:

Դեկտեմբերի 3-ին, շաբաթ.—«Տօն սրբոց ատաբեկոցն և առաջին կուսաւորչացն մերոց Քաղէոսի և Բարթողիմէոսի»: Մայր Տաճարում օրվա տոնի առիթով պատարագեց և ջարդեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, «Առաքեալը Աստուծոյ, սինք հաւատոյ յաթողիկէ եկեղեցւոյ» բնաբանով:

Ժամը 12-ին Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձին:

Հանդիսության բացումը կատարեց Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգ. Տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանը՝ ներածական խոսքով:

Օրվա տոնի ազգային, հայրենասիրական նշանակության մասին զեկուցեց Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Գր. Գյուլյանը: Հանդիսությանը իրենց շնորհալի մասնակցությունը բերեցին Ճեմարանի ու-

սանողները՝ խմբերգերով, մեներգերով և արտասանություններով:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

Դեկտեմբերի 4-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց դեր. Տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 11-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հովհաննես քահ. Մարուքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 18-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հակոբ քահ. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 20-ին, երեքշաբթի.—Այսօր ապաքինված և կաղզուրված Դամասկոս մեկնեց թեմի առաջնորդ դեր. Տ. Շավարշ եպս. Գույումճյանը, որը ավելի քան մեկ ամիս բուժվում էր հայրենիքում:

Դեկտեմբերի 25-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Մկրտիչ ավագ քահ. Մկրտչյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի.— «Տօն սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»:

Մայր Տաճարում Ս. Ստեփանոսի խորանի վրա պատարագեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սեյադարյանը և քարոզեց «մկրտեցար արեամբդ քով սրբով, առաջին վկա Քրիստոսի սուրբ Ստեփաննոս նախասարկավագ» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի սարկավագները, Լուսարարայետ գեր. Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի առաջնորդությամբ, ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունն ստանալու իրենց տոնի առիթով:

Ն. Ս. Օծությունը, շնորհավորելով Մայր Աթոռի երիտասարդ միաբանների տոնը, թելադրեց նրանց լեցվել Ստեփանոսի հավատքով ու նախանձախնդրությամբ և նվիրվել Հայ Եկեղեցու սպասավորության սուրբ գործին՝ անձանձրաբեր և գիտակից ընծայաբերումով:

Կեսօրից հետո, ժամը 1-ին, Հոգևոր ձեմարանի հարկի տակ տեղի ունեցավ երաժշտական համերգ, որին իրենց շնորհալի մասնակցությունն էին բերել քույր և եղբայր արվեստասեր Սվաճյանները, Հրաչյան՝ ջութակահար, Սիրվարդը՝ դաշնամուրի ընկերակցությամբ:

Մրազորում կային՝ Բախ (պարտիա № 1), Բրամս (սոնատ № 1), Բեթհովեն (ջութակի կոնցերտի առաջին մաս), Սկոտ (Լոտասի երկրում) և Կոմիտաս վարդապետ («Միրանի ծառ», «Կաբալի երգ», «Կոունկ»):

Համերգի վերջում Հոգևոր ձեմարանի տեսուչ հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը շնորհակալություն հայտնեց հանուն բոլոր ներկաների՝ այս գեղեցիկ երաժշտական ծրագրի կատարման առիթով՝ նորանոր հաջողություններ մաղթելով քույր և եղբայր Սվաճյաններին, նրանց երաժշտական կատարելագործման խոստովանելից ճանապարհի վրա:

1 9 6 7

Հունվարի 3-ին, երեքշաբթի.— Հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերադարյանը հովվական այցելությամբ մեկնեց Բաբու, Ռոստով և Զալդր: Հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 22-ին:



Հունվարի 5-ին, հինգշաբթի.— «Ճրագալույց Մենդեան և Յայանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր Աթոռում, ավանդական հանդիսությունը նշվեց Ճրագալույցի տոնը:

Մայր Տաճարում, երեկոյան համերգության ժամանակ, Վեհափառ Հայրապետը կարգաց օրվա աստվածաշնչական ընթերցումները: Հոգևոր ձեմարանի սաները ընթերցեցին «Դանիէլ»-ի գիրքը: Ճրագալույցի պատարագը մատուցեց հոգ. Տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով և «Խորհուրդ մեծ» շարականի հնչյունների ներքո առաջնորդվեց Վեհաբան, ուր օրհնեց միաբանության անդամներին:



Հունվարի 7-ին, շաբաթ.— Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Խորեն վրդ. Էլշուճյանը: Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»:



Հունվարի 8-ին, կիրակի.— Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» բնաբանով:



Հունվարի 9-ին, երկուշաբթի.— Նոր տարվա և Ս. Մենդեան տոների արձակուրդներից հետո Հոգևոր ձեմարանում վերականգնեցին դասավանդությունները:



Հունվարի 13-ին, ուրբաթ.— «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Արսեն վրդ. Բերբերյանը:



Հունվարի 14-ին, շաբաթ.— «Տօն Մենդեան սրբոյն Յովհաննու Կարապետին»:

Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հովհաննես քահ. Մարությանը՝ Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա:



Հունվարի 15-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և քարոզեց «Երկնաքաղաքացին Յովհաննես մեծն ի ծնունդս կանանց» բնագանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Հունվարի 16-ին, երկուշաբթի.—Հոգ. Տ. Կրսեն վրդ. Բերբերյանը, հովվական այցելությամբ, մեկնեց Օրջոնիկիձե: Հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 21-ին:

Նույն օրը, Մենդյան տոնի առիթով, Արշավիր մեկնեց բարեշնորհ Հովհաննես սարկավազ Հակոբյանը և վերադարձավ Մայր Աթոռ հունվարի 22-ին:



Հունվարի 22-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Մկրտիչ ավագ րա՜հ. Մկրտչյանը:




Հունվարի 23-ին, երկուշաբթի.—Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1966—1967 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք կտեեն մինչև փետրվարի 1-ը:



Հունվարի 29-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց գեր. Տ. Վահան եպս. Տերյանը և քարոզեց «Ո՛չ երբեք այնպես խօսեցաւ մարդ որպէս այրն այն» բնաբանով (Հովհ. է. 46):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ՈՂՈՂՈՒՄ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ՎԱՆՔՈՒՄ

Անցյալ նոյեմբերի 4-ին ջրհեղեղը հարվածում է ամբողջ Իտալիան՝ մասնավորաբար Ֆլորենցիա և Վենետիկ քաղաքները: Աննախընթաց մակընթացությունը, միացած հարավ-արևելյան կատաղի քամու հետ, խուժում է Վենետիկի վրա, իսկ հորդահոս անձրևը իսկական ջրհեղեղի վտանգ է ստեղծում նաև Ս. Ղազար վանքի համար:

Հակառակ բոլոր նախազգուշական միջոցառումներին, ջուրը խուժում է վանք՝ մշակութային և նյութական մեծ կորուստներ պատճառելով:

Ողողումների հետևանքով լուրջ վնասներ է կրում նաև Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ծանրորեն մտահոգված Ս. Ղազարի ողողումների համար՝ Մայր Աթոռում ստացված հաղորդումներից, նոյեմբերի 21 թվակիր հետևյալ ցավակցական հեռագիրն է ուղարկում Վենետիկի Մխիթարյան Ուխտի աբբահայր գերապայծառ հ. Հմայակ վրդ. Կետիկյանին.

«Յավով կլսեմք Իտալիո աղետի մասին: Վշտակցաբար աղաթող եմք, որ Աստված ողորմի և օգնական ըլլա երկրին ու ժողովրդին: Նղբայրաբար մտահոգ եմք Ձեր և ձեր վանքի վիճակով: Ինչո՞վ կբճանաք ձեզի օգտակար ըլլալ: Կսպասեմք ձեզմե լուրերու: Ձեզի ուժ և կոռով և խաղաղություն»:

Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար հ. Ներսես վրդ. Տեր-Ներսիսյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղած իր 1966 թվականի դեկտեմբեր 15 թվակիր նամակում, հանուն գերապայծառ աբբահոր և միաբանության, սրտագին շնորհակալություն է հայտնում Ս. Ղազար ուղարկված

ցավակցական հեռագրի համար, և ուր նկարագրվում էր նաև աղետի տխուր պատկերը հետևյալ մանրամասներով.

«Վեհափառ Տեր,

Գերապայծառ աբբահայրը ինձի հանձնեց առանձնաբար Ձերդ Վեհափառության ուղարկել նկարագրական մեր նոյեմբեր 4-ի աղետին, զոր կզնեմ ներփակի:

Իրապես և խորապես հուզվեցանք Ձեր վշտակցական հեռագրին վրա, որ եկավ հայրական տաք շունչով մը ամոքելու մեր ցավերը:

Վանքի հասարակությունը տեղեկացավ պարունակության՝ կեսօրվան ճաշին ետք: Հաջորդ օրը հեռագիրը կարդացվեցավ նաև Մուրադ-Ռաֆայելյան ճաշարանին մեջ, հոտնկայս:

Թարգմանությունը հանձնեցի Վենետիկի երկու թերթերուն, քաղաքական ու կրոնական, որոնք գեղեցիկ խորհրդածություններով հրատարակեցին: Ամեն կողմ հուզում, գնահատանք:

Քանի մը օրեն կհուսամ առանձին ծրարով ուղարկել նաև օրինակներ իտալական այն թերթերին, որոնց մեջ լույս տեսավ Ձեր հեռագիրը:

Հուզումս չի թողուր որ երկարեմ գրությունս:

Խոնարհ ու անկեղծ մեծարանքով կհամբուրեմ Ձեր Սուրբ Աջը, հայցելով Ձեր աստվածահաճո աղոթքն և օրհնությունը:

«Նոյեմբեր 4-ի ջրհեղեղը, որ հարվածեց զրեթե բոլոր Իտալիան, մասնավորապես Ֆլորենցիա ու Վենետիկ քաղաքները, չխնայեց նաև Ս. Ղազարին, հակառակ որ անոր պարիսպները մնացին անխորտակելի:

Աննախընթաց մակընթացություն մը, որուն նմանը չի հիշատակվիր հաղար տարիս ի վեր, միացած հարավ-արեւելյան կատարի բամբին (120 կիլոմետր ժամանակ արագության), խուժեց հանկարծ վենետիկի խաղաղ լճակին վրա: Հորդահոս անձրեր կուտար իսկական ջրհեղեղի մը տխուր պատկերը:

Մովի ջուրը բարձրացած էր մեկ ու կես մետրէն ավելի, սովորական աստիճանէն վեր: Վանքի մեծ ու փոքր նավամատուցներն և շրջապատի այլ հարակից մուտքերէն անգամ (չպատահած եղելություն) ջուրը խուժեց ներս: մայր դռան առջև հասավ մինչև 1,13 մ բարձրության: Հակառակ որ ստորին հարկի սրահները թեթև դռիվներ մը ունին, հորդահոս ջուրը մտնելով հյուրանոցէն, առաջացավ մինչև խոհանոց, ճաշարան, եկեղեցի, շտեմարաններ, աշխատավորներու սենյակներ, նորընծայարան, ներքին մատուռ:

Ըստ վանքի ժամանակագրության, 1916-ի նոյեմբեր 21-ին տեղի ունեցած է մեծ մակընթացություն մը և ջուրը սեղանատան մեջ հասած է մինչև 0,38 մ բարձրության. այս անգամ սակայն բարձրացավ մինչև 0,78 մ: Իսկ եկեղեցին, ջուրը անցնելով ատեանէն, մտավ դաս ու բարձրացավ մինչև ավագ բնի երրորդ աստիճանը (0,44 մ դասին մեջ): Թե 1916-ի, թե 1935-ի և թե 1951-ի մակընթացություններուն, ջուրը չէր մտած դաս:

Վանքի քառանկյունին ներքին պարտեզը, արտաքին պարտեզին մեծ մասը և այգին երկար ժամեր մնացին աղի ջուրերու տակ. սովորական պայմաններուն, ջուրը վեց ժամվան ընթացքին կսկսեք քաշվիլ. այս անգամ համառորեն մնաց 12 ժամէն ավելի: Իմացանք, որ վենետիկի լճակին պաշտպան հսկա թումերն ալ խորտակվեցին ծովի ահեղ ալիքներուն դիմաց:

Ս. Ղազարի վարի հարկերէն մասնավորաբար վնասվեցան սեղանատան և եկեղեցւոյ ընկույզն որմնատախտակները, ներքնահարկի կահ-կարասիները. իսկ մարմարե սլոններուն վրա իջավ նավթային թանձր մրուր մը: Զերմաբաշխի կեղրոնները, իրենց էլեկտրական սարքերով ու բոցահան մեքենաներով սուզվեցան ջուրերու տակ: Դադրեցավ էլեկտրություն ու հեռաձայն:

Մինչ մեկ կողմէն ջուրերը կբարձրանային ահեղ թափով, ներսը պայքարը սկսած էր փրկելու համար կարելին. միաբաններ ու աշակերտներ կբարձրացնէին և ապա քիչ մըն ալ ավելի կբարձրացնէին ամեն թանկագին առարկա, գիրք ու լրագիր:

Հակառակ ամեն նախազգուշության, ջուրը մտավ նաև տպարան, որ թեև ներքնահարկի վրա, սակայն հինգ աստիճան ավելի բարձր է մյուս հարկաբաժիններէն: Տպագրական բաղմամբով մեքենաներու ոտքերը մնացին աղի ջուրին տակ:

Երիտասարդ վարդապետներն հանդգնադուշներ բռնկոտն իջան տպարան, գրեթէ լողալով, փրկելու համար այնտեղէն ալ կաշալին. ի մասնավորի, հայկական մանրանկարչության նորատիպ պրակները. և ... հաջողեցան: Դժբախտաբար անկարելի եղավ պարպել գրավաճառանոցի հսկա շտեմարանը, ուր ջուրը շուրջ կես մետր բարձրությամբ մտավ: Բավական թիվով հին ու նոր տպագրություններ թաղվեցան ջուրերու տակ, խլելով արցունքը բոլոր միաբաններուն:

Անգին, քամին պարտեզին մեջ կտապալեր հսկա ու գեղեցիկ ծառեր. բայց այդ այնքան չէր մտահոգեր մեզ, որքան մշակութային գանձերը:

Բարեբախտաբար գրադարանի, ձեռագրատան, դիվանի, լրագրային հավաքածոներու ձոխ բաժինները կգտնվէին վերին հարկերուն մեջ, ուր ջուրը չէր կրնար հասնիլ: Որեւէ վտանգ չպատահեցավ այդ գանձերուն: Սակայն ստորին հարդին մեջ բավական վնասվեցան լրագրային հավաքածոներու երկրորդ օրինակները:

Այս բոլորը հաղիվ քանի մը ժամվան ընթացքին: Առավոտյան ժամը 9 կանցներ, երբ զգացինք ջուրերուն խուժումը. կեսօրին արդեն ամեն ինչ ջուրին տակ էր սուզված:

Վարդապետներն ու աշակերտները, ջուրերու դեմ պայքարելիս ետք, հուսկ քաշվելով, հացը նախորդ օրէն եկած էր ու զոնն ատիկա չպակսեցավ: Իսկ մնացած ուտելիքները վարի մասանէն վեր փոխադրելու համար մինչև իսկ զվարճալի հնարքներու հարկ եղավ դիմել:

Ու մթնեց. իջավ տխուր երեկոն սառ ջուրերուն վրա. վառեցան մոմերը. բայց ջուրը կմնար համառորեն: Գիշերուն ժամը տասի առեկներն էր, երբ նշմարեցին, թե ջուրը վերջապես սկսած է քաշվիլ: Արդեն կմարելին մոմերն ալ. կվառեր լոկ հուշար: Հովը դադրած էր. աստղազարդ գիշեր մըն էր:

Առավոտուն դարձալ խոնավ օդը պատեր էր. ջուրերը բոլորովին քաշված էին, ձգելով սակայն ջարդի ու թալանի տխուր տպավորություն: Եվ ահա դարձալ գործի. մաքրելու, սրբելու և տեղավորելու ամեն ինչ. կարգ մը բաներ ալ նետելու առ հավետ:

Օրէն կանցնին. բայց հետզհետե ավելի զգալի կդառնա ջուրին գործած հսկա ավերը: Հեռաձայնը կսկսի բանիլ. և ահա տխուր լուրեր կբարդվին:

ինչպես ծանոթ է, վանքը ունի Վենետիկի նահանգին մեջ հողային կալվածներ, գյուղացիներու հանձնված՝ մշակութային համար: Գրեթե բոլոր այդ հողամասերը՝ այգիներ, մրգաստաններ, բանջարանոցներ, մնացած էին ջուրերու և տիղմի տակ: Աղետին արդյունքը դգալի պիտի ըլլա մինչև մեկ կամ երկու տարի, ըստ մասնագետներու, իսկ կորուստը բանի մը տասնյակ միլիոններու կրնա հասնիլ:

Դժբախտաբար աղետին չհաջողեցին չոր ու արևոտ օրեր, գոնե մասամբ դարմանելու համար վնասները: Տպարանը շաբաթներով մնաց ամուլ, մեքենաներու նորոգութայն գործով լոկ զբաղած: Բավական մեծ է իսկապես կորուստը հնատիպ մատյաններու, Բազմավեպներու հին շարքերուն մեջ. այժմ, աղետին մեկ ու կես ամիս ետք, տակավին չենք հաջողած փրկել ամեն բան. վանքի վերին նրբանցքները, վառարաններու մոտ դեղերով շարված են այդ բոլորը՝ թերթ առ թերթ, պրակ առ պրակ, շորցնելու համար:

Ոչ մեկ վնաս վարդապետներուն, աշակերտներուն և աշխատավորներուն:

Բավական վնաս ունեցավ նաև Մուրադ-Ռափայելյան վարժարանը, հոն ջուրը ներս խոժած է ստորին հարկի պատուհաններին իսկ, միասին բերելով քաղաքի ստորախավերեն հավաքած նավթը և սեւացնելով պատերը: Ամբողջ պարտեզը մնացած է ջուրի տակ: Դպրոցը զրկված մնացած է էլեկտրական լույսի ամբողջ վեց օր: Բարեբախտաբար խոհանոցը բարձր ըլլալով, վնաս չէ կրած. կերակուրը անպակաս է եղած. հացը կարելի եղած է ճարել մերձավոր Մեսթրի քաղաքին: Դասարաններն ալ բոլոր երկրորդ հարկի վրա ըլլալով, չեն վնասված. սակայն վարի հարկը ամբողջ կեղտոտեցավ: Վարժարանին նորոգությունները տակավին չէին ավարտած, ու փճացած են շինութայն վերաբերյալ կարգ մը նախանյութեր, վնասված


և ստորին բոլոր սենյակները, մանավանդ հեռատեսիլի և շարժանկարի սրահ, լվացքի մեքենաները, ջերմութայն կեղրոնը, դպրոցական գրադարանը, հանդերձատունը և այլ հարակից մասեր: Ոչ մեկ վնաս անձի: Դասերը կանոնավորաբար շարունակված են նույնիսկ մոմի լույսով:

Վնասված է նաև քաղաքին մեջ գտնվող Ս. Խաչ հայոց եկեղեցին. ջուրը փճացուցած է գորգեր, ընկուզի հին ու արժեքավոր նստարաններ: Ու թողած է եկեղեցին ավերի վիճակին մեջ: Վենետիկցի բարեպաշտ ընտանիք մը, հաջորդ առտու կանուխ փութացած է մաքրելու և կարգ ու կանոն դնելու հայոց եկեղեցվուն մեջ, օգնելով հոգաբարձու մեր վարդապետին»:

Վեհափառ Հայրապետը, այլ հաղորդումների և նաև հ. Ներսես վարդապետի պաշտոնական նամակի նկարագրական տպավորություն տակ, թեթևացնելու համար գեթ մասամբ աղետի հետևանքները, Մայր Աթոռի անունից մեկ միլիոն իտալական լիրա (շուրջ 1600 ամերիկյան դոլար) նվիրատվություն է կատարում Ս. Ղազարի նորոգումների հաշվին գերապայծառ արբահոր անունով՝ հունվարի 5-ին Վենետիկ ուղարկելով հետևյալ հեռագիրը.

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն հաճեցե՛ք ընդունիլ մեկ միլիոն իտալական լիրա՝ Ս. Ղազարի նորոգումներու հաշվին: Աղոթող եմք, որ ջրհեղեղի պատճառած ավերները դարմանվին: Աստված անշարժ ու անփոքր պանեծեք լույսի տունը, որն արժանի է բոլոր հայերու գուրգուրանքին»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր մաղթանքները միացնում է Հայոց Հայրապետին բարեմաղթությանց, որպեսզի շուտով դարմանվեն աղետի հետևանքները, և Ս. Ղազարը վերստին շարունակի իր շնորհակալ ծառայությունը ի նպաստ մեր մշակույթին և մեր ժողովրդին:





ԼՈՒՐԵՐ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Վեհափառ Հայրապետի 1966 հոկտեմբերի 25 թվակիր կոնգակով, գեր. Տ. Գարեգին նորապետի եպիսկոպոսը նշանակվում է Հնդկաստանի և Հնոավոր Արեւելքի հայրապետական պատվիրակի փոխանորդ:

Հոկտեմբերի 27-ին սրբազանը Մ. Աթոռից մեկնում է իր պաշտոնատեղին՝ Սիդնեյ, տանելով իր հետ Հայոց Հայրապետի սիրո ողջույնը ու բարի մաղթանքները՝ հեռավոր Գանդեսի և Ավստրալիայի հյուրընկալ հոգերին վրա ապրող հայ հավատացյալ ժողովրդին:

Հոկտեմբերի 29-ին, իր ճանապարհի վրա, Գարեգին սրբազանը նախ հանդիպում է Ստամբուլ՝ իր ծննդավայրը, ուր երկու անգամ պատարագում և քարոզում է, Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները հաղորդում ամենապատիվ սրբազան պատրիարք հորը, հոգևորականությանը, համայնքային վարչությանը անդամներին, հավատացյալներին, այցելում եկեղեցիները, Աղզալին Ս. Փրկչի հիվանդանոցը, վարժարաններն ու Ս. Խաչ դպրեմանքը:

Նոյեմբերի 18-ին սրբազանը այցելում է Երուսաղեմ՝ Ս. Հակոբյանց վանքը, իր ուխտը կատարում Ս. Տեղյաց մեջ, պատարագում և քարոզում Մայր Տաճարում՝ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու Ս. Էջմիածնի օրհնություններն ամենապատիվ սրբազան պատրիարք հորը, միաբանությանն ու հրաժեշտ առնում լավագույն տպավորություններով:

Նոյեմբերի 24-ին սրբազանը հասնում է Բոմբեյ: Օդանավակայանում Տ. Գարեգին եպիսկոպոսին դիմավորում են՝ եկեղեցական Վարչության անդամները՝ տիկին Բաղիր, տիկին Լորդը, գոկտ. Արամ Եղիազարյանը,

Գարեգինյանը և ուրիշներ: Սրբազանն առաջնորդվում է Բոմբեյի հայոց եկեղեցին, ուր լրացող ժամանակահատվածում է Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները: Բոմբեյում սրբազանը զբաղվում է նաև կազմակերպական, եկեղեցական հարցերով:

Նոյեմբերի 29-ին, Տ. Գարեգին եպիսկոպոսը մեկնում է Կալիաթա: Օդանավակայանում հայրապետական փոխանորդին դիմավորում է հոգևոր հովիվ Տ. Գեղամ վրդ. Զաքարյանը՝ ի գլուխ կալիաթահայ եկեղեցական վարչության անդամների, կազմակերպությանը ներկայացուցիչների և ժողովրդի: Սրբազանը ճշրաչափառում է մուտք է գործում եկեղեցի, և ապա այստեղ ևս հաղորդում Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները կալիաթահայությանը: Սրբազանը Կալիաթայի հայոց Ս. Նազարեթյան եկեղեցում պատարագում և քարոզում է՝ շնչելով Ամենայն Հայոց Հայրապետի օրոք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած նախախնամական դերը հայ ժողովրդի կյանքում՝ հավատքի, եկեղեցասիրության և ազգապահպանման սրբազան աշխատանքների մեջ: Սրբազանը այցելում է Կալիաթայի հայոց Մարգարիտական ծննդարանը, Դավթյան օրիորդաց վարժարանը և ծերանոցը:

Դեկտեմբերի 14-ին Տ. Գարեգին եպիսկոպոսը ժամանում է Բանգկոկ, ուր ապրում են ինը հայ ընտանիքներ, որոնք տասը տարուց ի վեր զրկվել էին հայ հոգևորականի այցելությունից ու հոգևոր մխիթարությունից: Սրբազանը իր շուրջն է հավաքում հայության այդ բեկորներին, խոսում, խրախուսում Ս. Էջմիածնի սիրով ու հայրենյաց ոգով՝ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու


օրհնությունները: Ժամերգության ավարտին բոլոր ներկաները ս. հաղորդություն են առնում:

Դեպի Սիդնեյ իր ճանապարհի վրա, սրբազանը ցանկանում է այցելել նաև Բիրմա, ուր կա փառաբանիչ հայ համայնք, բայց, օտարահպատակ հոգևորականի մուտքը արգելված լինելով Բիրմա, սրբազանը ղեկտեմբերի 16-ին ժամանում է Սիդնեյ: Տ. Գարեգին եպիսկոպոսին դիմավորում են Մելքունի հոգևոր հովիվ Ս. Ոսկան արքեպան և Սիդնեյի հոգևոր հովիվ Ս. Արամայիս քահանան՝ ի դուրս Եկեղեցական վարչության անդամների և հոծ բազմության:

Սրբազանը առաջնորդվում է Սիդնեյի հայոց Ս. Հարություն եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով և հաղորդում Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Դեկտեմբերի 18-ին, կիրակի օրը, հայրապետական փոխանորդ սրբազանը պատա-

րագում է և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին: Բոլորն ուրախ էին մանավանդ, որ իրենց հետ են ունենալու Հայոց Հայրապետի մնալուն ներկայացուցիչը՝ հանձին Տ. Գարեգին եպիսկոպոսի: Հաջորդ օրերին սրբազանը կատարում է մի շարք պաշտոնական այցելություններ: Տ. Գարեգին եպիսկոպոսը, որ հայրապետական պատվիրակի փոխանորդ է, իրեն հատուկ եռանդով ու նվիրումով ձեռնարկել է իր պարտականությունների կատարմանը, մանավանդ Ավստրալիայում ապրող հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքը ամրապնդելու և թեմական կազմակերպությամբ օժտելու առաքելությամբ, աջակցությամբ հոգևոր զասի, Եկեղեցական Համայնքային վարչությանը և հայ հավատացյալ ժողովրդի լույս հավատքին և հայկական բարեմասնությանը:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Անցյալ նոյեմբերին, հանդիսավոր իրա-
դրության մեջ, բացվեց Հայաստանի գրողնե-
րի հինգերորդ համագումարը, որը նշանակա-
լից իրադարձություն էր հայ ժողովրդի մշա-
կութային կյանքում:

Համագումարի աշխատանքներին մաս-
նակցում էին գրողներ, հայ մշակույթի, գի-
տության, արվեստի գործիչներ և եղբայրա-
նան հանրապետությունների պատվիրակներ:
Համագումարը ներածական խոսքով բա-
նում է ավագագույն գրող Ստ. Զորյանը, շեշ-
տելով, որ «տարեց-տարի, համագումարից
համագումար ավելանում է մեր գրողների
թիվը, խորանում է արվեստի ըմբռնումը:
Երբեք չըջանի համամատուցամբ այսօր
մեր գրականության թեմատիկան դարձել է
ավելի բազմազան, գրողները շատ անելիք-
ներ ունեն և մեծ պարտք՝ մեր ժողովրդի
անդեպ: Արվեստի համար չկա հին ու նոր
յուրիք... Պետք է ստեղծել այնպիսի գործեր,
որոնք բավարարեն արվեստի բարձր պա-
նանջները, լինեն մեր կյանքի հարազատ ար-
տահայտությունը, ունենան համամարդկա-
յին հնչելություն»:

Համագումարում «Արդիականությունը և
մեր գրականության հիմնական խնդիրները»
նկարծակի զեկուցումով հանդես է գալիս
այաստանի գրողների միության վարչու-
յան առաջին քարտուղար էդ. Թոփչյանը:

Իր զեկուցման մեջ էդ. Թոփչյանը նշում է,
որ Հայաստանի գրողների չորրորդ համա-
ումարից հետո անցած ժամանակաշրջանում
մեր ստեղծագործական յոթնամյա շրջանը
ավելի սերտ է ձուլված կյանքի ընդհանուր
արգասման հետ» և, ընթանալով սոցիալիս-
տական ռեալիզմի ուղիով, «կյանքի հետ ու-

նեցած սերտ կապի շնորհիվ ավելի խորա-
ցավ գրականության կենսական բովանդա-
կությունը և մեծացավ նրա նշանակությու-
նը»:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն
կանգ է առնում հաշվետու ժամանակաշրջա-
նում գրականության բնորոշ գծերի, նրա նոր
որակի, բանաստեղծության, արձակի և ար-
դիականության հրատապ խնդիրների վրա:
«Ճշմարիտ բանաստեղծությունը,— նշում է
գրողների միության քարտուղարը,— ծնվում
է ժամանակին և իր դարաշրջանի ազնիվ
խոհերով և հույզերով հարստացնում մարդ-
կային հոգեքնդ կյանքը: ... Արդի բանաստեղ-
ծության ոգեշնչման ակունքը՝ հայրենիք,
ժողովուրդը և մարդ, անբաժան գաղափար-
ներն են՝ տողորված մեր ժամանակի մեծ
բովանդակությամբ: Բանաստեղծության մեջ
միաձուլվ միտք ու զգացմունք են դարձել հայ
ժողովրդի ազգային կյանքը, նրա լուսավոր
ների կան՝ սերտորեն կապված սովետական
ամբողջ հասարակության մեծ շարժման
հետ»:

Զեկուցողը բնության է առնում նաև սո-
վետահայ արձակի նվաճումներն ու խնդիր-
ները, նշելով, որ նրա «դարգացման ընթաց-
քը նույնպես նոր մարդու ստեղծման պատ-
մություն է», նրա դաստիարակության հար-
ցը՝ մարդու կերպարի նոր, ավելի հարուստ
բովանդակությունը, նրա բնավորության ա-
վելի կենդանի գծերը՝ որպես զեղարվեստա-
կան կյանքի ամբողջության հիմնական
տարր:

Զեկուցման հետագա էջերը նվիրվել էին
հայ թատրոնի, գրականագիտության, բնա-
դատական մաթի, մանկա-պատանեկան

թարգմանական գրականության և արգիականության հարցերին:

Զեկուցման մեջ մասնավոր ուշադրության և վերլուծության էր ենթարկվել «սփյուռքի պայմաններում գրողների հերոսական ջանքերով» ստեղծված գրականությունը, որպես «հայ գրականության մեծ հարստության մի անբաժան մասը», որի «առաջին և հիմնական պրոբլեմներից մեկը՝ արտասահմանյան երկրներում ցրված հայության ազգապահպանման հարցն է»:

Սփյուռքի՝ ռեպարտություններով և դրականքներով լի» կյանքի պայմաններում ո՛չ միայն գրողների ուսերի վրա է ծանրանում «հայության բեկորների պահպանության ղեկավարի գործը», այլ նաև հայ գրականությունը նոր ստեղծագործություններով, իսկական արժեքներով հարստացնելու պատիվը:

Այնուհետև զեկուցողը խոսում է սփյուռքի գրողների և մայր հայրենիքի գրողների եղբայրական կապերը է՛լ ավելի ամրապնդելու անհրաժեշտության մասին, հայ գրականության ապագա զարգացման պայծառ հեռանկարներով:

Համագումարում լսվեց նաև բանասիրական գիտությունների դոկտ. Ս. Աղաբաբյանի հարակից զեկուցումը՝ սովետահայ արձակի վիճակի մասին: Զեկուցողը փաստական հարուստ նյութերի հիման վրա հանգամանորեն վեր հանեց երկու համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ստեղծված արձակ ստեղծագործությունների լուսավոր և սովորատու կողմերը, նշեց այն նորը, որը առկա է այդ երկերում: Զեկուցողը մասնավոր կարևորությամբ կանգ առավ նաև երիտասարդ ու խոստումնալից արձակագիրների ստեղծագործությունների վրա:

Ապա սովետահայ չափածոյի առաջ ծառացած խնդիրների, բանաստեղծական խոսքի նոր որակի մասին զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտ. Հր. Թամրազյանը: Զեկուցողը, վերլուծելով մի շարք բանաստեղծների առանձին երկերն ու ժողովածուները, և կանգ առնելով նույնպես երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունների վրա, այն կարծիքը հայտնեց, թե չափածոն ևս վերջին տարիների ընթացքում նկատելի վերելք ապրեց: Զեկուցողը

նշեց նաև այն թերությունները, որոնք դեռևս խանգարում են առանձին հեղինակների՝ խոսելու իրենց հաբադատ և ամբողջ ձայնով:

Համագումարում տրված զեկուցումները շուրջ ծավալվեց մտքերի լայն ու հետաքրքիր փոխանակություն, որին մասնակցեցին՝ Վ. Նորենցը, Գ. Սևունցը, Վ. Մնացականյանը, Հ. Սիրոսը, Պ. Սևակը, Ս. Ալաջաջյանը, Հովհ. Շիրազը, Մ. Աթաբեկյանը, Ս. Արղումանյանը, Գ. Էմինը, Ն. Զարյանը, Ա. Սահինյանը, Հ. Սարուխանը, Վ. Պետրոսյանը, Ա. Երևանյին, Գ. Աղաբաբյանը, Մ. Սարգսյանը և ուրիշներ:

Հայաստանի գրողների համագումարը ողջունեցին եղբայրական հանրապետությունների գրողների միության ներկայացուցիչները:

Համագումարին մասնակցեցին նաև սփյուռքահայ գրականության ներկայացուցիչները՝ Հ. Ճ. Սիրունին (Բուխարեստ), Ա. Մառուկյանը, Ս. Սեզան, Գ. Աղաբաբյանը (Բելյուսթ), Հ. Զարգարյանը, Ա. Ալեքսանյանը (Ֆրանսիա):

Սովետահայ գրականությունն անցած ավելի քան քառասունհինգ տարիների ընթացքում ստեղծել է զեղարվեստական մնացորդներ ներկայացնող երկեր, որոնք հարստացրել են մեր դարավոր մշակույթի հոգևոր գանձարանը:

Հայաստանի գրողների հինգերորդ համագումարը խոշոր ու նշանակալից իրադարձություն է և՛ մեր գրողների, և՛ հայ ժողովրդի մշակութային կյանքում, ժողովուրդ, որ դարերի միջով, սրբազան երկյուղածությամբ ու հաճախ կյանքի շատ ծանր պայմաններում պահել-պահպանել է իր աչքի լույսի պես ու ալսօրվա պայծառ հանգրվանն է հասցրել ոսկեդեմքի իր գրականությունը, բաղմադարյան իր մշակույթը՝ որպես իր աղատության ու լուսակարոտ հոգու նվաճում, թուրք ու խոչանք:

Հայաստանի գրողների հինգերորդ համագումարը կհանդիսանա մի նոր խթան՝ մեր գրականության, արվեստի է՛լ ավելի զարգացման ու հարստացման բնագավառում:

Հայ գրականության բոլոր երեց ու երիտասարդ, խոստումնալից մշակներին մաղթում ենք ստեղծագործական նոր խիզախումներ՝ ի փառս մեր մեծորդատառ մշակույթի ու մեր տաղանդավոր ժողովրդի:





ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵՎՈ

Հունվարի 4-ին, չորեքշաբթի օրը, Վեհա-
կառ Հայրապետի բարեհաճ կարգադրու-
թյամբ, Վեհարանում, նոր տարվա առիթով
ազմակերպվել էր ընդունելություն, ի պա-
ռիվ Մ. Աթոռին աղբյուր ճարտարապետա-
յան հանձնաժողովի:

Ընդունելությանը ներկա էին՝ վարպետը՝
Դարտիրոս Սարյանը, ճարտարապետ Միք.
Դադմանյանը, պրոֆ. դոկտ. Կարո Ղաֆա-
չարյանը, պրոֆ. դոկտ. Վարդգաթ Հարու-
թյունյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը, ճար-
տարապետ Ռաֆայել Իսրայելյանը, պրոֆ.
դոկտ. Կոնստանդին Հովհաննիսյանը, ճար-
տարապետներ՝ Բաղդիկ Արդումանյանը,
Կրծրունի Գալիկյանը և Վաչիկ Խաչատրյանը:

Ընդունելությանը ներկա էին նաև Մայր
Աթոռում հայկական հին սրբապատկերներ
տրոգող Լենինգրադից նկարիչներ՝ տեր և
դիկին Սալաթնոտիկովները և երաժշտագետ
Դիհրան Թոմաճան:

Այս առթիվ Վեհապառ Հայրապետը բարե-
հաճել էր նաև իրեն սեղանակից դարձնել
Ս. Հայկազուն և Ս. Հուսիկ սրբադասներին,
Ս. Մուշեղ, Ս. Արսեն և Ս. Նարեկ վարդա-
պետներին, Գեր. Հոգ. Խորհրդին և Վերստու-
գիչ հանձնաժողովի անդամներին, Մ. Աթոռի
ղկվանապետին, «Էջմիածին» ամսագրի խմբ-
ագրին, տնտեսական բաժնի վարիչին և
Մայր Աթոռի նոր շինարար-ճարտարապետ
Ս. Խաչատրյանին:

Սեղանն օրհնելուց հետո Վեհապառ Հայ-
րապետը ջերմորեն շնորհավորում է բոլոր
ներկաների նոր տարին, բարօրության, ա-
ռողջության և հայրենանվեր նոր գործերի հա-
ջողության մաղթանքներով:

Գեր. Ս. Հայկազուն արքեպիսկոպոսը բա-
ժակ է բարձրացնում Մայր Աթոռի պայծառու-
թյան և նրա շինարար Գահակալի արևշա-
տաւթյան կենաց: Սեղանակիցներից Մ. Մազ-
մանյանը, Կ. Ղաֆաչարյանը, Գ. Խանջյանը,
Վ. Հարությունյանը, Մ. Թոմաճան շնորհա-
վորում են Վեհապառ Հայրապետի նոր տա-
րին՝ խոստանալով իրենց համագործակցու-
թյունն ու աշխատակցությունը շարունակել
Վեհապառ Հայրապետի հետ՝ նրա կառուցո-
ղական, վերանորոգչական ծրագրերը կեն-
սագործելու համար, ի փառս Մայր Աթոռի,
մայր հայրենիքի և մեր ժողովրդի:

Սույն ընդունելությունը կազմակերպվել էր
նաև մի այլ սրտագին նպատակով:

Մայր Աթոռի նախկին ճարտարապետ Արծ-
րունի Գալիկյանը վերջերս անցել է նոր աշ-
խատանքի, իր ցանկությամբ, այլ տեղ: Ա.
Գալիկյանը շուրջ տասը տարիներ նվիրումով
աշխատել է Մայր Աթոռում իրականացնել
Վեհապառ Հայրապետի շինարարական ծրա-
գրերը, ճարտարապետական հանձնաժողո-
վի ցուցմունքներն ու որոշումները: Նա որ-
պես հմուտ ճարտարապետ կազմել է նոր
Վեհարանի վերակառուցման, ինչպես նաև
Մայր Աթոռի շրջապատում, Ս. Հովհաննիսի

վանքում, Շողակաթի և Օշականի եկեղեցիներում մի շարք կարևոր շինարարական նախագծեր:


Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց իր բարձր գնահատությունն ու ջերմ շնորհակալությունը հայտնել ճարտարապետ Ա. Գալիկյանին՝ տասը տարիների ընթացքում Մայր Աթոռում նրա կատարած ազնիվ, բարեխիղճ ու օգտակար աշխատանքների համար և հաջողություն մաղթել նրան իր նոր աշխատանքում: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ի նշան իր գնահատության, Ա. Գալիկյանին նվերներ տվեց որպես հուշ և հիշատակ Մայր Աթոռից:

Սեղանակիցներից Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, Մ. Մազմանյանը, Վ. Հարու-

թյունյանը, Վ. Իսրայելյանը, Գ. Բեքմեզյանը, Ե. Ալեքսանյանը, Գ. Քեհայանը իրենց ողջույնի խոսքերի մեջ շեշտեցին Ա. Գալիկյանի կատարած ազնիվ աշխատանքի արդյունքները Մայր Աթոռում, վեր հանելով նրա նկարագրի գծերը որպես համեստ ու ազնիվ հոգու տեր հայ մարդու, հմուտ մասնագետի և բարեխիղճ շինարարի:

Վերջում շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց Ա. Գալիկյանը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին և բոլոր սեղանակիցներին:

Ընդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, ջերմ, ընտանեկան մթնոլորտի մեջ:





Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
(1874—1966)



Երկարատե հիվանդությունից հետո, դեկտեմբերի 16-ին, Լոս-Անժելոսում, 94 տարեկան հասակում, ի Տեր հանգչավ գեր. Տ. Վարդան արքեպս. Գասպարյանը:

Հանգուցյալը, ավագանի անունով Տիգրան, ծնվել է 1874 թվականին, Բրուսա նահանգի Դուրազլալ գյուղում: Իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում և այնուհետև աշակերտել է Երուսաղեմի հայոց լանքի Ժառանգավորաց վարժարանում՝ 1888—1892 թվականներին:

1898 թվականին Լուսակրոն քահանա է ձեռնադրվել Երուսաղեմի հայոց Տ. Հարություն պատրիարք Վեհապետյանից և Ս. Աթոռում կոչվել է վանական ծառայության:

1901 թվականին հոգևոր հովիվ է նշանակվել իր ծննդավայրում, ուր ծավալել է քարոզչական և կրթական գործունեություն:

1903 թվականին ընտրվել է Բրուսայի թեմի առաջնորդական փոխանորդ և ապա տեղապահ: Այս թեմի վրա իր բարվոք պաշտոնավարության համար Հովհաննես արքեպս. Արշարունուց ստացել է ծախագույն վարդապետի աստիճան՝ 1912 թվականին:

Նույն տարին Տ. Վարդան ծ. վարդապետը մեկնել է Ամերիկա՝ ստանձնելու Կալիֆոռնիայում Ֆրեզնոյի հայոց Ս. Երրորդություն եկեղեցու հովիվությունը, պաշտոն, որը նվիրումով և խղճի մտքը կատարել է անընդմեջ ծառայությամբ մինչև 1933 թվականը: Տ. Վարդան ծ. վարդապետի ջանքերով կառուցվել է Ֆրեզնոյի հայոց Ս. Երրորդություն բարաշեն եկեղեցին՝ 1913—1914-ին:

Այնուհետև հանգուցյալը հովվական պաշտոններ է վարել Դետրոյտում (1934—37 թթ.), Օկլենդում (1937—46 թթ.), Ֆաուրլորում (1946—52 թթ.) և երկու անգամ ընտրվել է առաջնորդական տեղապահ Կալիֆոռնիայի թեմի:

1945 թվականին, որպես պատգամավոր ԱՄՆ-ից, մասնակցել է Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովին, և հայտնվելու է ձեռնադրվել Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսից:

1948 թվականին Ֆրեզնոյում նշվել է Տ. Վարդան եպս. Գասպարյանի ծննդյան 75 և քահանայության 50-ամյակը: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը հորելյար սրբազանին շնորհել է արքեպսյան պատիվ՝ ի

վարձատրություն նրա երկարամյա, նվիրյալ եկեղեցական և ազգօգուտ ծառայության:

1952 թվականից Տ. Վարդան արքեպիսկոպոսը իր հասունացյալ տարիքի պատճառով հրաժարվել է եկեղեցական գործուն ծառայության ասպարեզից:

1955 թվականի աշնանը, երկրորդ անգամ, նա մասնակցել է Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողովին, որպես պատգամավոր ամերիկահայ թեմի:

1957 թվականին սրբազանը ծանրորեն հիվանդացավ և ամբողջովին մեկուսացավ եկեղեցական-ազգային ծառայության կյանքից:

Վերջին տարիներին Վարդան սրբազանը ապրում էր Լոս-Անժելոսում՝ իր մեծ եղբոր երրորդու ընտանեկան հարկի տակ, մինչև իր մահը:

Տ. Վարդան արքեպիսկոպոսի մահով Հայաստանյայց Առաքելական եկեղեցին կորց-

նում է իր հավատավոր, նվիրյալ, իր կոչման առաքելության բարձրության վրա գտնվող հոգևորականներից մեկին, որը յուրովսան ծառայում էր իր եկեղեցուն և ժողովրդին:

Դեկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում, հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղումնեցավ հանգստյան մասնավոր պաշտոն Տ. Վարդան արքեպիսկոպոսի հոգու խաղաղության համար:

Արարողությունից առաջ Մայր Տաճար լուսարարապետ գեր. Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հանգիստի հուղիչ դամբանական խոսքի վեր հանելով հանգուցյալ սրբազանի կյանք, ուսանելի կողմերը:

Թող Աստված իր անթառամ պսակին արժանացնի հանգուցյալ Տ. Վարդան արքեպիսկոպոսի հոգին՝ դասելով նրան Հայ եկեղեցու նվիրյալ ու հավատավոր հովիվների շարքը:





Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՊՐՈՑ. ԳՐԻԳՈՐ ԽԱՅԻԿՅԱՆԻ

Հունվարի 13-ին, Մարտիում, իր ընտանեկան հարկի տակ, ութսուներկու տարեկան ապրանքական համայնքի պատվո նախահ, վերապատվելի պրոֆ. Գրիգոր Խայիկյանը:

Հանգուցյալի հուղարկվորություն արա- ղությունը կատարվել է հունվարի 17-ին, Երևանի հայ ավետարանական աղոթատե- մեք, և մարմինը ամփոփվել Սեն-ժյու- նի գերեզմանատանը:

Վերապատվելի պրոֆ. Գ. Խայիկյանի մա- մեծ կորուստ էր ֆրանսահայ ավետարա- կան համայնքի համար, որի հավատավոր, ղեկավար և հոգևոր ղեկավարներից մեկն էր հանգուցյալը՝ սիրված ու հարգված նաև ար կրոնական շրջանակների մեջ, որպես կոչման բարձրության և առաքելության զիտակցությամբ առկայություն Ավետարա- անվեհեր քարոզիչ:

Մենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կեղծ վշտով համակված, հունվար 16- ակիր հետևյալ ցավակցական, մխիթա- կան հեռագիրը ուղարկեց հանգուցյալի րազատներին Մարսել.

Վշտով կարգացիմ հեռագիր: Մեր ռազին աղոթքը առ Աստված հանգուցյալ ր հոր՝ վերապատվելի Խայիկյանի բարի վայել խաղաղության համար: Արժանա- հավատավոր հոգևոր մշակ մըն էր նվիր- ը մե ժողովուրդին: Իր հիշատակը կմնա ռա պայծառ: Թող Տերը մխիթաբե Ձեզ րը Հոգվով: Օրհնություն Սուրբ էջմիա- ճն»:

Վերապատվելի պրոֆ. Գ. Խայիկյանի մա- պատահել է հունվարի 13-ին, մինչ Մայր ղոտում հունվարի 28-ին՝ նոր տարվա և կլի ս. ծննդյան առթիվ, ստացվում է նգուցյալի հունվար 10 թվակիր նամակը,

ուղղած Վեհափառ Հայրապետին, որը հա- վանաբար վերջին նամակն էր հարգելի պրոֆ. Խայիկյանի, և որն իր բովանդակու- թյամբ հանդիսանում է մի տեսակի կտակ:

Ի հարգանս վերապատվելի պրոֆ. Գ. Խա- յիկյանի անմոռաց հիշատակին, այդ նամա- կից բաղվածաբար հրատարակում ենք որոշ հատվածներ, որոնց մեջ հանդես է գալիս հանգուցյալը իր հավատքի ջերմությամբ, Մայր եկեղեցու հանդեպ իր որդիական պաշ- տամունքով և անկաշառ, ճշմարիտ հայրենա- սիրությամբ:

«Վեհափառ Տեր,

Մեծ փափագս էր հայկական Մոնոդի առ- թիվ Ձեզի նամակ մը հասցնել: Բայց մարմ- նական տկարությանս պատճառով այդ ան- կարելի եղավ: Ներեցեք ինձի:

Թեև չիգրեցի, բայց թախանձագին խնդրեցի մեր Հովվապետն, որպեսզի Ան Իր ծննդյան և հայտնության տոնին առթիվ Իր հոգիով լիցնե Ձեզ և էջմիածնա միաբանու- թյունը: Եվ նոր ներշնչում շնորհե Ձեզի: 1967-ի Ձեր առաջադրեալ նպատակներուն հասնելու համար:

Գիտեմ, նորին Վեհափառությունդ բարձրա- գույն նպատակն է վերակենդանացումը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվո: Ուրախ ենք, որ շինարարության, մշակութի, ճարտարա- վեստի և գիտությանց գրեթե բոլոր ճյուղե- րուն մեջ մեծ հառաջդիմություն ունեցած է մեր սիրելի հորհրդային Հայաստանը: Այս սփյուռքահայության համար մեծ պարծանք մըն է: Վստահ եմ, թե Ձեզի համար ալ մեծ ուրախություն է այս իրողությունը: Փրոֆ. Միրզայան երկու ամիս առաջ Մարսելյ էր և իրիկուն մըն ալ մեր հյուրը եղավ: Ան մեզի վկայեց, թե որպիսի հայրենասիրությամբ Դուք կաշխատիք հայրենիքին մեջ: Սակայն վստահ եմ, որ, որպես Հովվապետ Հայ. Ս. Առաքելական Եկեղեցվո, Ձեր ալելի բարձ-

րագույն ձգտումն ու նպատակն է եկեղեցիի և հոգևոր կյանքի վերակենդանացումը: Արդեն մեր առաջին երկու տեսակցությունց ատեն ես անկեղծորեն արտահայտվեցա, թե Բարձրյալն Աստված Ձեզ դրած է էջմիածնա գահին վրա, որպեսզի Դուք Ս. Մեսրոպի և Ս. Մահակի դերը կատարեք: Այդ հավատքը հիմա ալ ունիմ: Երբ երկու տարի առաջ Երուսաղեմ էի, հավաստի աղբյուրներն լսեցի, թե Ձեր ընդհանուր կեցվածքը և գործունեությունը այնպիսի սքանչելի տպավորություն մը ձգած է տեղական ժողովուրդին վրա Ձեր հոյ գտնված ատեն, որ պարզ ժողովուրդը Ձեզի համար ըսած է՝ «Աստուծո հրեշտակն է»: Արդարացի է այս դատումը. ուստի մեծ բախճանքս և թախանձագին խնդիրքս է Աստուծոմե, որպեսզի Ան Ձեր միջոցավը հոգևոր նոր շունչ մը բերե հայ ժողովուրդին մեջ և զայն կարողացնե իր հոգևոր կոշումը իրագործելու թե մեր հայրենիքին և թե սփյուռքի մեջ: Կաղոթեմ մանավանդ, որ էջմիածնա Հոգևոր Ճեմարանը մեր Ս. Թարգմանիչներուն բարձրությունը ունեցող սաները դաստիարակե, նաև Ձեզի բոլոր միջոցները հայթայթե, որպեսզի ինչ պես որ Դուք առաջադրած էք, Աստվածաշնչի արևելահայերենի ընտիր թարգմանություն մը կատարվի և ուժ տրվի հոգևոր գրականության:


Կցավիմ, որ ուր որ աչքս կդարձնեմ, հոգևոր տեսակետով մեծ ավերածություններ կտեսնեմ: Սակայն միևնույն ատենը չեմ հուսահատիր, վասնզի մեր պատմությունն ճանշցած եմ, որ Աստված այդ ավերածություններու ատենն է, որ իր հրաշքը գործած է: Այսպես, ԺԶ դարու վերջերեն մինչև ԺԷ դարու սկիզբը հայր ոչ միայն տնտեսապես ու քաղաքականապես գետնամած եղած էր, այլ նաև եկեղեցական տեսակետով մահացու հարվածներ ստացած էր: Սակայն ճիշտ այդ ատենն էր, որ Աստված հանեց Սարգիս Պարոն Տերի, Մովսես Տաթևացիի և Պողոս Մո-


կացիի պես մարդիկ և անոնց ու անոնց աշակերտներուն միջոցով վերակենդանացուց Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը ընդհանրապես: Հիմա ալ կհավատամ, թե մեր ամենակարող սեր Բրիստոսը նույնպիսի հրաշք մի պիտի գործե: Ան պիտի կատարե իր խոստումը—Ան որ ինձի կհավատա... անո փորեն կենդանի ջուրի գետեր պիտի բղխեն: Զայս ըսավ Հոգիին համար զոր Իրեն հավատացողները պիտի առնեին (Հովհ. Ե. 38—39):

Վեհափառ Տեր, համոզված եմ, թե Դուք Հիսուսին այդ մատնանշած հավատացյալներեն եք: Եվ մինակ չեք, կհավատամ թե՛ Խ. Հայաստանի և թե՛ սփյուռքի մեջ կան բավական մեծ թվով հավատացյալներ, որոնք անդադար կաղերսեն Տիրոջմի Սուրբ Հոգիին մասնավոր այցելությունը: Աստված պիտի լսե մեր խնդիրքը և անգամ մըն ալ էջմիածինը պիտի ողողե իր փառալուր լույսով և զայն կեղծոն պիտի դարձնե հայ բրիստոնեական լույսի, կյանքի և բրիստոնեական մշակույթի: Ուրախ եմ, որ Հոգևոր Ճեմարանը ունի 31 ուսանողներ, որոնք մասնավոր կերպով Ձեր խնամքին ու գուրգուրանքին առարկա են: Կաղոթեմ, որ մասնավորապես Սուրբ Հոգիին այցելություն անոնք ընդունին և Ձեզի նեցուկ ըլլան Սուրբ Թարգմանիչներուն պես: Եվ Ձեզ դորացնեն էջմիածինը բարձրացնելու իր արժանավոր դիրքին:

Այսպիսի հավատքի վերակենդանացում մըն է միայն, որ պիտի նվիրագործե մեր սիրելի հայրենիքին ներկա շինարարությունը և տնտեսական, գիտական և մշակութային վերելքը: Եվ պիտի ընե մեր ժողովուրդը լույսի փարոս մը:

Թող Տերը իր հավիտենական փառքին և լույսին արժանացնի հանգուցյալ վերապատվելի պրոֆ. Գրիգոր Խայկյանի բարի հոգին:





Հ Ա Ն Ք Ի Ս Տ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՎԱԳՔ ԲԱՀԱՆԱ ՔԻՎԻՄԼՅԱՆԻ

(1882—1966)

Սեպտեմբերի 23-ին, Բուխարեստում, խոր ծերության հասակում, ի Տեր հանգյալ արժանապատիվ Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիվիմլյանը:

Հանդուցյալը ծնվել է 1882 թվականին՝ Կեսարիայի էվերեկ գավառում՝ աստվածապաշտ ընտանիքում: Նա իր սկզբնական կրթությունն ստացել է տեղի Ռուբինյան դպրոցում:

1906 թվականին նա ձեռք է բերում ատամնաբույժի մասնագիտություն և մեկնում Բրուսա աշխատելու:

1910 թվականին քահանա է ձեռնադրվում գեր. Տ. Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուց:

Տ. Իգնատիոս քահանան սիրով և նվիրումով ծառայում է իր հոտին:

Մեծ նշանի ընթացքում հրաշքով ազատվում է Տ. Իգնատիոս քահանայի ընտանիքը և հաստատվում Դամասկոսում:

Զինադադարից հետո Տ. Իգնատիոսն իր ընտանիքով կրկին վերադառնում է Բրուսա, որտեղ և շարունակում է իր հովվական պաշտոնը:

1922 թվականին, իր փափագի համաձայն և լուսահոգի Տ. Զավեն պատրիարքի հրամանով, Տ. Իգնատիոս քահանան հաստատվում է Ռումինիայի Կալաց քաղաքում և պաշտոնավարում այնտեղ չորս տարի, որից



հետո ստանձնում է Յաշ քաղաքի հովվությունը:

1931 թվականին Ռումինիայի առաջնորդ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի հրավերով Տեր հայրը պաշտոնավարում է

Բուխարեստում և միաժամանակ դասավանդում հայկական դպրոցում:

Իր 55-ամյա եկեղեցական գործունեության մասին Ս. Իգնատիոս ավագ քահանայի հայ եկեղեցու արժանավոր հովիվներից մեկը հանդիսացավ՝ ամենուրեք վայելելով բոլորի համակրանքն ու զնահատանքը:

1920 թվականին Զավեն պատրիարքի կոնդակով ստանում է ծաղկյա փիլոն կրելու իրավունք: 1943 թվականին Կարապետ արքեպ. Մաղվանից ստանում է քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 1944-ին Մեսրոպ Նարոյան պատրիարքից ստանում է ավագ քահանայության պատիվ:

1960 թվականին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Ս. Իգնատիոսի եկեղեցական գործունեության և քահանայության


50-ամյակի կապակցությամբ, ս. կոնդակով իր բարձր զնահատանքն ու օրհնությունն է շնորհում նրան:

Սեպտեմբերի 25-ին, կիրակի օրը, Բուխարեստի հայոց առաջնորդանիստ մայր եկեղեցում, հոծ բազմության ներկայությամբ, պատարագեց, քարոզեց և հանգուցյալի վերջին օծումը կատարեց թեմի առաջնորդ, գեր. Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ շրջապատված քահանայական դասով:

Ս. Իգնատիոս ավագ քահանայի կորուստով ոչ միայն Բուխարեստի հայ համայնքը, այլև բովանդակ ու միևնույն հայությունը կորցնում է իր արժանավոր և անձնվեր հովիվը:

Հավիտենական հանգիստ՝ իր հոգնած մարմնին և խաղաղություն՝ իր հոգուն:

«Յիշատակ արդարօց օրհնութեամբ եղիցի Ամէն»:





Մ Ա Յ Ր Կ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

Լ Ո Ւ Ր Ե Ր Մ Ա Յ Ր Կ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

Գնդեվանքի վերանորոգումը.—Դարավազագի Գընդեվազ գյուղից ոչ հեռու, Արփա գետի ձորաբերանին, դեպի Ջերմուկ տանող ճանապարհին, գտնվում է պատմական Գնդեվանքը, որը 10—11-րդ դարերի հայ ճարտարապետության հիանալի կոթողներից մեկն է:

Հնությունների պահպանության կոմիտեն սկսել է վանքի վերանորոգումը և շրջակայքի բարեկարգումը: Արդեն վերականգնված են ինչպես եկեղեցու, այնպես էլ գավթի պատերը, ամրացվում ու նորոգվում է ծածկը:

Գնդեվանքի վերանորոգման ծախսերի մի մասը հոգացվում է Գ. Կյուլպենկյան հաստատության միջոցներով:

Ա. Լաստիվերտցին ուներեն.— Լենինգրադում բնակվող երիտասարդ հայ գիտնական-պատմաբան Կ. Յուզբաշյանը ուներեն է թարգմանել 11-րդ դարի (նշանավոր հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցու «Պատմություն»-ը: Թարգմանությունը շուտով լույս կտեսնի Մոսկվայում՝ «Արևելքի ժողովուրդների գրական հուշարձանները» մատենաշարով:

Անցյալ աշնանը Ա. Լաստիվերտցու աշխատությանը նվիրված հետաքրքիր գեկուցումով երիտասարդ գիտնականը հանդես եկավ Օքսֆորդում, բյուզանդագիտության 13-րդ միջազգային համագումարում:

Ժիրայր Օրագյանի ցուցահանդեսը.— Երևանում բացվեց իտալահայ նշանավոր գեղանկարիչ Ժիրայր Օրագյանի նկարների ցուցահանդեսը, որը կազմակերպել էր Հայաստանի նկարիչների միությունը: Դա Օրագյանի գործերի առաջին ցուցահանդեսն էր Հայաստանում: Ցուցադրված էին շուրջ 100 կտավներ:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջ բերեց արվեստասեր հասարակականության շրջանում:

Հարկ է նշել, որ տաղանդավոր նկարիչը ցուցադրված իր կտավները սիրով նվիրել է հայրենիքին:

Ուրարտական որմնանկարներ.—Անցյալ՝ 1986 թ. պեղումների ժամանակ հնագետները ուրարտական հիմնավորք էրեբունի քաղաքի թագավորական պալատի գահասրահում (Արգիշտի առաջինի շրջան) հայտնաբերեցին ուրարտական որմնանկարների (ֆրեսկո) քեկորներ: Որմնանկարները պատկերում են որսի տեսարաններ, կատարված են մեծ վարպետությամբ և վկայում են ուրարտացիների բարձր գեղարվեստական զարգացման մասին: Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ներկերի թարմությունը և նկարների բովանդակությունը:

Ուրարտական նոր արձանագրություններ.—Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց հնագետ-պատմաբան Ն. Հարությունյանի «Կարմիր բլուրի ուրարտական նոր արձանագրությունները» արժեքավոր աշխատությունը: Գիրքը խմբագրել է Վրաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Մելիքիշվիլին:

Գիրքը նվիրված է ուրարտական Թելշեբաինի քաղաք-միջնաբերդի (Կարմիր բլուր) պեղումների ժամանակ հայտնաբերված ուրարտական մի մեծ արձանագրության (7-րդ դար մ. թ. ա.) թարգմանությանը և մեկնաբանությանը: Այդ արժեքավոր ուսումնասիրությունը, ինչպես նաև արձանագրությունը, մեծ նշանակություն ունեն Թելշեբաինի քաղաքի և Արարատյան դաշտի պատմության, մանավանդ Հայաստանի ուրարտական շրջանի մշակույթի ուսումնասիրության տեսակետից: Արձանագրությունը կարևոր է նաև այն տեսակետից, որ այն պարունակում է մեծ քանակությամբ, մինչև այժմ անհայտ,

ուրախության բառեր ու դարձվածքներ, որոնք զգալի չափով հարստացնում են ուրարտական լեզվի բառապաշարը և քերականությունը:

Պեղումներ Արթիկում.—Ահա վեց տարի է, ինչ հնագետները պեղումներ են կատարում Արթիկում: Պեղումները հետաքրքիր նյութեր են տալիս մեր թվագրությունից առաջ 13—7-րդ դարերի մշակույթի վերաբերյալ: Տուֆ քարի շերտերում հայտնաբերվել են թագմաթիվ գերեզմաններ՝ փորված քարաշերտերի մեջ:

Հատիճ գյուղի մոտ կատարված պեղումների ժամանակ հնագետները գտել են պղնձի դարի շրջանի շերտեր: Այդ շրջանին են պատկանում հայտնաբերված հետաքրքիր բնակարանները, որոնցից մեկում տեղավորված է եղել բրուտանոց: Վերջինում հայտնաբերված են մեծ քանակությամբ զանազան չափերի խեցեղեն քանդակներ, որոնք պատկերում են տնային կենդանիներ: Հնագետների կարծիքով այդ քանդակները ունեն 5000 տարվա հնություն:

Մշակութային օջախներ.—Հայաստանի քաղաքներում, գյուղերում, ավաններում և խոշոր գործարաններում ներկայումս գործում են 1026 ակումբներ, շուրջ 2700 գրադարաններ և 21 թանգարաններ: Առաջիկա մի քանի տարում մշակութային այդ օջախների թիվը կավելանա 554-ով: Կատեղծվեն Այ. Սպենդիարյանի, Եղ. Չարենցի, Մ. Սարյանի տուն-թանգարաններ:

Լենինականում, Կիրովականում, Ղափանում, Գորիսում, Կամոյում, Դիլիջանում և մի շարք այլ քաղաքներում գործում են զավառագիտական թանգարաններ:

Ուսանողական թաղամաս Կիրովականում.—Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը Կիրովականում ունի իր բաժանմունքը: Յոթ տարի առաջ այնտեղ սովորում էին 80 հոգի, իսկ այժմ սովորողների թիվը հասել է 970-ի:

Ներկայումս կառուցվում է ուսանողական մի ամբողջ թաղամաս՝ 1500 սովորողների համար: Կառուցվելու են չորս ուսումնական և չորս լաբորատոր շենքեր, սպորտային սրահ, հանրակացարան՝ 500 հոգու համար, և ուսանողական այլ շենքեր:

Դեղորայքի գործարան.—Երևանի արվարձաններից մեկում՝ Ավանում, կառուցվում է դեղորայքի գործարան: Ծինարարական աշխատանքներն արդեն ավարտվել են, սկսվել է մեքենաների և կահավորանքի տեղադրումը: Այս տարի գործարանը կթողարկի միլիոնավոր ռուբլու արժողության զանազան դեղորայք՝ պատրաստված զանազան բույսերից:

Գործարանը լրիվ կարողությամբ կաշխատի այս տարվա վերջերին:

Երևանյան ավտոմեքենաներ.—Երևանի ավտոմոբիլային գործարանը, որը ուներեն կրճատ կոչվում է «ԵրԱՆ», վերջերս սվեց իր առաջին արտադրանքը: Մի քանի տասնյակ գեղեցիկ մեքենաներ բաշխվեցին հանրապետության առևտրական հիմնարկներին: Գեղեցիկ, հաճելի տեսքով և գույնով այդ մեքենաները ունեն ծածկված թափք և հարմարեցված են զանա-

զան տեսակի մեքենաներ և ապրանքներ փոխադրելու:

Գործարանի կառուցմանը և արտադրության յուրացմանը մեծ օգնություն ցույց տվեցին Մոսկվայի և Հապորոմիչ ավտոմոբիլային աշխատողները: Գործարանին կից ստեղծված է ուսումնարան, ուր սովորում են 600 երիտասարդներ: Ուսումնական տեղերը հետո նրանք աշխատելու են իբրև մասնագետ-քանվորներ: 1967 թ. գործարանի արտադրանքը կրկնապատկվելու է, գործի կդրվեն նոր արտադրամասեր:

Նոր թաղամաս Երևանում.—Մայրաքաղաքի նորակառույց թաղամասերի թիվը մեկով ևս ավելացավ: Դա Արարատյան կոչվող թաղամասն է, որը հիմնվել է 1968 թվականի ընթացքում: Թաղամասը գտնվում է Նոր Մայրաթիաղի մոտ, Շահումյանից դեպի Սպանդարյան հրապարակը տանող մոտակայքում: Դա նոր թաղամասի եզրին:

Տարեկան շահագործման հանձնվեցին ութ բազմահարկ շենքեր: Ավելի քան 1000 ընտանիք այստեղ բնակարան ստացավ: Նորաբնակների թվում են Նոր Կողբ ավանի բնակիչների մի մասը: Ինչպես հայտնի է, այս ավանը քանդվելու է և նրա տեղ լինելու է Երևանյան լիճը:

1967 թվականին նոր թաղամասի շինարարությունը ավելի լայն ծավալ է ընդունելու: Կկառուցվեն 5—8 հարկանի բազմաթիվ նոր շենքեր, դպրոց, մանկապարտեզ, կինոթատրոն, խանութներ, ճաշարան և այլն:

Վերելակների գործարան.—Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների թիվն ավելացավ մի նոր, հետաքրքիր գործարանով՝ շահագործման հանձնվեց Սպիտակի (Համամու) վերելակաշինական գործարանը: Արդեն յուրացված է վերելակների անընդմեջ թողարկումը, և Սովետական Միության զանազան ծայրերն են ուղարկվել առաջին վերելակները: Կառուցվել են նոր արտադրամասեր և անհրաժեշտ շենքեր:

Գործարանն արտադրում է 6-ից 12 հարկանի շենքերի համար արագընթաց վերելակներ, որոնք գեղեցիկ տեսք ունեն և ավտոմատ կերպով փակվող ու բացվող դռներ: Գործարանը մեծ թվով հաշտեր է ստացել Մոսկվայի, Խարկովի, Թբիլիսիի, Երևանի և այլ քաղաքների շինարարական կազմակերպություններից:

Գազը կենցաղում և տնտեսության մեջ.—Ընդամենը վեց տարի է, ինչ Հայաստանը բնական գազ է ստանում Բաքվից: Այդ ժամանակամիջոցում այն լայն տարածում է ստացել ինչպես ժողովրդի կենցաղում, այնպես էլ արդյունաբերության մեջ:

Ներկայումս 185 արդյունաբերական ձեռնարկություններ գազը գործ են ածում իբրև վառելիք: Ամբողջ Հայաստանում 185000 ընտանիքներ գազ են գործածում կենցաղային կարիքների համար: Օրական ծախսվում է 3500000 խ/մ գազ: Այդ քանակության մոտ մեկ երրորդը գործ է ածվում արդյունաբերական կարիքների համար՝ քիմիական արդյունաբերության մեջ իբրև հումք:

1967—70 թվականներին բնական գազ կատանան ևս 235 000 ընտանիքներ: Հայաստանի 13 քաղաքներ ու շրջանային կենտրոններ արդեն բնական գազ են ստանում:

Այժմ աշխատանքներ են տարվում գազ մատակարարելու Սևանա լճի ափագանի չորս շրջանների և կրասնոսելսկի շրջանի գյուղերին: Այդ նպատակի համար կառուցվում է գազամուղ՝ 260 կմ երկարությամբ: Գազամուղն անցնելու է այդ շրջանների 104 գյուղերով, որոնք ունեն շուրջ 200000 բնակչություն կամ ափելի քան 36000 ընտանիքներ: Գազամուղի կառուցման աշխատանքները կավարտվեն այս տարվա աշնանը:

Արփա—Սևան գետնուղու կառուցումը.—Ինչպես հայտնի է, այս գետնուղին (թունելը) Հայաստանի խոշորագույն և կարևոր կառուցումներից մեկն է, որը հնարավորություն կտա Արփա գետի ջրերը ուղղել դեպի Սևան և պահպանել լճի ներկա մակերևույթը:

Գետնուղու ընդհանուր երկարությունը լինելու է 48 կմ: Մինչև օրս, այսինքն շուրջ երկու տարվա ընթացքում (1965—1966), փորված է 6140 մետր, որից 3854 մետրը քետոնապատված է: Նախորդ երկու տարիները (1963—1964) հիմնականում ծառայել են շինարարության նախապատրաստման համար՝ ճանապարհների, բամբուրական ավանների, դեպի գետնուղին տանող նախախորշերի կառուցում և այլն:

Մինչև հիմա գետնուղու փորումը կատարվում էր հինգ կիլոմետրից: 1967 թ. այդ կետերի կամ նախախորշերի թիվը կավելանա երեքով: Ուրեմն փորման աշխատանքները կկատարվեն ութ տարբեր կե-

տերից: Ծինարարները պարտավորվել են այս տարի փորել և քետոնապատել 6486 մետր գետնուղի:

Մխչյան գյուղի ջրհան կայանը.—Արտաշատի և Վեդու դաշտերն ու այգիները ոռոգելու համար տարեկան ծախսվում է 120 միլիոն խ/մ ջուր: Այդ ջուրը գալիս է Սևանից՝ Հրազդան գետով, և ապա Արտաշատի ջրանցքով:

Ինչպե՞ս անել, որ այդ ջուրը խնայվի, մնա Սևանում: Չէ՞ որ լճի մակերեսը իջնում է:

Այս խնդիրը լուծելու համար Հայաստանի ջրաշինարարները ձեռնամուխ են եղել մի շատ հետաքրքիր և խիստ կարևոր կառուցման՝ Մխչյան գյուղի ջրհան կայանի շինարարության:

Ջուրը վերցվելու է Հրազդան և Սևջուր գետներից: Հատուկ ջրանցքի միջոցով Սևջուրը միացվելու է Հրազդանին: Միացման կետում կառուցվելու է բարձր ամբարտակ, որով ջրի մակերևույթը բարձրանալու է 51 մետրով: Ջուրը հոսելու է դեպի ջրհան կայանը: Ծանապարհին, մինչև ջրհան կայանը, կառուցվելու է 22 կմ երկարությամբ ջրանցք, որով պիտի հոսի ջրի մի մասը՝ ոռոգելով շրջակա գյուղերի դաշտերն ու այգիները: Ջրի մյուս մասը, հասնելով Մխչյանի ջրհան կայանին, վեց հզոր մեքենաներով բարձրացվելու է 77 մետրով և թափվելու է Արտաշատի ներկա ջրանցքը, որով և ոռոգվելու է Արտաշատի և Վեդու շրջանների դաշտերն ու այգիները:

Արտաշատի ջրանցքով տարեկան հոսելու է 120 միլիոն խ/մ ջուր, այն տարբերությամբ միայն, որ այդ ջուրը վերցվելու է ոչ թե Սևանից, այլ Հրազդան և Սևջուր գետներից:



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Թուրքիո հայոց ամենապատիվ Ս. Շնորհի սրբազան պատրիարքին ուղղյալ Ս. Շահան և Ս. Խոսրով եպիսկոպոսների ձեռնադրության առթիվ	էջ 3
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը գեր. Ս. Գաբրիել եպս. Գազանյանին Հեղկաստանի և Հնոավոր Արևելի հայրապետական պատվիրակի փոխանորդ նշանակելու առթիվ	5
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Ոստրի հայոց Ս. Փրկիչ եկեղեցու յորանասունհինգամյակի առթիվ	7
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Փարիզի հայոց Աղֆատախեամ ընկերակցության յորանասունհինգամյակի առթիվ	9
Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրա-գույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և Նրավպիայի կայսր Նորին Վեհափառություն Հայր Սեկստիս Ա-ի միջև փոխանակված հեռագրերը	11
Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և Բույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	12
Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրա-գույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և Նվիրապետական Արտոների ու առաջնորդների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	23
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Միեմարների սովետի նախագահ Բաղալ Մուրադյանին Հայաստանում սովետական կարգերի հաստատման բառասունվեցերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը	26
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ամանոր և Սուրբ Մենդեղ	27
Խոհեր 1967 տարվա սեմին	29
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և Բարոզ հրաշափառ Մենդյան տոնի առթիվ Մայր Տաճարում	31
Եպիսկոպոսական ձեռնադրություն	35
Գեր. Ս. Շահան եպս. Սվանյան	38
Գեր. Ս. Խոսրով եպս. Էմիրզեյան	42
Գեր. Ս. Շահան և գեր. Ս. Խոսրով երապասկ եպիսկոպոսների ժամանումը Ստամբուլ	44
Ամանորը Հոգևոր ձեմարանի հարկի տակ	45
Պաշտոնական	49
Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆ— Բերդեհեմի այրի սուրբ մանկիկը	52
ՄԱՅՐ ԱՌՈՒՌ	54
Ողորում ս. Ղազար վանքում	55
Լուսեր Հեռավոր Արևելի ազգային-եկեղեցական կյանքից	58
Հայաստանի գրողների հիմնադրությունը	61
Մեծարանքի երեկո	63
Հանգիստ գեր. Ս. Վարդան արքեպս. Դասպարյանի	65
Վերապատվելի պրոֆ. Գրիգոր Խաչիկյանի մահը	67
Հանգիստ արժանապատիվ Ս. Իգնատիոս ավագ Բանան Բիլիմյանի	69
ՄԱՅՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՒՄ	71
	73

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՉՄԻԱԾԻՆ

«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.